

1232





$\frac{P}{1}$

Ф.И.Ч.



Гр

№ 1

РД
18813

ՀԱՄԱՍՏՕՏ ԳՈՐԾԱԿԱՆ



ՀԱԳԵԲՈՆԱԹԹԻՒՆ


ՀԱՅ ԱԽՍԱԿՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխատանիրեց

Ձեռագույն համար 1881 թվականի 8 դեկտեմբերի

Ա. Բահարբեկանց.

707



1882

Տ Փ Խ Ի Ս

Ի Տպարանի Մարկիանոսի Բօտինեանց և ընկ.

1232 62

Дозволено цензурою, 3 Декабря 1881 года.
г. Тифлисъ.

г. Тифлисъ.

983-2013



Санкт-Петербургъ, 1855 г. Апрѣль 10-го. Учредитель: А. П. МАРКОВЪ
Санкт-Петербургъ, 1855 г. Апрѣль 10-го. Учредитель: А. П. МАРКОВЪ

Büning und Lüdi.

• ပါမ်းမျှမျိုးများ

Իւրաքանչիւր ոք, որ իւր անձը նուիրում է բահկանց զաստիարակութեան, պիտի նախ և առաջ պարզ ըմբռնէ թէ ինչ է իւր գործողութեան նպատակը և ինչ ճանապարհով է կարող համեմել նորան. Նպատակի հետ մեզ ծանօթացնում է բարոյագիւռութիւնը, իսկ այն միջոցները, որոնցով մենք կարող ենք իրագործել այդ նպատակը, որոշում է մանկավարժութիւնը. Սակայն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ միջոցները պիտի համապատասխանեն մարդոյս քնութեան, այսինքն այն օրէնքներին, որոնցով զարգանում է մարդոյս հոգեոր կեանքը, վասն զի չէ որ հակառակ զիպուածում նոքա կարող են առաւել վնասակար, քան օգտակար լինել այդ զիտմամբ. Այդ օրէնքների վերայ ճառում է հոգեբանութիւնը, որ և այդ պատճառաւ կազմում է իւրաքանչիւր մանկավարժական պահանջմանց համապատասխանող ուսուցման հիմն, վասն զի քանի որ անձանօթ են մեզ սանիկի հոգեոր կենաց զարդացման օրէնքները, մենք չենք կարող նաև ոչ զիտակցարար վարուիլ դաստիարակութեան ժամանակ և ոչ ել պարզ ըմբռնել մանկավարժութեան պահանջմանց պատճառները.

Հոգեբանութեան այդ ծանրակշիռ նշանակութիւնը աչքի առաջ ունենալով, մենք՝ իրրե մանկավարժութեան ուսուցիչ Ներսիսեան Հայրց Հոգեորդ զպլոցին, անհրաժեշտ համարեցինք կաղմել մի ձեռնարկ, որ կարողանար լրացուցանել մեր արդի պահանջները. Այդ հիման վերայ և նիւթը բնորբելիս, մենք շատացանք միայն նորանուով, ինչ որ անհրաժեշտ է իրագանցիւր

ուսուցչի և հարկաւոր մանկավարժութեան տեսութիւնը ճշութեամբ ըմբռնելու համար:

Աւելորդ չենք համարում ասել, որ մեր այս ձեռնարկը աշխատասիրելիս, օգուտ ենք քաղել յետազայ, մանկավարժական աշխարհին լաւ ծանօթ անձանց հեղինակութիւններից, այն է Դրբախ, Շելլինգ, Ֆոլկման, Լինդոնէր ու Դրօբիչ:

1881 p.

Սիմֆելոպոլ:

Ա. Բահաթրեանց.

ՄԵՍՆ ԵԹԵԶԻՆ

Ա Տ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ե Բ
Գ Լ Ո Ւ Խ Ե Ա

**Թէ ինչպէս են յառաջ գալիս
մտապատկերները:**

一

զ Պ Ա Յ Ո Ւ Թ Յ Ի Ւ Ն Ե Ց

§ 1. Զգայարան. գրդիռ. զգայութիւն:

Գգայարան ասելով հասկանում ենք մարմնոյ այն
մասնը, որի միջնորդութեամբ մենք արտաքին աշխարհ
հիգ ստանում ենք որ և է զգայութիւն:

Գգայաբանները բազմիցս բաղդատուել են տան պատուհանների ու գուների հետ. ինչպէս որ սոցա միջով է լոյսը ներս թափանցում տունը, այնպէս և նոցա միջով է արտաքին աշխարհը հաղորդակցւում ներքին մարդոյ, այն է՝ հոգւոյ հետ:

**Առհասարակ որոշում են հիմք զգայաբան, այն է՝
տեսանելիք, լսելիք, չաշակելիք, հոտու-
թելիքութօշափելիք:**

Գգայարանների բաղկացուցիչ մասունքներն են. 1) այն արտաքին գործարանները, որոնք ընդունում են խրեանց մէջ զգայարանական գրգիռը, այն է՝ աչք, ականջ, կաշուի շօշափող մարմինները, լեզուի ելութ-

ները (գեղձերը) և քթածակների բջիջները. 2) զգաւայրանների ջղերը (սոցակարելի էր կոչել միշին գործարաններ), այն է՝ տեսանելեաց, լսելեաց, շօշափելեաց, ճաշակելեաց, հոտոտելեաց և ընդհանուր զգայարանի ջղերը. 3) ուղեղի այն մասները (սոցակարելի էր կոչել ներքին գործարաններ), որոնցից ծառառում են ջղերը, ուր համարումէ գրղիռը:

Ապայն այդ գործարանները ինքն ըստ ինքնան չեն կարող յառաջ կոչել զգայութիւն: Նոքա գործում են միայն զրգութելով արտաքին պատճառներից, որոնք և կոչում են զգայարանան ան գրդիռներ: Գլուգիռներ են բոլոր փիւղեքական պատահարներն ու բոլոր մարմինները (նիւթերը), երբ նոքա ներգործելով զգայարանական ջղերի արտաքին ծայրերի վերայ, զրգում են և դորանով պատճառ լինում զգայութեանց. զոքա են լոյս, ձայն, ջերմութիւն, մեքենապէս ներգործող (Ճնշող, հարկանող) մարմիններ և համ կամ հոտ ունեցող նիւթեր:

Այսպէս ահա իւրաքանչիւր զգայութիւն յառաջ է գալիս միայն մի շարք պատահարների միջնորդութեամբ. արտաքին պատճառները (գրգիռները) ներգործում են զգայարանների վերայ, դորանով սոցանից իւրաքանչիւրը զրգութելէ իւրեան յատուկ կերպով և այդ զրգութունքը տանում, հասուցանումէ մեր ուղեղին, որիցյետոյ և սկսում է գործել հոգին: Ուրեմն այս պատահարները կարելի է բաժանել երեք գլխաւոր մասնի: առաջինն է՝ փիւղիւքական քական ան (օդի շարժմունքը, ձայն, ծանրութիւն և այլն), երկրորդն է՝ բնական օսական (ջղերի զրգութունքը). և ՚ի վերջոյ երրորդն է՝ հոգեբանական (նոյն ինքն իսկ զգայութիւնը): Որովհետեւ երկրորդը ծառումէ առաջինը, իսկ երրորդը՝ երկրորդից, ուստի և գիտութեան մեջ

ասում են՝ թէ փիւղեքական պատահարը փոխւում է բնախօսականի, իսկ բնախօսականը՝ հոգեբանականի: Թէ ինչպէս է այս բոլորը կատարւում, դա անհասանելի է մարդոյս. բայց թէ կատարւում է, դա անկասկածելի իրողութիւն է:

§ 2. § Ե ս ա ն ե լ ի ք:

Ա.) Տեսանելեաց զգայութիւնք են գոյանում հոգւոյ մէջ, երբ արտաքին զրգիռները լոյսի միջնորդութեամբ ներգործում են տեսութեան ջղերի վերայ: Ցայտնի է, որ լուսաւոր կամ լուսաւորուած մարմնի իւրաքանչիւր կէտից մեծ արագութեամբ (24,000 մղոն մի վայկեանում) տարածւում են լուսոյ ճառագայթներ ամենայն ուղղութեամբ: Դորանից մի մասնը ընկնելով աչքի ուեռնի հարթ երեսին անցնում են նաև՝ եղջերեայ մորթի, յետոյ՝ ջրային հիւթի, բիբի, այնուհետեւ ոսպի, ՚ի վերջոյ ապակէնման մարմինների միջով և համարում աչքի ցանցակերպ պարուտակին: Սորանով վերջանումէ տեսանելեաց գործողութեան փիւղեքական մասնը: Բնախօսականը սկըսումէ ցանցակերպ պարուտակի վերայ, որ բովանդակում է իւր մէջ տեսութեան ջղերի ծայրերը, որոնք և ընդունակ են լոյսից զրգութելու: Եթերի ճօմնունքից յառաջ եկած զրգիռը նոցանից անցնումէ տեսութեան ջղին, որ և այդ զրգիռը տանում հասուցանումէ ուղեղին. այստեղ նա փոխում է մի հոգևոր գործողութեան, որ կոչում է զգայութիւն:

Բ.) Տեսանելեաց միջնորդութեամբ մենք անմիջապէս ըմբռնում ենք միայն լոյսը իւր զանազան գոյներով ու պայծառութեամբ: Այդ զգայութիւնները բացառապէս յատուկ են տեսանելեաց, այստեղ նա յերեան է գալիս իրեւանիկախ գործիչ. այստեղ նորան ոչ նպաստումէ և ոչ էլ

կարող է փոխարինել մի որ և է ուրիշ զգայարան։ Բացի դորանից աչքը ընդունում է, 'ի հարկէ միայն շցսի միջնորդութեամբ, նաև իրերի զանազան ձևերն ու կերպարանքները, բայց գլխաւորապէս միայն իրեւ մակարդագութեամբ ըմբռնելու։ միայն վարժութեանց ձեռքովն է նորա այդ ընդունակութիւնը այնքան զօրանում, որ մենք ի վերջոյ ուսանում ենք մեծ ճշտութեամբ գործ գնել մեր տեսանելքը։ Իրերի հեռաւորութիւնը, կերպարանքը, դրութիւնը, մեծութիւնը, ուղղութիւնը, անշարժութիւնն ու շարժումը մենք չենք տեսնում անմիջապէս, այլ միայն անուղղակի կերպով ենք դատում ու գնահատում։ Դա ապացուցանում են մեզ կոյր ծնուած, իսկ յետոյ բժշկուած երեխաները։ Դոյցանից մէկը, երբ առաջին անգամ աչքերը բացուեցան, այնքան չէր կարողանում անջատել հ և ու աւորութիւնը, որ նա կարծում էր թէ իւրեան երեցող առարկաները դպչում են իւրեան աչքին։ Նա սկզբից չէր իմանում, թէ նոքա ինչ ձեւ ու կերպ առանք ունին։ նա չէր կարողանում մինչեւ անգամ մէկի ձեւ միւսից անջատել։ Թէ և նա իմանում էր, որ այն մենակը, որի մէջ նա գտնուում էր, կազմում է ամբողջ տան միայն մի մասնը, այսուամենայնիւ սկզբից նա անշարող էր նկատել որ տունը առաւել մեծ է, քան մենակը։ Երկար ժամանակ բոլոր առարկաները նորան երեւում էին անհամեմատ մեծ, քան այն ստաւոր պատկերները, որոնք նա կազմել էր նոյցանից շօշափելեաց միջնորդութեամբ։ Նորածին երեխաների հետ կարող է պատահել նոյնը, ինչ որ կոյրերի հետ, որից և պարզ երեւում է, որ տեսնելը այն է՝ տարածութեան մէջ առարկաների որոշ շեալ ձևի, մէծութեան ու հեռաւորութեան, այլ նաև

փոխադարձ դրութեան ըմբռնելը երեխայի մէջ ինքն ըստ ինքեան չի գոյանում, այլ այստեղ տեսանելեաց գործակից են լինում և ուրիշ զգայարաններ ու իրազութիւններ, որ մենք ներքեւ ցոյց կր տանք։ Սակայն միանգամ կատարելազործութեան համալով, այնուհեաւ տեսանելերը այս ասպարիզի վերայ գործում է մի այնպիսի ինքնիշխանութեամբ ու ճարտարութեամբ, որ կարծես թէ դա բոլորովին իւր սեպհականութիւնը լինէր։ Աչքը անշատում է և խիստ որոշեալ կերպով ըմբռնում մինչեւ անգամ բնական զօրութիւններն ու բնական օրէնքները որոնք, ինքն ըստ ինքեան լինելով բոլորովին անմատչելի տեսանելեաց, յառաջ են բերում միայն տեսանելի երևոյթներ։ Այսուհետեւ մենք չենք կարող տեսնել ծանրութիւնը, տաքութիւնը, մագնիտականութիւնը և այլն, սակայն մենք տեսնում ենք մարմինների անկումը, ճօճանակի ճօճուկը, աղբիւրի հոսուիլը, ջերմաչափի ու ծանրաչափի բարձրանալն ու ընկնելը, ջերմութեան միջնորդութեամբ մարմինների լայնանալը, մագնիտի երկաթը դէպի իւրեան ձգելը և այլն և այլն։ Մենք չենք կարող տեսնել այն, ինչոր անդում է մարդոյս հոգւոյ մէջ, ինչ որ նա մտածում է, զգում է կամ ցանկանում բայց մենք կարող ենք տեսնել նորա դէմքը, շարժողութիւնքն ու վարժունքը և այս արտաքին երեցիթներից մակարերել հոգւոյ դրութիւնը։

Ուրեմն տեսանելեաց գործողութեան ասպարէզը շատ լայն ու ընդարձակ է և նորա զգայութիւնները շատ բազմատեսակ են։ Այս միւնոյնը զրօշմեում է և լիզուի մէջ։ Շատ բազմաթիւ են այն բառերը, որոնք նշանակում են մի որ և է անսանելի բան, օր. առարկաներ, յատկութիւններ, յարաբերութիւններ, գործողութիւններ և տեսանելի անցքեր։ Բացի դորանից տեսանելեաց ըմբռնածը

առաւել պարզ է և հոգւոյ մէջ առաւել յարատե ու մնացական, քան թէ բոլոր միւս զգայարաններինը։ Այս պատճառաւ և մենք նորան առաւել ենք հաւատում։ Ալչքովդ չտեսած, մի հաւատարաց։ Այժմ պարզ է, որ տեսանելիքը մեր՝ թէ գիտնական և թէ գործական ծառ նօթութեանց գլխաւորագոյն աղքիւրն է։

Գ). Թուէ տեսանելիքը, ինչպէս տեսանք, զլիաւուրապէս ծառայում է խոհականութեան (խելքին), այսուամենայնիւ հարկաւոր չէ մոռանալ, որ նա ազնուաց նում է և մեր բարքը՝ ըմբոնելով բնութեան ու արուեստի մէջ եղած գեղեցիկը։ Այս, գոյները ամեն մարդոյ վերայ մի և նոյն ազդեցութիւնը չեն գործում, սակայն անժխտելի է նոցա՝ մեր բարուց վերայ ունեցած ազդեցութիւնը։ Այդ պատճառաւ և նորա արուեստների; Նամանաւանդ նկարութեան զլիաւոր տարրերն են։ Եւ որովհետեւ նկարչութեան միւս տարրերը, այն է՝ լուսաւորութեան աստիճանը, ձեն ու առ միմեանս ունեցած յարաբերութիւնքը նոյնպէս տեսանելի են, ուստի և նորա (որպէս և ճարտարապետութեան ու միւս պատկերագրական արուեստների) գեղեցկութեան ազդեցութիւնը ստանում ենք միայն և եթ մեր աչքի միջնորդութեամբ։ Այսպէս նաև աչքերին են մատշելի աստեղազարդ երկնքի, ծիածանի, արշալուսի շքեղութիւնն ու սերծութիւնը, ծաղկազարդ մարդագետնի հրապուրանքը և այլն և այլն։ Ուստի և աչքերի կորուստը, այն է՝ կուրութիւնը ոչ թէ միայն մի մեծ մոռաւոր ու գործական գժբախտութիւն է մարդոյս համար, այլ նաև մի անիծ մարդոյս սրտի մէջ։ Շիլերն ասումէ. «Ո՛չ, մի ազնիւ երկնային տուրք է աչքի լոյսը։ Բոլոր էակները, իւրաքանչիւր բախտաւոր արարած ապրումէ լուսով։ Բոյսն անգամ ուրախ ուրախ դառնումէ դէպի լոյսը։ Եւ նա (Վիլհելմ Տէլը) պիտի

մնայ զուրկ լուսից, յաւիտենական խաւարի մէջ։ Նորան այլ ևս չպիտի զուարթացնեն կանաչազարդ մարդերն ու գոյնզգոյն ծաղիկները—նա այլ ևս չպիտի տեսնէ կարմրագոյն գինիները։ Մեռնելը ոչինչ, բայց ապրել և չտեսնել, դա մի գժբախտութիւն է ևս ունիմ երկու առողջ աչք, բայց աւանդ, նոցանից ոչ մէկը չեմ կարող տալ նորան, ոչ մի նշոյլ անգամ այն լոյսի ծովից, որ փողփողալով ներս է թափանցում իմ աչքերիս մէջ։

§ 3. Լ և Ե Լ ի ք։

Ա). Լսելեաց յասուկ գրգիւներն են ձայնի ծօձմունքը։ Դոքա ականջի մէջ յետազայ ճանապարհովս են յառաջ գնում։ Ականջի խեցեմարթը ընդունելով այդ ծօձմունքը իւր մէջ՝ տանումէ մացնում լսելեաց արտաքին անցքը, ուր նոքա ծօձում են թմբուկի թաղանթը, որը միջին ականջը բաժանումէ արտաքին անցքից։ Թըմբուկի թաղանթից ծօձմունքը անցնում է լսելեաց ոսկերին՝ (մուրՃ՝, սալ ասպանդակ)։ Լսելեաց վերջին ոսկորը շարժումէ լարիւրինթոսի (ներքին ականջի) ջուրը, իսկ այստեղ յառաջ եկած ալիքները գալում են լսելեաց ջղին, որ կաշւոյ ձեռվ տարածուած է լարիւրինթոսի մէջ։ Դորանով վերջանում է լսելեաց գործողութեան փիւզիքական մասնը, որ փոխումէ բնախօսականի լսելեաց ջղի ծայրերում։ Այսուհետեւ լսելեաց ջղը այդ շարժողութիւնը տանում է ուղեղը, ուր և ըմբոնուում է հոգուց, այսինքն գառնուումէ մի ձայնի զգայութիւն։ Ականջի գործածութիւնը առաւել քիւ է կախու-

ած մեր կամքից, քան թէ աչքինը: ԱԵՆՔ ՀԵՆՔ կարող մեր ականջը լստ կամաց ու զղել կամ դարձնել դէպի ուր որ ուզում ենք, ոչ էլ բանալ կամ փակիլ: Ա. մեն կողմից ձայնի ալեքները թափանցում են նորա մէջ չըշ հարցնելով մեզնից, թէ արգեօք նոքա խանգարնում են մեր մոքի ընթացքը, թէ նպաստում են նորան. մեր կամքին հաճել են, թէ հակառակ:

Բ). Բայց որ ականջը նոյնպէս արտադրում է բազմատեսակ զդայութիւնք, գտ ապացուցանում են մեզ զանազան ձայներ արտայայտող բառերը, ինչպէս են օր. ձայն, բարբառ, դաշնակ, թնդիւն, շաշիւն, հնչիւն, աղաղակ, աղմուկ, շառաչիւն, դղրդիւն, ձայթիւն, շոխնդ, շշուկ, ժխոր, սօսաւիւն, շշիւն, խօշիւն, և այլն և այլն, աղաղակել հծծել շշնջել մրմնջել խոխոջել կարկաչել, մումուալ խարշակել մռնչել, բչել բառաչել գոչել, ճչել շաչել դղրդել փրթկալ որոտալ, ձայթել, կրճել ձարձատել, կռնչել հնչել դռնչել, ծփել մայել բզզել և այլն: Թէ այդ բառերից շատերի նշանակութիւնը իսկապէս որոշել չե կարելի, սակայն անտարակուսելի է, որ դոցանից ամեն մէկը ունի իւր յատուկ նշանակութիւնը և որ ականջը նոյնպէս մի շատ նուրբ զգայարան է:

Գ). ԱԵՆՔ ի սկրզբան չենք զգում թէ ձայն հաշնողը ինչ առարկայ է, թէ այդ առական որտեղ է գրտնուում և թէ ինչ հեռաւորութիւնից և ինչ ուղղութեամբ է ձայնը համում մեր ականջն: Ախայն բազմապատիկ փորձն է մեզ ուսուցանում մի դատողութիւն կազմել դոցա վերայ: Աւ որշափ հարուստ ու որոշեալ լինին այդ փորձերը, այնքան էլ լաւ կուսանենք օգուտ քաղել մեր ականջից: Այդ ժամանակն ենք կարող միայն ձայների զանազան պատճառները գուշակել և ըմբռնել, որ իբրև թնդանօթի թնդիւն, իբրև ջրի խոխոջիւն, քամու մը-

որնչիւն, արտոյտի ծլւըլոց, տերեների սօսաւիւն, մարդոյ ձայն, նրգ և այլն. բժիշկը թոքերի զործարանների հանած ձայնից անգամ կարողանում է որոշել նոցա դրութիւնը. մենք կարողանում ենք որոշել անձրեի հեռաւորութիւնը հորի խորութիւնը. ուղղութիւնը որոշում ենք նայելով այն դրութեան, որ մենք լինդունում ենք ձայնը առաւել պարզ ու որոշակի լսելու համար. կյորը փախուստ է տաշիս նորա վերայ արշաւող կառքից և այլն: Ժամանակի մտապատկերը մենք առաւել ձշութեամբ ենք կազմում լսելեաց միջնորդութեամբ, քան թէ բոլոր միւս զգայարանների: Լսելիքը մեզ միջնորդում է նաև թւերի մտապատկերներ, որին մեզ իբրև ապացոյց կարող են ծառաւյել զանգակաւար ժամացոյցները:

Դ). Ախայն ականջը առաւել մեծ կշիռ ունի լեռ զուի վերաբերութեամբ: Թէ և մենք կարող ենք մեր միտքը, զգացմունքն ու ցանկութիւնը արտայայտել նաև տեսանելի կերպով օր. զանազան շարժողութիւններով, դէմքով, սակայն դա այնքան լայնատարած տեղ չէ կարող բռնել որչափ լեզուն: Լեզուի համեմատաբար սակաւաթիւ տարրերը (ձայները, հնչիւնները) միմեանցից որոշակի կերպով անջատում են, նոքա ընդունակ են բազմատեսակ կերպով կապակցուիլ միմեանց հետ և մեր հոգ գույ մէջ եղած անթիւ պատահարների ու պատկերների համար կազմել առանձին բառեր. լսելիքը այնքան զօրաւոր է նաև, որ կարող է պինդ ունել ու պահանջ բիւրաւոր բառերի գանձ: Ամանապէս լսելիքը մէծ արագութեամբ ըմբռնելով ձայների բազմութիւնն ու նոցա համապատասխանութ ազդեցութիւնը, հեշտացնում է մարդկանց միմեանց հասկանալը: Այստեղ հարակաւոր չէ մոռանալ և այն նպաստամատոց հանգամանքը որ մենք լսում ենք ամեն կողմից և առանց մեր

մատրութեան մասնակցութեան: Սակայն լեզուն անկարող է արդիւնաբերել կամ գոնէ փոխարինել մեր բոլոր մատաւոր զարգացման տարրերը, այն է՝ տպաւորութիւնքն ու զգայութիւնքը ով որ ոչինչ զգայութիւն, դիտու զութիւն չունի, նորա համար լեզուն մի անիմաստ ձայն է: Ընդհակառակին լեզուն մեր բոլոր հոգեոր կենաց կատարեալ արտայայտութիւնն է սկսած ամենապարզնկարագրութիւններից ու վէպերից մինչև բարձրագոյն զարգացման հասած մողի արդիւնքը: Նոյն իսկ այդ պատճառաւ նա է, որ կրում է իւր վերայ ըսդհանուր մարդկային մտաւոր գանձը և որ աւանդում է ազգից ազգ, ցեղից ցեղ, սերնդից սերունդ ամեն մտաւոր մշակութիւն:

Ե). Սակայն ականջը չէ միայն գիտութեանց զգայարան, այլ նա ունի ներգործութիւն նաև մեր բարուց ու կամքի վերայ: Խօսքը ինչ ինչ ազդեցութիւններ չեռնեցել մարդոյս սրտի վերայ: Խօսքի միջնորդութեամբ քանի սպարապետներ, քաղաքագէտներ, կրօնի հիմնագիրներ, ազգասերներ ու մարդկութեան բարեգործներ, բայց և քանի քանի մոլենախանձ չարագործներ, խռովարարներ, մոլորիչներ, ինքնասերներ ու կեղծաւորներ չեն եղել, որոնք խլել տարելեն իւրեանց հետ բազմաթիւ ժողովուրդ: Լայր, որով խօսում են մեզ հետ ցաւն ու թշուառութիւնը, առաւել հեշտութեամբ է շարժում մեր գութը, քան թէ նոյն իսկ թշուառութեան տեսքը: Լանջը ամեն զգայարաններից առաւել մեծ ներգործութիւն ունի մեր բարուց, զգայցմանց ու համակրութեան վերայ:

Բնութիւնը նոյնպէս ունի իւր լեզուն, որ մեր սիրատը լքցնում է բարձր ու գեղեցիկ զգայցմունքներով: ամպի որոտմունքը, ծովի մանչեւնը, անտառի սօսաւիւնը, թռչունների երգը մենք լուղունում ենք ոչ առանց մեր

զգացմանց կենդանի մասնակցութեան:

Մեր բարուց ու լսելեաց մէջ եղած ներքին կապի վերայ է հիմնում նաև երաժշտութեան զօրութիւնն ու կախարդանքը: Նորա տարրերը միանալով ՚ի մի կարողանում են արտայատել մարդոյս սրտի հաղարաւոր զգացմունքը, ուստի և երաժշտութեան իւրաքանչիւր ձայնը իւրեան հաւատարիմ արձագանք է գտնում զգայցմանց մէջ: Եթէ տեսանելքը առաւել նշանաւոր է հանդիսանում լսելեաց առաջ իւր պարզութեամբ, լսելքը գերազանցում է իւր սրտագին ու գորովալից զգացմունքներով:

§ 4. Շաշակելիք:

Լեզուի կաշուի վերայ գանում են բազմաթիւ մարդներ, որոնք կոչում են լեզուի կամ Ճաշակելեաց ելունդն: Բայց գեռ ևս պարզ յայտնի չէ, թէ ինչ տեղ է բանում Ճաշակելեաց արտաքին գործարանը, արդեօք նա տարածում է միայն լեզուի արմատի վերայ, թէ՞ նոյնպէս և նորա ծայրի ու կողերի և գուցէ նաև քիմքերի վերայ: Բոլորովին անյայտ են նմանապէս Ճաշակելեաց յատուկ գրգիռները: Ոէկ մենք գիտենք, որ զանազան նիւթեր մեր Ճաշակելեաց մէջ զանազան զգայութիւններ են յառաջ կոչում, բայց թէ ինչի՞ մէջ են կայանում այդ նիւթերի համ ունեցող յատկութիւնները, մեզ բոլորովին անյայտ է: Այս է միայն յայտնի, որ միայն լոյժմարմիններն են համ տալիս, իսկ կարծր մարմինները միայն այն ժամանակ, երբ նորա լուծւում են մեր բերանի լորձիւնի մէջ: Ճաշակելեաց ջղերի ծայրերը՝ գրգռուելով մի որ և է արտաքին պատճառից, հասուցանում են այդ զըրագիւը ուղեղին, ուր որ նորա առաջ են կոչում համապատասխանող զգայութիւն: Մենք անջատում ենք նա

մանաւ անդ քաղցր, թթու, դառն, տոմիպ, աղկաղեան ու
աղի համերը: Սակայն զիտութիւնը չի կարողանում այդ
զգայութիւնը ճշտութեամբ որոշել. նոքա կան և են
միայն իրականապէս: Այնոք մինչեւ անգամ շատ քիչ
համ ցոյց տուող բառեր ունինք, ուստի և ստիպուած
ենք յաճախ մեր միտքը արտայայտել անուանելով այն
նիւթերը, որոնք պատճառում են այդ համերը. «աա այս
ինչ բանի համն ունի»: — Ինչ որ նորա նշանակութեանն է
վերաբերում, ամենից առաջ այս պիտի աչքի առաջ ու
նենանք, որ նա սերտ կապուած է կերակրեղենների հետ,
և մեղ միայն բազմապատիկ փորձերից յետոյ է աեղեկու-
թիւն և խրատ տալիս՝ թէ որ կերակուրը կամ որ խմիչքն է
վնասակար և որը օդտաւէտ: Իւր առ հոգեւոր կեանքն ու
նեցած ներքին յարաբերութիւնը տեսնուում է նորանից,
որ մի քանի առարկայ շփուելով ձաշակելեաց հետ մեր
մէջ յարուցանում են զզուանք ու փսխումն, կամ թէ
գրգռելով մեր ջղերը՝ հաճելի զգայութիւններ են արթ-
նացնում մեր մէջ (համեմք, ծխախոտ և այն): Ձաշա-
կելեր աննշան ծառայութիւն չէ անում նաև զիտու-
թեան, օդնելով մեղ որոշել զանազան մարմինների բնաւ-
լուծական յատկութիւնները (թթուատներ, աղկաղեներ,
աղեր և այն): Գործական կէտից նայելով նա մեծ ծա-
ռայութիւն է անում նաև կերակուրներ ու խմիչքներ
պատրաստելիս կամ ստուգելիս:

§ 5. Ա Մ Ո Մ Ե Լ Ի Ք:

Ինչպէս որ ձաշակելիքն է զետեղում բերանի մէջ,
այնպէս և հոտոտելիքն է տարածւում քթածակերի մէջ:
Նոցա ամենավերին մասներում գտնուում են հոտոտելեաց
ջղերի ծայրերը, իսկ սոցա վերայ կոնաձե մարմիններ, ո-
րոնք նշանակուած են հոտի գրգիւնները ընդունելու հա-

մար: Դորա գրգռուում են միայն զանազան մարմիններից.
Կարծը ու հոսանուու մարմիններից, միայն այն ժամանակ,
երբ նոքա իւրեանցից օդի մէջ տարածում են նուրբ փո-
շիանման մասնիկներ: թէ նիւթի հոտաւէտութիւնը ինչից
է կախուած, դա մեղ անցայտ է: — Հոտոտելեաց որոշող
կամ ձանիաչող զօրութիւնը առաւել թոյլ է, քան ձա-
շակելիքներ: Առաջնի զգայութիւնքը այնքան մութն են,
որ մենք չունինք ոչ մի առանձին բառ առարկայի հոտը
արտայայտելու համար. մենք հոտը անուանում ենք մա-
սմար այն բառերով, որոնք յայտնում են միևնուն ժամա-
նակը և նոցա համապատասխանող համը, մասմար էլ
այն նիւթերի անունով որոնցից սուանում ենք հոտը: Հե-
տաքրքրելի է նաև, որ հոտոտելիքը վայելութիւն քա-
շելու մէջ յետ է կանգնած ոչ թէ միայն բարձր զգայա-
րաններից, այլ նաև ձաշակելիքից: Աչքը մի պատկերների,
ականջը մի երաժշառութեան սրահի մէջ ի՞նչ ի՞նչ զգաց-
մունքներով չեն լրցնուում: Ձաշակելիքը նոյնպէս պահան-
ջուում է իւրեան համար մեծամեծ վայելութիւնք: Հա-
զարաւոր ձեռներ գործի են, աշխարհ, ծով ու գետ չի
մնում որ չխուզարկեն, միայն որպէս զի ձաշակելեաց հա-
ճոյքներին գոհութիւն տան և նուրբ ձաշակ ունեցողների
համար համեմներ պատրաստեն: Հոտոտելիքը ընդհակա-
ռակն առաւել համեստէ. նա չզիտէ կանոնաւոր վայել-
չութիւն և շուտով յագենուում է: Նորա ըմբանած զգա-
յութիւնքը առաւել անորոշեն, մութ ու վայրիկերոյ, ուս-
տի և այնքան էլ ընդունակ չեն առաւել զարգանալու ու
կանոնաւորուելու: Այսուամենայնիւ հոտոտելիքը շատ
ծանրակշեռ է փիւզեթական կեաների համար, նա մանա-
ւանդ երբ մենք նորա միջնորդութեամբ փորձում ենք այն
օդը, որ ներս ենք շնչում: Նա շատ անգամ գործում է ձա-
շակելեաց հետ միասին, նա կերակուրների ու խմիչքների

վերայ վճիռ է հատանումնոցա արձակած հոտովը: Ուստի և գործական կեանքի և բնալուծութեան մէջ նա մեզ միւնոյն ծառայութիւնն է անում, ինչ որ և ձաշակելիքը: Զօրեղ հոտերը հեշտութեամբ հոտուելիքից անցնում են ուրիշ նեարդերի և պատճառում զգուանք, գարշանք, թմրութիւն, շացումն և ուշաժափութիւն, բայց նոքա կարող են ունենալ նաև կազդուրիչ ազդեցութիւն:

§ 6. Ծօշափելիք և ընդհանուր զգայութիւնը:

Ա.) Բոլոր վերոյիշեալ զգայարանները մեր մարմնոյ մէջ ունին իւրեանց որոշեալ տեղը. նոքա զետեզուած են յայտնի գործարանների մէջ—տեսանելիքը՝ միայն աչքի մէջ, լսելիքը՝ միայն ականչի, ձաշակելիքը՝ միայն բերանի, հոտուելիքը՝ միայն քթի մէջ, սակայն այդ չե կարելե ասել շօշափելեաց վերաբերութեամբ: Բոլոր մարմնոյ, նա մանաւանդ մորթոյ ու մաղասաւոր թաղանթների մէջ տարածուած են այնպիսի նեարդեր, որոնք գրգռուում են ոչ լուսով ու ձայնով և ոչ էլ ձաշակելեաց ու հոտուաեց զրգիւններով, այլ բոլորովին մի ուրիշ կերպով: Նոքա արտադրում են շատ զանազան զգայութիւններ, օր ձնշումն, ծանրութիւն, ջերմութիւն, յրտութիւն, յաւ, քաղց, ծարաւ, խոնջութիւն, բարեկեցութիւն և այլն: Այստեղ յառաջ բերած զգայութիւններից պարզ տեսնում ենք, որ նոքա ոչ թէ միայն բռնում են մեծ տարածութիւն մեր մարմնոյ մէջ, այլ և որ նոքա նշանաւոր են նաև իւրեանց բազմատեսակութեամբ: Բայց շատ դժուար է այս զգայութիւնները որոշեալ խմբերի բաժանել և նոցա միմեանցից ձշութեամբ անջատել: Գիտութիւնը նոյնպէս չէ հասել այդ կողմից մի որոշեալ հայե-

ցակէտի: Ճշտութեամբ չեն քննուած դեռ ևս նա մանաւանդ զգայական ջղերի ծայրերը, մի կողմից մենք չենք իւմանում, թէ արդեօք բոլոր ջղերն ունին իւրեանց ծայրին գործարան, թէ նոքա մասամբ զուրկ են դրցանից. միւս կողմից մեզ պարզ յայտնի չէ, թէ ինչ պաշտօն են կատարում այդ ջղերի ծայրերի գործարանները:

Բ.) Այդ բոլոր զգայութիւններից ամենանշանաւորն են ձնշման զգայութիւնը, որոնք յատուկ են շօշափելեաց և յառաջ են գալիս, երբ մեր սեպհական մարմինն ու մի որ և է ուրիշ մարմին միմեանց շօշափում են գորանով յառաջ է գալիս երկոցունց մէջ մի մեքենական ընդդիմազրութիւն. այդ օրինակ զգայութիւնը են օր. ամուր, հոսանուտ, օդային, կարծր, կակուզ, կոսպիտ, բիրտ, սուր, բութ և այլն զգայութիւնքն: Մարմինների ծանրութիւնն ու կերպարանքը չեն յառաջ գալիս միայն շօշափելեաց միջնորդութեամբ, այլ նորան գործակցում են նաև ուրիշ զգայական ջղեր. իւրաքանչեւր անգամ, երբ մենք մի բան ենք ձնշում, որպէս նաև բարձրացնում, տանում, ձգում, մարմնոյ հարթ երեսով մեր ձեռը այս կողմ ու այն կողմ տանում բերում, շրիշ ցրփում, ոչ թէ միայն գրգռուում են մեր շօշափելեաց ջղերը, այլ յառաջ է գալիս նաև մկանունների զգացմունք: Այսուամենայնիւ շօշափելիքը, որի ջղերը տարածւում են մինչև մարմնոյ մորթը, իւր գրգիւնները սուանում է ոչ թէ մեր սեպհական մարմնուց, ինչպէս են ընդհանուր զգացմունքները, այլ արտաքուստ, ինչպէս և վերև յիշուած զգայարանները: Ծօշափելիքը այն զգայարանն է, որով գլխաւորապէս մենք որոշում ենք, ծանաչում մարմինները, նոցա ծաւալն ու նոցա թիւը. նա մեզ ամեն զգայարաններից առաւել համոզեցուցիչ կերպով է ապացուցանում մի որ և է նիւթական իրի ներկայութիւնը:

Նա ամենից շատ ազգակից է տեսանելեաց, այնպէս որ նուրան կարելի էր կոչել անմիջական կամ շփող տեսանելիք: Այսի և գոյնի համար ի հարկէ շօշափելիքը չունի ոչնիք զգայութիւն, սակայն մարմնաւոր իրերը նա առաջ են ձշոռթեամբ է լրմռնում, քան տեսանելիքը:

Գ). Օդի բարեխառնութեան զգայութիւնը, այն է կաշուի զգայութեան միջնորդութեամբ օդի կամ ուրիշ մարմնների ջերմութեան աստիճանի զգալու ընդունակութիւնը նշանաւոր է առաւել մարդոյս մարմնաւոր առողջութեան, քան հոգեւոր զարգացման համար: Ջերմութեան աստիճանի զգայութիւնքը արտայայտում են յետադայ բառերով՝ տաք, եղկ (գաղջ), զով (հով), ցուրտ: Ըստ մեծի մասին նոքա յառաջ են կոչում նոյնպէս արտաքին գրգիռների միջնորդութեամբ, բայց յաճախ նաև մեր սեպհական մարմնոյ գրութեամբ (ջերմ; տեսդ):

Դ). Խնչոր ի վերջոյ վերաբերում է ընդհանուր զգայութեանց (որոնք միասին կոչում են նաև կենսական զգայարան) այս պիտի ասենք, որ նոցա վերագրում ենք այն բոլոր զգայութիւնները, որոնք յառաջ են կոչում մեր սեպհական մարմնոյ մէջ տեղի ունեցած պատահաներով և այնօրինակ ջղերի միջնորդութեամբ, որոնք վերջանում են ոչ թէ կաշուի, այլ մարմնոյ ներքին մասների մէջ: Այդպէս են ահա քաղցի, ծարաւի, առողջութեանդ, դադրած ու թարմ լինելու զգայութիւնքը, նա մանաւանդ ամեն տեսակ ցաւեր: Ծնդհանուր զգայութեանց միջնորդութեամբ մենք անմիջապէս գիտակցում ենք մեր սեպհական մարմնոյ դոյութիւնը, որպէս և սորա առողջ ու վատառողջ գրութիւնը: Ուստի և ընդհանուր զգայութիւնները իսկապէս կազմում են մի կենսական զգայարան, վասն զի նոքա բոլորովին անմիջապէս և ամենապարզ կերպով՝ ի գիտակցութիւն են ածում մեր

մարմնոյ առողջ ու հիւանդ գրութիւնը, մեզ ուսուցանում են, թէ ի՞նչն է օգտաւէտ, ի՞նչը վնասակար և այդպէս յորդորում են մեզ վարել առաւել խելացի կեանք:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

Մ տ ա պ ա տ կ ե ր / ի ո խ ա դ ա ր ձ յարաբերութիւններ:

§ 7. Մ տ ա պ ա տ կ ե ր:

183-293

Մինչև հիմայ մենք խօսում էինք այն պայմանների վերայ, որոնք կարելի են կացուցանում մի որևէ զգայութեան ծագումը. այժմ մենք պիտի խօսենք այն պայմանների վերայ, որոնց միջնորդութեամբ հոգւց մէջ գոյացած զգայութիւնները միմեանց հետ կապակցուելով կազմում են այն, ինչ որ մենք կոչում ենք հոգեսր կեանք:

Յայտնի իրազութիւն է, որ մենք զգայութիւններ ենք ունենում ոչ թէ միայն այն բոպէին, երբ մի որ և է գրգիռ ներգործումէ մեր վերայ և սպածառ լինում մի զգայութեան, այլ և որ զգայութիւնները, մինչև անգամ եթէ զրգիռը բացակայ է և այլ ևս չի ներգործում ջղերի վերայ, շատ անգամ առ ժամանակ մի ևս մնում են մեր գիտակցութեան մէջ, մինչև որ փոքր առփոքր աղօտանալով՝ ի վերջոյ բոլորովին անհետանում են գիտակցութիւնից: Այսուամենայնիւ զրգիռը և զգայութիւնը անցնելուց յետոյ մեր հոգւց մէջ նոցանից մնում է մի մտաւոր կամ յիշողութեան պատկեր, որ և մենք կոչում ենք մտապատկեր:



Այն հանգամանքը, որ մտապատկերը չունի այն ջղային գրգիռը, որ պատճառ է լինում զգայութեան, հեշտացնումէ նաև մտապատկերի և նորա հիմն ծառաշող զգայութեան միմեանցից անջատելը:

Ուստի և մտապատկերները զանազանում են զգայութիւններից 1) իւրեանց ոյժով, վասն զի՞նոքա առ հասարակ յերեան են գալիս առաւել աղօտ, դժոյն, քան թէ զգայութիւնները, և 2) նորանով, որ նոցագիտակցութեան մէջ մանելու շարժառիթը, անկ ախէ արտաքին գրգիռից: Այսպէս օրինակ իւրաքանչիւր որ գիտէ, որ մի որ և է իր այն ժամանակն է շատիւրի և բոլորովին պարզ հանդիսանում մեր առաջ, երբ մենք նորան տեսնում ենք մեր աչքերով ու շօշափում մեր ձեռներով, քան թէ երբ մեր առաջ ներկաշյանումէ նորա լոկ յիշողութեան պատկերը: Ամենասատիկ ցաւի մտապատկերը չունի իսկական ցաւի ամենաշընչին զօրութիւնը. մի որ և է երաժշտութեան մտապատկեր, որչափ որ էլ սա ձշութեամբ ըմբռնած չլինի նորա ներդաշնակութիւնը, այսուամենայնիւ զուրկ է ձայնից, քաղաքի, տեղի մտապատկերը դժոյն է ու մառախլապատ: Զայնը լուեց, լոյսը անցաւ թէ չէ զգայութիւնը փոխում է ձայնների ու գոյնների մի անձայն ու անլոյս մտապատկերի: — Ինչոր վերաբերում է երկրորդ կէտին, այս պիտի ասենք, որ շատ անգամ մտապատկերները իւրեանց յատուկ զօրութեամբ, առանց արտաքին գրգիռի օգնութեան, յերեան են գալիս մեր գիտակցութեան մէջ: Այսպէս ահա մեր ամբողջ օրուան գործերը պատկերանում են մեր առաջ, հենց որ արթնանում ենք քնից:

Ուստի և մտապատկերը առ ակտով հասկաւ նում ենք այն, որ՝ զգայութիւն պատճառ առ զգայութեան գրգիռի ան հետան առ ակտով հայն կարող է անհան երեալ իրեւ մի անբաժան ամբողջութիւն, այսպէս նաև երգեցիկ խումբի երգը, սենեակը իւր մէջ ու նեցած զանազան իրերով և այլն: Այս իրողութիւնը աչքի առաջ ունենալով կարող ենք ասել, որ մոյն աժա

մնում է մեր հոգւոյ մէջ: Արիստոտելէսն ասումէ, մտապատկերները անհիւթ զգայութիւններ են:

§ 8. Գիտակցութեան միութիւն, գիտակցութեան անձկութիւն:

Եթէ բազմաթիւ ու զանազան արտաքին գրգիռներ նոյն աժամանակ (կամ շուտով մէկ միւս սիւծից) ներգործելու լինեն մի՛ կամ մի քանի զգայարանների վերայ, այն ժամանակը՝ նոյնաժամանակ (կամ համարեա թէ նոյնաժամանակ) յառաջ կը գան բամաթիւ ու զանազան հոգեկան դրութիւններ, որնք կարող են լինել մասամբ զգայութիւններ, մասամբ էլ մտապատկերներ: Սակայն դոցանից ամեն մէկը գիտակցութեան մէջ չի ներկայանում միւսից անջատ, և չէ մի որ և է գիտակցած առանձին իր, այլ նոքա գիտակցում են բոլորը միասին ու անբաժան—նոքա կազմում են միայն մի գիտակցութիւն: Հոգւոյ միութիւնն ու պարզութիւնը, բաւականաշափ բացատրումէ այդ վասն զի՞ն բոլոր մտապատկերների մէջ հոգին է միայն գործողը, նա է բոլորեցունց միաւորողը: Ուստի և երեխան սկզբումը բոլոր նոյնաժամանակ ստացած զգայութիւններն ու մտապատկերները ըմբռնումէ իրեւ մի անբաժան ամբողջութիւն, որ և զանազան մասների է բաժանում մանկան և նոյն իսկ իրերի շարժողութիւնից: Այսպէս օր. սկզբումը՝ ծառը իւր պտուղներով տերեւերով, ձիւղերով, ոստերով, իւր բունով և այլն կարող է մանկան երեալ իրեւ մի անբաժան ամբողջութիւն, այսպէս նաև երգեցիկ խումբի երգը, սենեակը իւր մէջ ու նեցած զանազան իրերով և այլն: Այս իրողութիւնը աչքի առաջ ունենալով կարող ենք ասել, որ մոյն աժա

մանակ զգայութիւններն ու մտապատերաները հոգւոյ մէջ միանում են կազմում մի ընդհանուր մտապատեր։

Այժմ հարց է, որքան զգայութիւններ ու մտապատերներներ ենք կարող միանգամից պահել մեր գիտակցութեան մէջ։ Իւրաքանչիւր ոք փորձով իւրեան վերայ տեսնում է, որ թէն իւր ջղերի վերայ ներդործում են բազմաթիւ լոյսի գըր գիտներ, այսուամենայնիւ նա ինքը գիտակցումէ նոյանից շատ քիչ բան, որի վերայ և դարձնումէ իւր ուշադրութիւնը։ թէն մեզ թւումէն թէ մենք միւնոյն ժամանակ կարող ենք զանազան զգայութիւններ պարզ ներկայացնել մեզ, այսուամենայնիւ խսկապէս այդպէս չել լինում, վասն զի մենք չենք կարող երկու զգայարանի միջնորդութեամբ ստացած զգայութիւնը նոյնաժման ակ ու բոլոր ովին միահաւասար պարզութեամբ ամբ մեր ուշադրատկերացնել մեզ, վասն զի մենք չենք կարող երկու զգայարանի միջնորդութեամբ ստացած զգայութիւնը նոյնաժման ամբ մեր կամքից բոլորովին անկախ լինելու որեմն և ակաման ամաման ամաման ամաման ամաման զօրութեամբ գարձնել միանգաման նոյան երկոյունց վերայ։ Մենք չենք կարող օր մի ժամուան ընթացքում և իւրաքանչիւր բոլի ամենայն պարզութեամբ զիտակցել թէ աստղի շարժմունքը և թէ ժամացոյցի ճօճանակի հարուածը, այսպէս նաև չենք կարող միանգամից լսել սրտի հարուածն ու զգալ երակի հարուածը։ Այդ տեղի է ունենում նաև միւնոյն զգայարանի երկու զգայութեանց վերաբերութեամբ, օր երբ լսում ենք երկու ժամացոյցի չխնկոցը։ Միւնոյնն էլ մենք տեսնում ենք նաև մոքերի վերաբերութեամբ։ Անք պիտի նորանց շարադասներ մէկը միւսի ետելից մեր գիտակցութեան մէջ, եթէ ցանկանում ենք պարզ ըմբռնել։

Այստեղից հետեւումէ։ մեր գիտակցութեան բովանդակութեամբ իւրաքանչիւր վայրէկ եան

շատ սահմանափակէ և մենք իւրաքանչիւր վայրէկ կեան միայն շատ քիչ մտապատերներ ենք կարող պարզ լուրբունել։ Գիտակցութեան այդ յատկութիւնը կոչից սկսած կոչում է «գիտակցութեան անձկութիւն»։

§ 9. Կամածին ու ակամայ մտադրութիւն։

Այն պայմաններից մէկը, որոնցից կախուած է մտապատկերների պարզութիւնն ու տեղութիւնը, է՝ մտադրութեանը կամ ուշադրութիւնը։ Ուշադրութիւն ասելով առհասարակ հասկանում ենք այս, որ գիտակցութիւնը ուղղումէ դէպի մի արդէն ներկայ և սպասելով զգայութիւն (մտապատկեր) և խորասուզում նորա մէջ։ Նա կարող է մեր կամքից բոլորովին անկախ լինելու որեմն և ակաման ամաման ամաման ամաման զօրութեամբ, իսկ ակամայ ուշադրութիւնը ինքն է ուղղում դէպի մի քանի առարկաներ (գրգիռներ, զգայութիւններ, մտապատկերներ), թէն զանազան աստիճանի մտաւոր մշակութիւն ստացած անձանց մօտ ուշադրութիւնը ուղղում է զանազան առարկաների վերայ և նոյան վերայ կանգնած մնում զանազան տեղութեամբ։ Ակաման ակաման ամաման ամաման զօրութիւնը կախուած է նախ գրգորի (զգայութեան) այժից, տեղութիւնից ու բազմութիւնից և երկրորդ գրգորի (զգայութեանց կամ մտապատկերների) հազուագիւտութիւնից, նորութիւնից ու անսպասելի լինելուց։ Այսպէս ահա հեշտութեամբ կարող է մեր ուշադրութիւնը գրաւել մարդկանց մի խումբ կամ աշքի ընկնող փայլվող մի շողիւն, մի սաստիկ աղաղակ (Ճայթիւն, որոտումն) կամ բարձրաձայն

խօսակցութիւն, մի սուր հոտ կամ համ, երեկոյեան պաշ
հին յաճախ եկող մի անծանօթ աղքատ կամ մի զիշ
սաւոր աստղ մի վաղուց արդէն անհետացած կամ մեւ
աեալ համարուած մարդ եալլն:

Այսուամենայնիւ մենք չպիտի այստեղից եզրափառ
կենք, որ սաստկա գոյն գրգիռները միշտ պատճառ են
նաև ամեն առ ժեղ զգայութեանց, վասն զի սաստիկ
գրգիռները, ինչպէս յատնի է, բժացնում են զիւրազ
գայութիւնը, ինչպէս օր. չափազանց ուժեղ լոյսը պատ
ճառումէ կուրութիւն, չափազանց բարձր ձայնը՝ ապա
շութիւն: Բայց մենք կարող ենք յոգնել ու ձանձրանալ
նաև եթէ միւնցն տեսակ զգայութիւնը երկար է շարուա
նակում, օր. երբ երկար ժամանակ միւնցն երգը ան-
ընդհատ լսում ենք, մինչդեռ զգայութեանց բազմազա-
նութիւնն ու փոփոխականութիւնը շատ թէ քիչ
ոյժ են տալիս մտապատճերներին: Բայց որքան որ մի մտա-
պատճեր արդէն ուժեղէ, այնքան էլ չնչին ոյժ ձեռն կը
բերէ նա, և եթէ նա փոքր ինչ մնայ գիտակցութեան
մէջ, այնուհետեւ զգայական տպաւորութիւնը կը կորցնէ
իւր ոյժը և մտապատճերի պարզութիւնը անկարող կը
լինի բարձրանալ մի որոշեալ աստիճանից: — Թոյլ տպա-
ւորութիւններից նոյնպէս կարող է ծագել մի ուժեղ
մտապատճեր, միայն այստեղ նախ՝ հարկաւոր է առաւել
երկար ժամանակ քան թէ այդ հարկաւոր էր ուժեղ
տպաւորութեանց, և երկրորդ՝ նոյա պիտի օգնէ մեր
ներքին հետաքրքրութիւնը: Ոգեսրուած խօսե-
լիս եթէ ես լսելու լինեմ փողոցում մի ցածր շշնչեւն,
իմ մտադրութիւնն կարող է թեքուիլ զէպի այն կողմը
և ես կարող եմ իմ ընկերիս տուած պատասխանը շմել:
Հեռագիտակով լուսնին նայելիս եթէ իմ տեսութեան
գաշտի սահմաններում մի թռչուն երևայ, նա կարող է

իմ ուշագրութիւնս դէպի իւրեան դարձնել: Մեր ուշագրութիւնը կարող է զրաւել իւր ձեռվ
նաև այն, ինչ որ մեզ համար սովորական է, հա-
նապազօրեալ այ ու լաւ ծանօթ: Այսպէս օր. մի լաւ
ծանօթ իրի վերայ ասած ճառը իւր բնականութեամբ,
պարզութեամբ ու ծշտութեամբ մեր ուշագրութեան հա-
մար կարողէ լինել այնքան զրաւիչ որքան դորա առար-
կան մեզ լաւ ծանօթ է: Այս պատճառաւ մեզ հետա-
քըրըրումէ մի մարդ կամ մի զիրք առաւելապէս այն ժա-
մանակ, երբ մենք նորա մէջ գտնում ենք մեր սեղչա-
կան պատկերը:

Գլխաւորապէս մեր ուշագրութիւնը զրաւում են
այնպիսի առարկաներ, որոնք մեզ մասսա մբ ծանօթ
են, մասսա մբ էլ ան ծանօթ, նոր: Հաղուագիւտ
բոյսերի վերայ խօսելիս հասարակ գիւղացին միայն ձան-
ձրութիւն կը զգայ. բայց եթէ խօսքը փոխուի այնպիսի
բոյսերի վերայ, որոնք մի քանի նմանութիւն բերելով
նորան լաւ ծանօթ բոյսերին, ունին և իւրեանց առանձ-
նայատկութիւնքը, օր. ամերիկայի ցորեանը, այն ժամա-
նակը նա կը լսէ ամենայն ուշագրութեամբ: Եթէ մենք
վեր առնենք մի մեզ անձանօթ լեզուով գրուած գիրք
ու կարգանք կամ ուրիշի կարգացածը լսենք շուտով կը
ձանձրանսնք. առաւել քիչ ձանձրութիւն կը զգանք,
եթէ մենք կարող ենք գոնէ բառարանի միջնորդութեամբ
կարգալ. բայց եթէ մենք ոչինչ դժուարութիւն չենք
կրում լեզուի ու բովանդակութեան ուղիղ ըմբռնման
մէջ, այն ժամանակը մենք կը կարգանք ամենայն ուշագ-
րութեամբ՝ հետաքրքրուելով նորա բովանդակութեամբը:

Ուշագրութիւնը առն ձկան մէկ գիտակցութիւնը
և սորա լոյսը կենդրոնացնում մի որ և է զգայութեան
կամ մտապատճերի վերայ: Այս անձկացուցումը ուրիշ

ոչինչ նշանակութիւն չըւնի, եթէ ոչ որպէս զի ուշադշրութիւնը փոքր առ փոքր ուղղուի գէպի մի մտապատճիր, սորա վերայ կենդրոնանայ, որ և դորանից յետոյ հանում է կատարեալ սլարդութեան և բռնում բոլոր դիտակցութիւնը; Բաղմաթիւ կամ արագ արագ փոփոխուող գրգիւները բաժան բաժան են անում ուշադրութիւնը, ցրում ու թուլայնում; — Պարզ է, որ անոյն աժամանակ զգայութիւնն երը միւմեանց ազօտացնում են (հալածում են գիտակցութիւնից) այնքան առաւել, որ չափնորդական թուով շատ են:

Կամածին ուշադրութիւնը, ինչպէս ասեցինք, կախուած է մեր գիտութիւնից ու կամքից; Ակամայ ուշադրութեան ժամանակ մարդս կրաւորական գերէ է խաղում, վասն զի նորա ուշադրութիւնը զրաւում է առարկայից, մինչդեռ կամած ին ուշադրութեան ժամանակ նա դորձողէ հանդիսանում, աշխատելով պինդ ունելիւր գիտակցութեան մէջ մի որ և է մտապատճիր. Նա ժամանակով առաջնուն է, սկզբնականը, սա՝ ժամանակով յետինը, որ և կարելի է ձեռն բերել միայն սեպհական ոյժի գործադրութեամբ և միշտ փոքր առ փոքր; Կամածին ուշադրութիւնը պիտի խակապէս ուսանուի. ինչպէս յայնի է, երեխաները, որչափ էլ չաշխատեն, անկարող են երկար ժամանակ կենդրոնաւորել իւրեանց ուշադրութիւնը մի առարկայի վերայ:

§ 10. Մտապատճերների բովանդակութիւնը:

Եթէ միմեանց հետ բազդատենք մտապատճերի բովանդակութիւնը, այն ժամանակը կը աեսնենք, որ նուքա կամ միմեանց հաւասար են կամ անհաւասար:

Հաւասար են այն մտապատճերները, որոնք միմեանցից զանագանւում են ոչինչ իւրեանց բովանդակութեամբ, իւրեանց յատկութեամբ, այլ իւրեանց ոժով ու ժամանակով, օր. իմ այսօրուայ մի յայտնի արօտի թոյլ զգայութիւնս և իմ երեկուայ նոյն արօտի ուժեղ զգայութիւնս: Անհաւասար զգայութիւնները կարող են լինել կամ անհամեմատելի կամ համեմատելի կամ համեմատելի, այսինքն՝ մէկը կարող է կամ ոչինչ համանման բան չունենալ միւսի հետ և կամ իւրեան բովանդակութեան մի մասնը հաւասար կը լինի միւսին: Այն մտապատճերները, որոնց բովանդակութիւնը անհամեմատելի է, կոչում են այլազգի: Այլազգի են զանադան զգայարանների զգայութիւնքը, օր. կարմիր ու թթու, ձախ ու հոտ, համ ու ցուրտ ևայն: Այն մտապատճերները, որոնց բովանդակութիւնը համեմատելի է, կոչում են ընդդիմակաց են օր. թուխ ու սև, կարմիր ու դեղին, պինդ ու փափուկ, տաք ու ցուրտ:

§ 11. Մտապատճերների կապակցութիւնը ըստ իւրեանց բովանդակութեան:

1. Հաւասար մտապատճերները միանում են միմեանց հետ: Եթէ երկու կամ առաւել շատ, բոլորովին միենոյն յատկութիւնը ունեցող մտապատճիր նոյնաժամանակ յերեան գան մեր գիտակցութեան մէջ, կը ձուլուին ու կը կազմեն մի մտապատճիր, վասն զի նորա միենոյն հոգւոյ նոյնանման գործողութիւններն են: Այն մտապատճերները, որոնք մէնք յաձախ ստացել ենք մեր սենեակից, կամ կարասիներից, գրասեղանից, մեր բառզըրքից միախառնուում են և այդ առարկաներից իւրաքանչիւրի համար կազմում մի մտապատճեր, որ և այդ գիտածուածում առաւել ոյժ է ստանում, այնպէս որ այդ բոլոր առանա-

ձին առանձին մտապատկերներից ստացած գումարը առաւել ուժեղ է լինում, քան թէ նոցանից իւրաքանչիւրը առանձին առնուած: Մտապատկերների այդ օրինակ միւս թիւնը կոչում է ձուլմունք:

2. **Ա. յլազգի մտապատկերները կազմակերպութեան մտապատկերները**, ինչպէս են օր. մի ձայնի ու մի գոյնի, մի համի ու մի հոտի ևայն մտապատկերները գիտակցութեան մէջ միմեանց պատահելու լինեն՝ ի հարկէ չեն կարող խառնուիլ ու կազմել մի միատեսակ գումարնոքա միանալուց առաջ ու յետոյ ֆնումեն միշտ զանազան: Եւ որովհետեւ նոքա ոչ միմեանց նման են, ոչ էլ միմեանց ընդդիմակաց, ուստի և չեն կարող միմեանց ոչ թուացնել և ոչ էլ զօրացնել: Այսուամենայնիւ նոքա, գտնուելով պարզ հոգւոյ մէջ միատեղ՝ չեն կարող միմեանց մօտ ֆնալ առանց փոխադարձ յարաբերութեան ուստի և նոքա միանալով՝ պիտի կազմեն մի ամբողջական կամ կամ նոքա միանալով՝ պիտի կազմեն մի ամբողջական գումարն առաջ առանց գաղտութիւն դարձնելու իւրեանց յատկութեան ու քառակութեան վերայ: Այսպէս ահա շաբարի սպիտակ գոյնը, բրառութիւնը, քաղցր համը կապակցուելով միմեանց հետ կազմում են շաբարի մտապատկերը:

3. **Անդդմակաց մտապատկերները փոխադարձաբար արդեւկաց միմեանց:** Եթէ մենք ուզենանք միանուագ պատկերացնել երկու կամ առաւել շատ ընդդիմակաց մտապատկերներ, օր ձայներս գ և դ միւնոյն օքտավից, գոյներս կարմիր ու սև ևայն, այն ժամանակը հոգւոյ պարզութիւնը պահանջում է, որ մենք երկու մտապատկերները ըմբռնենք ու միացնենք միանդամից: սակայն նոցա բովանդակութեան մէջ ետքած հակագրութիւնը այդ թոյլ չի տալիս մեզ առանց

այլեսպլութեան: Ուստի և մտապատկերները ընդդիմադրում են այդ միութեան: Սյաստամենայնիւ նոքա չեն կարող խուսափել այդ միութիւնից, վասն զի նոքա միւնոյն պարզ էակի նոյնաժամանակ գործողութիւններն են: Հետեւապէս և արգելքը միջեց պիտի բարձուի, այն է ընդդիմակաց մտապատկերները պիտի ենթարկուին մի որ և է փոփոխութեան, որից յետոյ միայն կարելի է այդ միութիւնը: Աակայն փոփոխութիւն ասելով, մենք չպիտի հասկանանք թէ մտապատկերների բովանդակութիւնը փոփոխուաւում է կամ նոքա բոլորովին ոչչանում են. ընդհակառակն՝ ընդդիմակաց, միաժամանակ գիտակցութեան մէջ գտնուող մտապատկերները միայն երկուստէք նսեմացնում են միմեանց: Կառա հետևեանքը լինումէ այն, որ ոչ թէ միայն նսեմանում է մտապատկերների պարզութիւնը, այլ միջեց բարձուում է նաև նոցա միութեան արգելառիթը, այնպէս որ ընդդիմակաց մտապատկերները միանում են միայն իւրեանց նսեմանալուց յետոյ մնացած մնացորդներով: Ուրեմն միմեանց յետ մղելուց յետոյ միանում են միայն մտապատկերների դեռ ևս ազատ ու պարզ մնացած մամները: Մտապատկերների այդ օրինակ միութիւնը կոչում է թերակատար ձուլմունք:

§ 42. Մտապատկերները իբրև գորութիւնք:

Որչափ որ մի գործողութիւն՝ արգելքների հանդիպելով՝ մասամբ կամ բոլորովին յաղթահարում է կամ կարողանումէ յաղթահարել նորանց (ուրեմն և որչափ որ նա յառաջ է ածում կամ կարող է յառաջ ածել մի որ և է փոփոխութիւն), կոչում է զօրութիւն:

Քայց որովհետեւ մտապատկերներից իւրաքանչիւրը իւր ընդդիմադիրից յետ մղուելով ինքն էլ է աշխատում նորան յաղթահարել ուրեմն որովհետեւ իւրաքանչիւր մտապատկեր կարող է ընդդիմադրութեան հանդիպել. ուստի և մտապատկերները յեւան են գալիս իրբեւ զօրութիւնը, իբրեւ մտա ու որ հոգոր ու թիւնը, և իւրեանց այդ խաղով պատճառ են լինում գիտակցութեան ազգի ազգի փոխիսմանց:

Դիտողութիւնը մեղ ու սուցանում է նաև, որ բոլորովին կամ միայն մասամբ նսեմացած մտապատկերների յաձախ, առանց իւրեանց ծագման պայմանների նորոգման, կրկին յետ են ստանում իւրեանց առաջուան պարզութիւնը, այսինքն կրկին գիտակցութեան մէջ տեղ են բունում: Շատ հասկանալի է, որ մտապատկերի նսեմանալը ընդդիմադիր զօրութիւնից ծագած մի այպիսի դրութիւն է, որին իւրաքանչիւր մտապատկեր ընդդիմադրում է իւր սեպհական զօրութեամբ: Այսպէս ահա յետ մղուած մտապատկերը հոգւոյ մէջ յերեան է գալիս ոչ թէ միայն իբրեւ մի գործողութիւն առանց գիտակցութեան, այլ նաև իբրեւ յետ մղման ընդդիմադրող մի այնպիսի դորձուղութիւնն, որ ճգնում է ստանալ իւր պարզութիւնը, իւր նախկին ու բնական դրութիւնը: Ուստի և եթէ ի վերջոյ միջից բարձուեցաւ ընդդիմադիր մտապատկերների յետ մղող ազգեցութիւնը, այն ժամանակը յետ մղուած մտապատկերը իւր յատուկ զօրութեամբ կրկին յետ կը ստանայ իւր ազատութիւնն ու պարզութիւնը, ինչպէս մի ճգտալար, որ իւր սեպհական զօրութեամբ կրկին բարձրանում է և ընդունում իւր նախկին դրութիւնը, երբ ճնշող ծանրութիւնը հեռացնում է:

Մի որ և է բարդ մտապատկերի վերայ կատարուած ընդդիմադրութիւնը բաժանուում է նորա բաղկացուցիչ մաս-

ների, այսինքն մանաւոր մտապատկերների վերայ: Սոքա փոխադաբար օգնում են միմեանց այդ ընդդիմադրութեանը դէմ դնելու և գիտակցութեան մէջ իւրեանց համար տեղ բանելու, ուստի և կուռում են ոգնական ներանց: Եթէ մի բարդ մտապատկեր Մ (մեր հայրենեաց մտապատկերը) կազմուած է մանաւոր մտապատկերներից և Ա, Բ, Գ... (հայրական տուն, նորա շրջակացը, հայր, մայր, եղբարք, քոյրեր...), այն ժամանակը այս մանաւոր մտապատկերները օգնում են թէ միմեանց և թէ բարդ մտապատկերիս Մ և այդ կերպով անկարելի գործում, որ ընդդիմադրութիւնը հեշտութեամբ և երկար ժամանակ տրան նսեմացնէ: Եթէ այս մանաւոր մտապատկերներից մէկը, օր գ. ինքն ըստ ինքեան շատ թոյլ է, այն ժամանակը նա կարող է օգնականների աջակցութեամբ յետ մղել ընդդիմադիր մտապատկերները, որ և նա չէր կարող անել, եթէ անօգնական լիներ գիտակցութեան մէջ: Մէր հայրենեաց բարդ մտապատկերի մէջ յերեան են գալիս մինչև անզամ ամենաչնչն գծագրութիւնները, մինչդեռ շատ ուժեղ տպաւորութիւնները, որոնք մենք ստացել ենք օր. Ճանապարհորդելիս, անդարձ կորչում են մեղ համար:

Ուրեմն և այն ոյժը, որով մի մտապատկեր ընդդիմադրում է միւսին, կախուած է ոչ թէ միայն նորա սկըզբնական ոյժից, այլ գլխաւորապէս նորա՝ ուրիշ մտապատկերների հետ կապակցուած կամ յօդուած լինելուց:

Կապակցութեան միջնորդութեամբ ընդդիմադրութիւնը տարածուում է նաև այնպիսի մտապատկերների վերայ, որոնց մէջ իսկապէս չը կայ ընդդիմադրութիւն: Ա, և Բ (լոյսի գրգիռ և ճայնի գրգիռ) իսկապէս այլազգի դդայութիւններ են, ուստի և չեն կարող միմեանց իբրեւ խոշնդուն ծառայել. միայն Բ յօդուած լինելով Գ.ի հետ, որ Ա.ին ընդդիմադիր է, յետ է մղում իբրեւ Գ.ի.

մասնաւոր մտապատկեր: Ուստի և մենք փակում ենք աչքերնիս, որպէս զի մի որ և է ձայն պարզ լսենք. դորա վերայ է հիմնւում նաև բէսաէլ աստեղաբաշխի յառաջ բերած իրողութիւնը, որ աստեղաբաշխական քննութեանց ժամանակ մեր անսածը ճշտութեամբ ըմբռնելուն արգելք է լինում, եթէ մենք միւնոյն ժամանակ լսում ենք մի բան, օր. ուշադրութիւն ենք դարձնում և ճօճանակի հարուածների վերայ:

Ինչպէս ասացինք, մտապատկերները ընդդիմադրում են, փոխադարձաբար յետ են մզում միմեանց. դորանից ոչ մի մտապատկեր չի կարող բոլորովին ազատ մնալ որչափ էլ նա զօրեղ չլինի: Յայտնի է, որ առաւել դօր եղ մտապատկերները համեմատաբար առաւել մեծ զօրութեամբ են ընդդիմադրում իւրեանց հակառակորդներին, ուրեմն և առաւել քիչ են նսեմանում, քան թոյը լերը: Այդպէս ահա թոյլ մտապատկերները առաւել են նսեմանում, և որովհետեւ նոքա ի սկզբան (արդէն գիտակցութեան մէջ մննելիս) համեմատաբար առաւել քիչ պարզութիւն են ունենում, ուստի և յաձախ պատահում է, որ նոցանից շատերը՝ բոլորովին նսեմանում են: Դորանով բայցատրումէ նաև թէ մոռացութիւնը և թէ գիտակցութեան-անձկութիւնը: Հոգւոյ մէջ փոքր առ փոքր դոյցած անթիւ մտապատկերներից, հայթհայթած գիտութիւնից մեր գիտակցութեան մէջ իւրաքանչեւր րոպէ կարող է գտնուել միայն չափազանց քիչ, մնացեալը յետ է մզուած, նսեմացած է:

§ 43 Վերաբատադրութեան գաղափարն ու տեսակները:

Անձնաքննութիւնը ցոյց է տալիս մեզ, որ հոգւոյ մէջ

միանգամ գոյացած մտապատկերները երբէք անհետչեն կորչում հոգուց, թէև նոքա ուրիշ մտապատկերներից հալածուին գիտակցութիւնից, այլ նոքա մնում են հոգւոյ մէջ և յաջող գէպքերում կրկին յետ են գալիս ՚ի գիտակցութիւն: Նմանացած մտապատկերների ՚ի գիտակցութիւն վերադառնալը կոչւումէ վերաբատադրութիւն:

Հին, բայց այժմ նուև մացած մտապատկերը կարող է վերաբատադրուիլ նախ՝ ան միջապէս, այն է միայն ընդդիմադրութեան տեղի տալովը, ուրեմն և միայն իւր յատուկ ոյժովը, և այն ժամանակը նա կոչւումէ ազատ բարձրացող բայց նա կարող է վերաբատադրուիլ նաև իւրեան հետ կապակցուած մտապատկերների միջնորդութեամբ, ոյն է երբ սոքա գործակից են լինում նորան իբրև օգնական եր և այն ժամանակը նա կոչւումէ բարձրացորած: Առաջին գիտուածում հին մտապատկերը ներգրածում է իբրև ժամացոյցի ձգտալար, որ ընդունում է իւր առաջուան դրութիւնը, հենց որ ձընաշումը վերջանում է կամ արգելքը վերանում, նա բարձրանումէ իւր սեպհական ոյժով: Երկրորդ գիտուածում օգնականներով զօրացած մտապատկերը յաղթահարելով իւր վերայ ծանրացած ճնշումը, բարձրանումէ և մանում գիտակցութեան մէջ:

Միշտորդական վերաբատադրութեան միշտ առաջնորդումէ անմիջականը, վամն զի միջորդականը այնպիսի օգնական մտապատկերների միջնորդութեամբ եղած վերաբատադրութիւն է, որոնք նախ և առաջ ինքեանը ևն անմիջապէս վերաբատադրութիւն: Աթէ օգնական մտապատկերը անմիջապէս չարթնանար, այն ժամանակը նորա ստանձնած մտապատկերն էլ չէր կարող նորա միջնորդութեամբ վերաբատադրութիւն:

§ 14 Անմիջական վերարտադրութիւն:

Ստուգատկերների անմիջական վերարտադրութիւնը այն ժամանակն է տեղի ունենում, երբ նսեմայած մտապատճերիս ($\text{Ա}=\text{իմ} \text{հօրս}, \text{իմ} \text{քերտկանութեան}, \text{իմ} \text{ընկերիս} \text{և} \text{այլն}$) հաւասար մի զգայութիւն ($\text{Ա}=\text{իմ} \text{հայրս}, \text{իմ} \text{քերտկանութիւնս}, \text{իմ} \text{ընկերս}$) մտնումէ գիտակցութեան մէջ: Զգայութիւնս Ա, սկսում է Բ մտապատճերիս գէմ պատերազմել ու նորան հալածել գիտակցութիւնից, որի միջնորդութեամբ առաջուած ունեցած և այժմեան զգայութեան նման մտապատճերս Ա նսեմացել էր: Այսուհետեւ Բ մտապատճերը նոր զգայութեան ներս մոնելուց յետոյ, նահանջումէ Հին Ա մտապատճերիս առաջ, և այս վերջինը իւր սեպհական ոյժով կըրկին վերադառնումէ Կ ի գիտակցութիւն և խառնում նոր Ա, զգայութեան հետ, վասն զի երկոքեան էլ նման Են միմեանց: Այսպէս ահա առաւել զօրանումն մեր Հին արդէն ունեցած մտապատճերները, երբ մենք նորից ենք ըմբռնում միւնոյն գրգիւը: Զակառակ դիպուածում առարկաները մեզ երեկը չէին երեալ իշրեւ վաղուց ծանօթ, այլ միշտ իւրաքանչիւր առարկայ կրկին ըմբռնելիս մեզ կը թուար թէ առաջին անդամն ենք պատահում նորան: — Նշանաւոր է այս հանդամանը որ զգայութիւնը անմիջապէս վերարտադրումէ ոչ թէ միայն մի հին, հաւասար, այլ նաև շատ թէ քիչ հաւասար մտապատճերներ: Այսպէս ահա մի ձայնի տօն մեզ յիշեցնում է մի ուրիշ գորա նման, երբեմն լսած տօն, մի գինու համ—մի ուրիշ երբեմն խմած գինունը. մի որ և է ցաւի զգացութիւն — մի ուրիշ, երբեմն ունեցած ու զորա նման ցաւինը, չնայելով որ այդ երկու զգայութիւնները կամ մտապատճերները գորանից առաջ երեկը միատեղ չեն

եղել և ոչ էլ անմիջապէս միմեանց չեն յաջորդել: — Ինքնըստ ինքեան վերադառնում են ՚ի գիտակցութիւն բոլոր յաձախ կրկնուած հաւասար մտապատճերները. մեր հանապազօրեայ պարագմունքները միշտ կանգնած են լինում մեր աչքի առաջ, հենց որ քնից արթնանում ենք. կըրքուանձի մէջ անդադար վերարտադրումէ այն մտապատճերը, որի հետ կապակցուած է նորա կիրքը և ներս թափանցումնորանց: Այսուղից և ծագումէ բուռն կրքի ենթարկուած անձանց տրտունջը, թէ ոչինչ չեն կարողանում ինչ լամատութեամբ գործել թէկ սա ոչինչ յարաբերութիւն չունի. կրքի առարկայի հետ:

§ 15 Միջնորդական վերարտադրութիւն:

Ըստ մեծի մասին անմիջական վերարտադրութեան հետ յօդուում է նաև միջնորդականը: Վթէ արգելքը վերանալուց յետոյ Բ մտապատճերիս հետ յօդուած Ա մտապատճերս կրկին մտնէ գիտակցութեան մէջ, այն ժամանակը նա կը վերաբատագրէ նաև իւրեան հետ կապակցուած մտապատճերս Բ, կամ հոգեբանական լեզուով խօսելով, Ա-ի վերարտադրութեան հետ այդ դիպուածում յօդուած է նաև Բ-ի վերարտադրութիւնը: Ուրեմն Ա-ը այն միջոցն է, որի օգնութեամբ Բ-ը վերարտադրութեան է հասնում, ենթարկելով որ Ա-ից և Բ-ից զումարուած ընդհանուր զօրութիւնը կարող է մի կողմ քաշել այն արգելքը, որ ընդդիմագրում է Բ-ի վերարտադրութեան: Ա մտապատճերը կոչում է Բ-ի օգնական, կամ ընդհանրապէս առնելով Ա-ը օգնական է իւր հետ յօդուած մտապատճերներին: Որչափ որ շատ օգնականներ ունի մի

մտապատկեր, այնքան էլ յաճախ նա կը մտնէ զիտակ-
ցութեան մէջ: Ով որ սաստիկ եռանդով ու չերմաջերմ
յուսով սպասում է մի բանի, նա ամենայն ինչ մի յա-
րաբերութեան մէջ է դնում իւր յոյսի հետ. նոյն իսկ
այս պատճառաւ յօյսը ստանում է բազմաթիւ օգնական-
ներ, որոնց միջնորդութեամբ և նա միշտ վերարտադրու-
ւում է: Այսպէս նաև եթէ մենք մի բազմութեան մէջ
տեսնելու լինենք մեր ծանօթներից մէկին, իսկոյն մեր աշ-
քերը կանգ կ'առնեն նորա վերայ և մենք նորան կը ծա-
նաչենք իբրև մեր ծանօթին: Բայց այսանդ կը վերար-
տադրուի ոչ թէ միայն այս ծանօթ անձի հին մտապատ-
կերը, այլ առ իւր հետ կը բերէ, նաև ժամանակակից
մտապատկերների մի խումբ, որոնց հետ նա ոյն ժամա-
նակը յօդաւորուել էր: Մենք ոչ թէ կրկին անգամ կը ծա-
նաչենք մեր ծանօթին, այլ մենք կը յիշենք նաեւ
նորա հետ մի որ և է յարաբերութիւն ունեցող հանգա-
մանքները, օր. նորան պատահած տեղը, նորա արտայայ-
տած մորքերը, նորա գործերը, զգեստները և այլն:

§ 46. Վիճնորդական վերարտադրութեան օրէնքները:

Ժամանակակից ութիւնը այն ընդհանուր օրէնքն
է, որով մտապատկերները միմեանց հետ կապակցում են,
կամ որ մի և նոյն է, որով հօգին յօդաւորում է մտա-
պատկերները միմեանց հետ: Բայց առ հասարակ զանա-
պատկերները միմեանց հետ: Բայց առ հասարակ զանա-
պատկերները միմեանց հետ են չորս վերարտադրութեան օրէնք, այն է՝ 1.
Ն ժամանութեան, 2. հակագրութեան, 3. ժա-
մանակակից ութեան և 4. յաջորդութեան
կամ շաբաթականութեան:

§ 47. Կմանութեան օրէնքով

Նման մտապատկերները վերարտադրում են
մի սեանց: Նման կուռում են այնմտ ապատկերները, որոնք
մտապատկեր միայն հաւասար են, օր. ԱԲ և ԱԳ. ԱԲ. բարդ մտա-
պատկերի Ա-ը անմիջապէս վերարտադրում է ԱԳ. մտապատ-
կերներիդ Ա-ը իբրև իւր հաւասարը, իսկ Գ. վերարտադրում
է Ա. ի միջնորդութեամբ: Այսպէս ահա տեսնելով մի պատ-
կեր մենք յիշում ենք նորա նախակաղապարը, մի տուն
յիշեցնում է մի ուրիշը: Մի երգ, որ մենք այժմ լուս
ենք, յիշեցնում է մեզ իւրեան նման մի ուրիշը, որ
մենք երգում էինք մեր երիտասարդութեան օրերում: մի
որ և է, անեկզոտ կամ սրախօսութիւն մեզ յիշեցնում է մի
ուրիշ համանմանը: Մի քանի հոգեօր դրութեանց մտա-
պատկեր արթնացնում է մեր մէջ դորա համապասխա-
նող առարկաի մոտապատկերը, օր. եթէ մէկը ցանկանում
է սպատկերացնել բարկութիւնը կամ սէրը, նա իսկոյն
պիտի մտաբերէ մի որ և է բան, որի վերայ կարող է ուրա-
խանալ կամ բարկանալ:

Այսպէս ասում ենք այլարանօրէն նաև անապատի
նաւոկ, նու պատերազմի առիւծ էր, կեանքի գարունը և
այլն, որոնք վերարտադրում են մեր մէջ իւրեանց հա-
մապատսախոնող մտապատկերները. այդպէս նաև աւե-
տարանի սերմանացանը, ժողովրդական առախերը, Մէնէ-
նիս Ազրիապային՝ ստամփսի ու մարմնոց անդամների վե-
րայ պատճած առակը և այլն:

§ 48. Հակագրութեան օրէնքով

Հակագրութեան մտապատկերները վերար-
տադրում են մի մեանց: Հակագրի մտապատկեր

ները նոքա են, որոնք թէ հաւասար են և թէ անհաւասար և որոնց անհաւասարութիւնը առաւել է քանի հաւասարութիւնը; Եթէ օր. մենք հանդիպում ենք մի անտոփոր հաստ ու բոլորակ մարդի, այն ժամանակը մեր միտն է լնիսում մեր ծանօթի անսովոր նիշար ու երկար միտն է լնիսում մեր ծանօթի անսովոր նիշար ու երկար պատկերը: Եթէ մենք զբոսնում ենք մի նեղ, մութ ու սեպացեալ ժայռերով պատաժ ձորակում, այն ժամանակը մենք յիշում ենք դորա բոլորովին հակապատկերը, այն է մի ուրախ ու լայնատարած դաշտ: Աղքատիկ կեանքը յիշեցնումէ մեղ փառաւորը. բթամիտ, անփորձ ու անշեցնումէ մեղ փառաւորը. բթամիտ, անփորձ ու անշնորհը բանսորը—վարպետին:—Այսոեղ հարկաւոր է ասել որ բազմաթիւ օգնականներ ունեցող մի մտապատկեր այնքան առաւել է բարձրանում գիտակցութեան մէջ, որչափ նորա հակապատկերը առաւել է զանազանում նորանից: Այսպէս ահա ողորմութիւն խնդրող աղքատը մեղ առաւել խղճալի է թւում, եթէ մենք նորան բաղւ դատում ենք միորեւէ նրէտոփի հետ. սրիկան առաւել աշքի է ընկնում, եթէ նորան ռազնիւ» են կոչում, կամ ժամատը, եթէ նորան շուայլ են կոչում: Մեր ունեցած ժլատը, եթէ նորան շուայլ են կոչում: Մեր ունեցած հազարաւոր իրերից մի բոպէ շատ բարձր ենք դասում այն, ինչ ու կորյրել ենք, որպէս և մօրը ամենից թան կազին է երեւում այն որդին, որին մահը այս բոպէիս յափշտակել է:—Հակադրութեան օրէնքի վերայ հիմնաւում է նաև կատակի, հեգնութեան ու սրախօսութեան և նաև դրամայի մէջ ողբերդականի ու կատակերդականի ազդեցութիւնը:

19. Ժամանակակցութեան օրնէքը

ասումէ. «այն մտապատկերը, որոնք

նակ կամ միասին գտնուել են գիտակցութեան մէջ, վերարտադրում են միմեանց միջնորդ ական վերարտադրութեան միջնորդութեամբ, վասն զի նոքա մի բարդ մտապատկերի մասներն են: Շուկայի մտապատկերը հեշտութեամբ արթնացնում է խանութների, ապրանքների, խաղալիքների և ուրիշ շատ իրերի մտապատկեր: Հայրենեաց մտապատկերը հեշտութեամբ գուրս է կոչում մեր երիտասարդ գուրեան ու մանկութեան անցքերն ու պատահարները: Ճամացոյցի հարուածը յիշեցնում է մեղ մի դորձ, որպիտի կատարուի մի որոշեալ ժամում:

Վերարտադրում են միմեանց ոչ թէ միայն այնպիսի մտապատկերներ, որոնք յատուկ են մի և նոյն զգայարանին, այլ և այնպիսիքը, որոնք վերաբերում են զանազան զգայարանների: Մի որ և է հատ արթնացնում է մեր մէջ նորա համը, իսկ սա կերակուրի կամ ուտելիքի մտապատկերը: Ամենից հեշտութեամբ ու սիրով յօդաւորուում են միմեանց հետ տեսանելեաց մտապատկերները լուկեաց մտապատկերների հետ, տեսանելեաց մտապատկերները շօշափելեաց մտապատկերների հետ, հոտոտելեաց մտապատկերները ձաշակելեաց մտապատկերների հետ, բայց շատ հազւաղիւտ է լնում շօշափելեաց ու լուկեաց, տեսանելեաց ու հոտոտելեաց, տեսանելեաց ու ձաշակելեաց մտապատկերների յօդաւորութիւնը:

§ 20. Յաջորդութեան կամ շարայարութեան օրէնքը

ասումէ. «այն մտապատկերը, որոնք


են մի մե անց իւր ե անց սկզբն ա կան կ ար-
գաւ: Այսպէս՝ մի որ և է բերան սովորած ոտանաւորի
առաջին բառը մեր միան է ձում երկրորդը, սա երրորդը
ևայլն: մի որ և է երգի առաջին ձայնը յիշեցնում է
երկրորդը, սա երրորդը ևայլն: այսպէս նաև միմեանց
յաջորդող թուերը—1, 2, 3..., այբուբենի տառերը—
ա, բ, գ..., մի որ և է հոլով խնդրող բայերը, նախա-
դրութիւնները ևայլն: Դորա պատճառն այն է, որ շար-
քի իւրաքանչիւր երկու միմեանց յաջորդող մտապատկեր՝
գոնէ մի բոպէ միաօին մնալով գիտակցութեան մէջ՝
կապակցում են միմեանց հետ: Անժադրենք թէ մի որ
և է զգայարանի միջնորդութեամբ մենք ըմբոնում ենք
յաջորդական շարքս Ա, Բ, Գ, Դ, Ե...: Ա-ը իւր ՚ի գի-
տակցութիւն մուած առաջին բոպէից յետ է մղում
այնուղ գտնուած մուապատկերներից: Քանի որ Ա-ը մա-
սամբ գիտակցութիւնից դուրս էր և փոքր առ փոքր ա-
ռաւել էր նսեմանում եկաւ Բ-ը: Այժմ մուաւ Գ-ը և
յօդուեց ընկղմող Բ-ի ու առաւել նսեմացած Ա-ի հետ:
Դորանից յետոյ եկաւ Գ-ն և կապակցուեցաւ գիտակցու-
թեան մէջ զանազան աստիճանի պարզութեամբ յետ
մնացած նախընթաց անդամների, այն է՝ Ա, Բ, Գ, Հետ:
Եւ այսպէս ահա շարքի իւրաքանչիւր յետազայ անդամը
կապակցուեցաւ իւրեանից առաջ անցած մի խումբի հետ,
որի իւրաքանչիւր անդամի պարզութիւնը այնքան առա-
ւել էր աղօտացած, որքան նա մօտ է շարքի սկզբին: Բ,
Գ,... Գ-ի... գիտակցութեան մէջ գտնն Ա-ի առաւել ու
առաւել պահասուող մնացորդը, այն է՝ Ա, Ա₁, Ա₂, Ա₃...
և նորա հետ յօդուեցին, այնպէս որ երբ Ե-ը մտաւ գի-
տակցութեան մէջ, Ա արգէն նսեմացած էր երեք անդամ:
Շարքի այդօրինակ կազմութիւնը շօշափելի կերպով ներ-
կայացնուումէ յետագայ կաղապարով:

1. Ա
2. ա Բ
3. ա₁ բ Գ որից երեսում է, որ
4. ա₂ բ₁ գ Դ
5. ա₃ բ₂ գ₁ դ Ե

ա > ա ₁ > ա ₂ > ա ₃ ...	{
բ > բ ₁ > բ ₂ > ...	
գ > գ ₁ > ...	
դ	

Դնենք թէ այդպէս ծագուած շարքը գիտակցու-
թիւնից հալածուելուց ու նսեմանալուց մի քանի ժամա-
նակ յետոյ, սկզբնական անդամն Ա մի նոր զգայութեան
(ա) միջնորդութեամբ կրկին մտաւ գիտակցութեան մէջ:
Այնուհետև Ա-ը կարող է ներգործել Բ-ի վերայ միայն
նորանով, ինչ որ նորանից դեռ ևս պարզ էր մնացած,
երբ Բ-ը մտաւ գիտակցութեան մէջ, նոյնպէս Գ-ի վերայ
նորանով, ինչոր նորանից մնացել էր Գ-ի ժամանակ, Գ-ի
վերայ նորանով, ինչոր նորանից մնացել էր Գ-ի ժամա-
նակ ևայլն ևայլն: Այսուամենայնիւ այն ոյժը, որ Ա կա-
րող է գործ զնել յաջորդ անդամները պարզութեան
հասուցանելու, այս անդամների համար մի և նոյնը չէ:
Ա-ը ամենամեծ պարզութեամբ է մի-
այն Բ-ի հետ, իսկ Հետեւել անդամների, այն է՝ Գ, Դ,
Ե... Հետ յօդուած է միայն աստիճանաւ ցածրա-
ցող ուժգնութեամբ և այն՝ առաւել թոյլ ոյժով
Գ-ի, քան Բ-ի հետ, ևս առաւել թոյլ ոյժով Գ-ի, քան
Գ-ի հետ ևայլն: Աւրեմն և Ա մտապատկերը կրկին յե-
րեան գալով գիտակցութեան մէջ արթնացնումէ միւ-
սերը ոչ թէ միանգամից ու մի վայրկեանում,
այլ միայն Բ-ենը և այդ միայն այն ժամանակ, երբ ինքը
համումէ այն պարզութեան աստիճանին, որով նա ա-
ռաջին անդամ յօդուել էր նորա հետ: Երրորդ մտա-
պատկերը միայն այն ժամանակն է բարձրանաւմու մտնում գի-
տակցութեան մէջ, երբ երկրորդը արդէն հասել է համա-
պատասխան նսեմութեան, և այսպէս իւրաքանչիւր յա-
ջորդ մտապատկեր վերագառնում է շարքի սկզբնական

կարգաւ։ Դորա հետևանքը լինումէ այս, որ Ա.ից սկսած շարքը վերարտադրումէ այն կարգաւ, ինչ կարգաւ որ նորա անդամները ըմբռնուել էին։ Յետագայ կաղապարս ներկայացնումէ մոտապատկերների գրութիւնը այն րոպէին, երբ Ա.ը արդէն անցել է իւր ֆազերը (այստեղինը), և ն անդամն կանգնած է ամենից բարձր, այսինքն շարքը արդէն վերարտադրուել է մինչև Ե.ը։



Շարքի իւր նախկին կարգաւ վերարտադրուելու ոյժը կախուած է նորանից, թէ նորա անդամները որչափ սերտ են կապուած միմնանց հետ։ իսկ սա էլ կախուած է անդամների թուից, որոնց հետ կապակցուած է շարքի մի որ և է անդամը, օր. Ա.ը իւր աստիճանաւ նուազուող մնացորդով։ Բայց սրովհետեւ այս մնացորդը միշտ նուազումէ և ՚ի վերջոյ համառում զրօյի, ուստի և նորա միջնորդութեամբ Ա.ի հետ կապակցուած անդամների թիւը պիտի մի վերջ ունենայ և համեմատաբար կարձ՝ լինի։ Երկար շարքերում առաջին անդամը այլ ևս չի կարողանում տիրել բոլոր անդամների վերաց, այլ վերարտադրութիւնը ալիքների ձևով միջին անդամներից տարածւումէ միւսերի վերայ մինչև վերջինը։

§ 24. Շարունակութիւն։

Եթէ անմիջապէս վերարտադրուի շարքի միջին անդամներից մէկը, օր. Գ, այն ժամանակը սա իւր հետ կը

բերէ մէկը միւսի համելից՝ յաջորդաբար, բայց համարեա իւրեանց առաջուան պարզութեան աստիճանաւ Գ, Ե, Զ, Է. և այսուհետեւ որոնց համար նա ծառայումէ իրեւ առաջին անդամի իսկ նորա նախորդ Ա, Բ անդամները, որոնց համար Գ.ը վերջին անդամէ, կը վերարտադրուեն միասին, բայց աս ի աջանաւ նուազուող պարզութեամբ։ Այսպէս ահա Գ.ը վերարտադրումէ Երկու նախընթացները միանդամից, բայց միայն աստիճանաւ ցածրացող պարզութեամբ և ոչ շարքով, ինչպէս յեանորդներս Գ, Ե, Զ, Է. և այսպատկերիս հետ։ Բայց նոյն իսկ այդ բարդ մասապատկերի մէջ Ա.ու Բ մոտապատկերները կանգնած էին միմեանց մօտ աստիճանաւ նուազուող պարզութեամբ։ Այսպէս ահա Գ.ը վերարտադրումէ Երկու նախընթացները միանդամից, բայց միայն աստիճանաւ ցածրացող պարզութեամբ և ոչ շարքով, ինչպէս յեանորդներս Գ, Ե, Զ, Է. և այսուհետեւ ուղարկուի մեջ անօթ շարքի միջեց, օր. Վարդանանց պատերազմը, այն ժամանակը այդ պատերազմի նախընթաց անցյերը մեր առաջ կը ներկայանան համառօտակի ու միանուագ. ընդհակառակն նորան յաջորդները, այն է՝ պատերազմի ընթացքն ու մանրամանութիւնը, վահանի գործունելութիւնը և այլն կ'անցնեն մեր մաքուլ այն կարգաւ, ինչ կարգաւ որ ՚ի սկզբանէ կազմուել էր շարքը։ Ի հարկէ նա, ով որ մի շարք վատ է ըմբռնել և լաւ չի սեպհականել ամենը միմեանց հետ կը խառնէ, կը շփոթէ, եթէ մի հարց առաջարկուի նորան շարքի միջեց։ Օրինակ եթէ մենք հարցնենք մի թոյլ աշակերտի, թէ ով էր շայոց չորրորդ Կահապետը, այն ժամանակը վերարտադրութիւնը կը խառնակուի ու կը շփոթուի, նա կը պատասխանէ — Գեղամ. — ոչ. Արամայիս — ոչ. Արմենակ — ոչ, և նա չի կարող ասել կամ հաւաստի կերպով չի մանալ մի միայնակ ուղեղ պատասխանը — Ամասիայ, և այդ այն պատճառաւ որ նա չի կարողանում

Եթէ անմիջապէս վերարտադրուի շարքի միջին անդամներից մէկը, օր. Գ, այն ժամանակը սա իւր հետ կը շփոթուի, նա կը պատասխանէ — Գեղամ. — ոչ. Արմենակ — ոչ, և նա չի կարող ասել կամ հաւաստի կերպով չի մանալ մի միայնակ ուղեղ պատասխանը — Ամասիայ, և այդ այն պատճառաւ որ նա չի կարողանում

պատկերացնել իւրեան ոչ նախընթաց երեք նահապետներին մի անուագ, ոչ էլ յաջորդներին մէ կը միւսի ետեից, վասն զի նա շարքը չի ըմբռնել, չի սեպհակառնել իրեւ շարք: Այդ հանդաւանքը կարողէ առիթ լիւնել շատ դառն զդացնանց. եթէ մենք մտաբերում ենք մի ոտանաւորի միջից միայն միտող և չենք կարողանում պարզ յիշել ոչ նախընթաց և ոչ յաջորդ տողերը, այն ժամանակը մեր վերայ տիրում է շփոթման դառն զգացմունքը:

§ 22. Վերջ:

Եթէ ՚ի վերջոյ մի որ և է շարքի վերջեն անդամ մի կերպով անմիջապէս կրկին մանէ գիտակցութեան մէջ, այն ժամանակը ամբողջ շարքը կը վերարտադրուի միանուագ ու գէպի յետ, բայց աստիւծաննաւ նուազուող պարզութեամբ, վասն զի նա բոլոր նախընթաց՝ նուազուող մնացորդների հետ ձուլուածէ ՚ի մի ընդհանուր ամբողջական մտապատկեր և Գ. Գ. Բ. Ա., որևէ տեսնուում է վերեւ յստաջ բերած կազմապարից: Մտապատկերները այստեղ նմանուում են մի բացուող կծիկի: Ուստի և երեխաները, իսկ երբեմն նաև հասակուոր անձններ շատ դժուարանուում են բազմապատկութեան աղիւսակը, մի որ և է երգի ձայները, մի որ և է նախադասութեան բառերը կամ մինչև անդամ մի բառի տառերը բերանացի ասել յետելից դէպի առաջ, առանց նախընթաց վարժութեանց:

Ուստի և կարելի է ասել իրեւ օրէնք, որ շարքը բացւում է հետեւով կապակցութեան կարգին, այսինքն եթէ շարքի անդամները կապակցուած են միայն մի ուշղութեամբ, այն ժամանակը շարքը վերարտադրում է

միայն գէպի յառ աջ և ոչ գէպի յետ: Նարըի յառաջացութիւնը (յառաջ գնալը) կախուած է նորաբանած սկզբնականուղղութիւնից, իսկ յետախաղացութիւնը (յետ գնալը) հայթայթւում է գիտմամբ ու արուեստական կերպով. այստեղ մենք դիտմամբ ընտրում ենք ու առնուում մտապատկերի դեռ ևս չնսեմացած մասնը, իսկ գիտակցութեան մէջ ներկայ եղող մտապատկերը հալածում, որպէս զի այդ մնացորդի միջնորդութեամբ առաջուան ամբողջ մտապատկերը կրկին վերեւ բարձրանայ: Ուստի և միայն մի ուղղութիւն ունեցող շարքերը, 'ի միջի այլոց ուրեմն նաև ժամանակի շարքը, վերարտադրում են նոյնպէս միայն մի ուղղութեամբ: Ընդհակառակն տարածութեան շարքերի վերարտադրութիւնը ունի երկու ուղղութիւն, վասն զի այս շարքերը կարելի է կաղմել թէ գէպի յառաջ և թէ գէպի յետ: Այսուամենայնիւ դիտմամբ բազմից գէպի յետ գնալով ժամանակական շարքերը նոյնպէս կը ստանան այդ ընդունակութիւնը, այնպէս որ մենք կարող կը լինինք ամենայն հեշտութեամբ անցնել շարքը և գէպի յետ:

Եթէ յաջորդական կարդաւ ՚ի գիտակցութիւն մըտած բոլոր մտապատկերներն էլ նման են իւրեանց բուվանդակութեամբ, այն ժամանակը նոքա վերարտադրուում են բուլորը միտսին, հենց որ նոյանից մէկը մտաւ ՚ի գիտակցութիւն, վասն զի նոքա բոլորեքեան սերա կապակցուած են դիտակցութիւն մտածի հետ իւրեանց բովանդակութեան հաւասար մասներով: Ուրեմն ենոքա կազմում են մտապատկերների մի խումբ: Նոյնաձայն բառերի շարքը վերարտադրում է ոչ թէ իրեւ շարք, այլ իրեւ նման մտապատկերների խումբ: Առանց մի որոշեալ կարգի միմեանց մօտ կանգնած բազ-

մաթիւ ծառերը, եթէ վերարտազրուելու լինեն, մեր
գիտակցութեան մեջ յիրեան կը գան իբրև մոտապատ-
կերների մի խումբ։ Ով որ զբօնել է մի այնպիսի փողո-
ցում, ուր բոլոր տները միմեանց նման են, նա առանց
վարժութեան դժուարութեամբ է կարող վերարտազրել
այդ տների շարքը իւրեանց սկզբնական կարգաւ, մինչ-
դեռ նա հեշտութեամբ կը մոտաբերէ աների մի խումբ։

§ 23. Առապատկերների շարքերի զանազան
կապակցութիւնը ու նորա նշանակութիւնը:

Ստապասակերների շարքերը կարող են զանազան կերպով միմեանց հետ կապակցուել.

1. Բաղմաթիւ շարքեր կարող են նոյնաժամանակ զանազան բարձրութեամբ անցնել գիտակցութեան միջնով, այնպէս որ նոցա անդամները միմեանց հետ կամ կապակցում են կամ ձուլում: Այսպէս ահա շօշափելեաց՝ մոտապատկերներն ու մկանունների զգայութիւնները կապակցում են տեսանելեաց զգայութեանց հետ, երբ մենք մի բան կամ մի տեղ ենք որոնում: այսպէս ահա թատերդութեան ժամանակ տեսածն ու լսածը միանում են ու կազմում մի տեսարան, աշակերտը իւր դասը սերտում է բարձր ձայնով, որպէս զի տեսածն ու լսածը կապակցէ մոտածածի հետ: Այս տեղ կապակցում են միմեանց հետ զանազան ծագումն ունեցող մոտապատկերներ ու զգայութիւններ, ուստի և նոցա կապը լինում է սերտ ու ամուր: մինչդեռ այդքան սերտ չեն միանում միմեանց հետ միևնույն ծագումն ու նեցող անդամները, օր: երբ մէկը նոյնաժամանակ շատ անձանց հետ սատրինջ կամ ճարտրակ է խաղում:

2. Գլւաւոր շաբքի անդամները երկրպահան շաբքերի համար կարող են ծառայել

իբրեւ սկզբնական կէտերը զվխաւոր ու երկրորդական շարքերի այդ կապակցութիւնը լինում է երկու տեսակի: Ասի՞ երկրորդական շարքերը կարող են միջնորդ լինել գլխաւոր շարքի՝ միմեանց յաջորդող երկու անդամների մէջ: Այսպէս ահա ընդհանուր պատմութեան գարագլուխները կազմում են գլխաւոր շարքը իսկ նոյն կապահցող մասնաւոր իրողութիւնները երկրորդական: Բայց երկրորդական շարքերը կարող են գլխաւոր շարքից ակիրքն առնել և ուղղորդ ուղղութեամբ վազել գէպի մի կողմ, ինչպէս օրինակ պատմական անցքերի ժամանակադրական դլխաւոր շարքը իւր զանազան կէտերում կարող է ձիւղաւորուել և կազմել ժամանակակից անցքերի երկրորդական անցքեր:

3. Բաղմաթիւ շաբքեր կարող են միամեաց հետ խաչութիւ, օր. Ա, Բ, Գ, Դ, Ե... և Խ, Կ, Ջ, Զ... ուր որ Գ գտնուում է թէ առաջին և թէ երկրորդ շաբքումը: Գ մանելով զիտակցութեան մէջ աշխատում է յառաջ կոչել Գ և Ե կամ Հ և Զ: Մի և նոյն այդ Գ (կամ մի որ և է ուրիշ մտապատճեր) կարող է գտնուել նաև հարիւրաւոր ուրիշ շաբքերի մէջ և ծառ ու այլ իրեւ ընդհանուր հատման կետ: Այդ օրինակ գէպշ քերում շաբքի արագ և ուղղեղ վերաբարդրութիւնը կախուած է միմեանց յաջորդող անդամների սերտ կապից, ուստի և շաբքի յաճախի կրկնուելուց: Repetitio est mater studiorum, կրկնութիւնն է մայր զիտութեանց: Յէ արդեօք շաբքի անդամները յօդուած են միմեանց հետ՝ ինքը ուստի, դա պարզ տեսնեում է նա մանաւանդ, երբ շաբքի անդամներից մէկը, օր. Գ գիտակցութեան մէջ եղած ժամանակը յանկարծ մտնում է մի նոր ընդդիմադիր մտապատճեր օր.Մ: Եթէ Գ և Գ անդամները թողիւ են կապակցուած միմեանց հետ, այն ժա-

մանակը նոր ներս մասած մտապատկերս Մ իւր ընդգիմազ-
րութեամբ արգելը կը լինի Դ—ի վերարտադրութեան, ուս-
տի և վերարտադրութիւնը կը խափանուի: Այսպէս ահա
յաճախ պատահումէ, որ մէկը իւր բերան սերտած ճա-
ռը ասելիս՝ յանկարծ կանգ է առնում ու շուարուած
մնում, եթէ օր. մանում է մի բարձրաստիճան անձն. զիրք
կարդալիս մի երկու միաք, որոնք պատկանում են նաև
մի ուրիշ շարքի, փոխում են մեր դիտակցութեան ըն-
թացքը դէպի մի ուրիշ կողմ: յաճախ մի վէպից մենք
անցնում ենք մի ուրիշ վէպի, եթէ առաջինի անդամ-
ները սերտ չեն կապակցուած միմեանց հետ և այլն:

Աերտ կապակցուած շարքի ոյժը ակնյանդիման յե-
րեան է գալիս, երբ նա անընդհատ մի անդամից անց-
նում է միւսին չնայելով, որ այս կամ այն անդամի զի-
տակցութեան մէջ ներկայ եղած ժամանակը յերեան են
գալիս նաև ընդդիմադիր մտապատկերներ: Ով որ օր. լաւ-
քննել ու սեպհականնել է իւրեան մի ճառ, նա չե կանդ
առնիլ ու շուարուած ֆնալ, եթէ յանկարծ մի անսպա-
սելի անցք պատահէ: Մենք կարող ենք անդիր սեւ մի
լաւ բերան սերտած ոտանաւոր և միւնոյն ժամանակը
շատ ուրիշ բանների վերայ մտածել:

Վտապատկերների շարայցարութիւնը մեր հոգեոր կե-
նայ զարդացման համար մեծ նշանակութիւն ունի: Ինչ
որ առաջ առանձնացած ու ցրուած էր, նա սերտ կա-
պակցում է միմեանց հետ. իւրաքանչիւր մտապատկեր
գտնում է իւր ամուր տեղը մի սերտ յօդաւորուած ամբող-
ջութեան մէջ, որի միջնորդութեամբ նա կարողանում է
հեշտութեամբ հասնել վերարտադրութեան: Այդպէս ա-
հա մենք մեզ չենք կորցնում ու շփոթւում այն բազ-
մաթիւ առարկանների մէջ, որոնք ներկայացնում են մեզ
մի ահազին շնութիւն (օր. համաշխարհական հանդէս-

ները), մի լայնասարած մտապատկեամին կամ ծառողի,
բայց նաև այն բազմաթիւ զաղափարների մէջ, որոնցից
կազմում է իւրաքանչիւր զիտութիւն: Յայտնի է, որ զի-
տակցութեան անձկութիւնը մեզ թոյլ չե տալիս միան-
գամից բմբանել մտապատկերների անմիւր բազմութիւն.
ուստի և որպէս զի մենք կարող լինինք տիրել բազմա-
թիւ մտապատկերների, հարկաւորէ որ նոքա կապակ-
ցուին միմեանց հետ և կազմեն բարեյօդ շարքեր, և որ
շարքի սկզբնական անդամների վերարտադրութիւնը մեզ
ձեռնհաս կայութեամբ հեշտութեամբ ու անխափան հաս-
նել շարքի ամենահեռաւոր կէտերին:

Շարք երի հիւսուածքի միջնորդութեամբ մը-
տապատկերների շարժողութիւնը կանոնաւորումէ, վասն
զի վերարտադրութիւնը այնուհետեւ հանդիսաւ տեղի է
ունենում այս կամ այն ուղղութեամբ, նայելով թէ
շարքերի հիւսուածքը նորան ինչ ճանապարհի վերայ է
մատնանիշ լինում: Գիտակցութիւնը ստանում է իւր
յատուկ ու մշտական բնաւորութիւնը այն հանգոյցնե-
րից, որոնցից ճառագայթածն ծագում են բազմաթիւ
շարքեր, վասն զի նոքա են այն կենդրունները, որոնց շուր-
ջը ժողովւում են բազմաթիւ մտապատկերների շարքեր և
կազմում սերտ կապերով յօդաւորուած մի ամբողջու-
թիւն: Այդ հանգոյցների մէջ են նատած մարդոյս ամե-
նասիրելի մտապատկերները, ձգտութենն ու կրքերը: Այդ
հանգոյցներից ծագող շարքերը դիմում են դէպի առա-
ւել բարձր կենդրուններ և այդպէս կազմում զանազան
շրջաններ: Այդ բոլոր շրջանների ամենաբարձր կենդրոնն է
այն տեղը, ուրոր նատած է մարդոյս և ըլ: Այսուղ հար-
կաւոր է նկատել նաև, որ ոչ այն սարադրեալ հան-
գոյցները և ոչ էլ այս վերնազոյն կենդրոնը շրջանին մի
համատառն զիրք, այլ ենթարկուած են բազմաթիւ փո-
փոխութեանց:

§ 24. Յիշողութիւն և մոռացութիւն:

Մտապատկերների վերաբարութեան վերայ հիմնուած է այն, ինչ որ կօջում ենք «յիշողութիւն»: Այսու ամենայնին խրաքանչիւր վերաբարութիւն գեռես չի կարելի կոչել յիշողութիւն, յիշողութիւնն է այն վերաբարութիւնը, որ բոլորովին անփոփոխ ու ամենայն ձշութեամբ բերումէ իւր հետ այն, ինչ որ կար մի ժամանակ գիտակցութեան մէջ: Ուրեմն՝ յիշողութիւնն է մտապատկերների անփոփոխ վերաբարութեան կարողութիւնը:

Յիշողութիւնը կատարելութեան է հասած, եթէ նա 1. չ է շտութեամբ է ըմբռնում, ուստի և վերաբարութեան համար չի պահանջում ոչ շատ ժամանակ խողդ կրկնութիւններ, ոչ էլ արուեստական հնարքներ, 2. իւր ստացածը ճշտութեամբ ու անփոփոխ մետք տալիս. 3. երկար ժամանակ կարողանումէ ամուր պահել ու յետ տալ խր ստացածը. 4. միշտ պատրաստ է ծառայութեան, այսինքն, իւրաքանչիւր անդամ առանց երկար ու բարակ մտածելու, հեշտութեամբ կարողանումէ վերաբարութիւնը իւր ստացածը. կ վերջոյ 5. կարողանումէ ընդունել ու վերաբարութիւնը զանազան տեսակ մտապատկերներ: Ուրեմն՝ կատարելութեան հասած յիշողութեան յատկութիւններն են հեշտութիւն, ճշտութիւն, տեղականութիւն, պատրաստական տնութիւն և մեծ տարածութիւն կամ բավանդակութիւն:

Յիշողութեան հեշտութիւնը կախուած է իւր օդական մտապատկերների բազմութիւնից ու նպատակայարմար լինելուց, վասն դի գոյանից իւրաքանչիւրը օգնումէ նույնացած մտապատկերներին կամ մտապատկերների շար-

քերին վերեւ բարձրանալու և գիտակցութեան մէջ մանելու: — Ինչ որ վերաբերումէ յիշողութեան ձշութեան, տեղականութեան ու պատրաստակամութեան, այս պիտի ասենք, որ դոքա կախուած էն մտապատկերների խրեանց յատուկ ոյժից և իւրեանց օգնական մտապատկերների բազմութիւնից և այն հանգամանքից, թէ որչափ սերտ է կապակցուած մի որոշեալ մտապատկեր մեր ունեցած միւս մտապատկերների հետ: Մտապատկերները մոռացութիւննից պաշտպանելու համար ամենապահով միջոցն է կապակցել նրանց մեր սովորական մտապատկերների հետ: — Յիշողութեան հարուստ բովանդակութիւնը ամենից առաւել պահանջումէ որ մենք բազմակողմանի կերպով ամուր սեպհականենք և պինդ պահենք զանազան տեսակ մտապատկերներ ու մտապատկերների շարքեր և այլպէս սեպհականացրածը օգնական մտապատկերների միջնորդութեամբ կապակցենք մեր սովորական մտաւոր շրջանի հետ:

Ամենասուր ու ամենամեծ յիշողութիւն մենք անհասկած ունինք այն բանի համար, ինչ որ մեզ ամենից շատ է հետաքրքրում, ինչեց որ մենք մի բան ենք սպասում: ընդհակառակն վատ յիշողութիւն ունինք այնպիսի առարկաների համար, որոնք զուրկ են նման ու հեշտ վերաբարելի մտապատկերներից: Ում մտաւոր շրջանը արմատացած է առաւել ընդհանուրի մէջ, նա հեշտութեամբ կը մոռանայ մասնաւորը, թէ և սա նորան մի բոպէ գրաւած էլ լինի: Ո՞վ որ ընդ հակառակն սովոր է գլխաւորապէս կանգ առնել մասնաւորի վերայ, նա չի կարող ամուր պահել իւր յիշողութեան մէջ ընդհանուրը: Այն առանձին յիշողութիւնները, որոնք առ հասարակ վերաբրում են բնասուր ընդունակութեան, ինչպէս են օր տեղի, թւի, ձայնի, մաքի և այլն յիշողութիւնները, բու-

լորեքեան էլ կախուած են այն հետաքրքրութիւնից, որ
մարդս ունեցել է իւր մանկական հասակից սկսեալ: Ավ
որ մի բանի համար յիշողութիւն է ցանկանում, նա
թող պարապէ նորանով, և որչափ կարելի է իւր հետա-
քրքրութիւնը կենդրոնացնէ նորա մէջ, այն ժամանակը
դա նորան կը յաջողի:

Յիշողութեան հակառակին է մոռ ացութիւնը:
Մոռացիոտը չի կարողանում վերաբարել իւր ունեցած
մտապատկերները. այսու ամենայնիւ դա միայն մի ժամանա-
կաւոր գրութիւն է, վասն զի դա կախուած է, նորանից;
որ օդնական մոտապատկերները առաւել թոյլ են ու սա-
կաւթիւ, քան իւրեանց հակառակորդները: Վճէ մեզ
յաջողուի մի կողմ քաշել այդ հակառակորդներին, այն
ժամանակը օգնականները իւրեանց ոյժով կարող կը լինին
վերաբարել իւրեանց մոտապատկերը: Աւրեմն ոչ մի մոռ-
պատկերի համար չի կարելի ասել, որ նա բոլորովին մոռ-
ռացուել է, ինչպէս որ մի ծովը ընկած մատանւոյ համար
չի կարելի ասել, թէ նա բոլորովին կորել է: Թէև ա-
ռաջին դիպուածում մոտապատկերի, իսկ երկրորդ դիպուա-
ծում մատանւոյ ձեռը բերելը շատ դժուար է, սակայն
ոչ բոլորովին անկարելի: Գնի մէջ յերեան են զալիս այդ-
օրինակ մոռացուած մտապատկերի, և յաճախ
զարմանալի պարզութեամբ, այդ մի և նոյնը անդի է ունե-
զաւակատեսութեան (քնայածութեան) մէջ և
մահուան բոպէներին:

§ 23. **Յիշողութեան տեսակները:**

Բերան առնել կը նշանակի, դիտմամբ իւրեան սեպ-
հականնել մոտապատկերներ կամ մոտապատկերների շարքեր:
Աւրեմն բերան առնելը ոչ այլ ինչ, եթէ ոչ դիտակ-

յաբար ու դիտմամբ անել այն, ինչ որ տեղի է ունենում
մտապատկերների յօդաւորութեան մէջ: Բայց նայելով թէ
ինչպէս ենք յօդաւորում ու սեպհականնում մտապատկեր-
ները, յիշողութիւնը լինումէ. մեք ենական, որ ա-
միտ կամ արուեկ ստական ու խելացի:

Մեք ենական յիշողութիւնը հիմնում է
ժամանակակցութեան ու յաջորդութեան օրէնքի վիրայ:
Սենք մեքենապէս բերան ենք առնում, եթէ մի և նոյն
մտապատկերները կամ մտապատկերների շարքը դիտմամբ
սկզբան կրինում ենք, որ նոքա ձեռնհաս են դառնում
ընդդիմոգրել հակառակորդ մտապատկերներին: Այն երե-
խան, որ պիտի խմանայ, թէ չանցն կը նշանակէ հաց,
քամեն քար և այն, պիտի այնքան կրինէ այդ բառերը,
մինչև որ գորա 'ի վերջոյ գտնան նորա ամուր սեպհա-
կանութիւնը: Ուսւերէն բառը միանումէ հայերէնի հետ
ժամանակակցութեան կամ յաջորդութեան օրէնքով:
Այսօրինակ բերան առնելը շատ անհիմն, ուստի և շատ
անհաստատ է, վասն զի այստեղ երկու առանձին մտա-
պատկերների մէջ չկայ ոչինչ ներքին յարաբերութիւն,
այսու ամենայնիւ նա անշուշտ հարկաւոր է այնտեղ, ուր
մտապատկերները կապակցում են միմեանց հետ լոկ միայն
պատահմամբ, ինչպէս է օր. անկապ ու կցկոտուր տեղե-
կութեանց, բառերի, թռուերի, անունների, կանոնների և
այլն բերան առնելը: Այսօրինակ բերան առնելը յաճախ
մնումէ միակողմանի, եթէ անդամները միմեանց հետ
այդպէս յօդաւորելիս, նոյցա կարգը չփոխուի: Այդ դի-
պուածում երեխան օր. չի կարող ասել թէ ուուսերէն
ինչպէս է ահաց, մինչդեռ չանցն կարգացած ժամանակը
հեշտութեամբ կը մատրել, որ գա հաց կը նշանակէ: Նթէ
հեշտութեամբ կը մատրել, որ գա հաց կը նշանակէ: Այս

Հարցմանս. ողբան է 7×8: Բայց եթէ նորան հարցնեալ լու լինենք մի ուրիշ ժամանակ, 8×7, նա կանգ կ'առնէ: Եւ արտադրութիւնը ասելուց առաջ 8×7 կը փոխէ 7×8, կամ թէ նա կը սկսէ շարքի սկզբնական անդամից (իւր մոլումը) 7×7, 7×8=56:

Արամիտ յիշողութիւնը կապակցում է մի-մեանց հետ այլասեր ու բռորովին առանձնա-ցած մտապատկերները մի որ և է արօւեստական, բայց միշտ սրամիտ միջոցաւ: Այստեղ լնդհանուր կանոնն է նմանութիւն և աննմանութիւնը: Գորա հա-մար ամենից առաջ հարկաւոր է սրամութիւն, վասն զիզա այն կարողութիւննէ, որով մարդս աննման իրերի մէջ գըտ-նումէ նմանութիւն: Սրամիտ յիշողութիւնը փորձ է փորձում ներքուստ կապակցել միմեանց հետ երկու ան-նման մտապատկեր, օր. Ա. և Բ, մի ուրիշ, Գ, մտապատ-կերի միջնորդութեամբ, որ թէ Ա. ի և թէ Բ. ի հետ մի որ և է նմանութիւն ունի:

Այդ արուեստական յիշողութիւնը առաւել օգտա-կար է համարում գործադրել թուերի վերաբերու-թեամբ, վասն զի զոյա ու գաղափարի մէջ չկայ մի որ և է բնական կապ, որով կարելի լիներ անջինջ պահել մոքումը մի յայտնի տարեթիւ: Նաևոլէն Ի կարող էր ծնուել թէ 1770 և թէ 1769 թուն: Օտոյ թէ վէնտ-լովի հիմնած նոր արուեստական յիշողութիւնը նշա-նադրերին տալիս է թուանշանների նշանակութիւն, որոն-ցից և կազմում են այնպիսի բառեր, որոնց նշանակած թուերը հեշտութեամբ կարելի է կապակցել առարկայի զինաւոր գաղափարի հետ: Կա թուանշանները այսպիս էր վերածել նշանադրերի: 1 իւր ձեռվ յիշեցնում է մեզ ի, իսկ սա իւր ձեռվ նշանադրիս իս, սա իւրեւ կոկորդա-յին ձայն՝ յետադայ կոկորդային տառերս զ, չ, և այլն:

Այդպէս նաև մնացեալ թուերը: Յէւ այդ արուեստա-կան օգնութիւնը ամենուրեք չի կարել առանց յիշողու-թիւնը ծանրաբեռնելու ու հեշտութեամբ զործադրել սակայն նա պատմութեանց աշխարհագրութեան, վիճակա-զըրութեան, բնագիտութեան մէջ մ. ծ ծառայութիւն է կա-րսղ մտացանել թուերը յիշողութեան մէջ պահելու համար:

Խելացի յիշողութիւնը հիմնում է մտա-պատկերների ներքին կապակցութեան վերայ. նա յերեան-է բերում մտապատկերների առ միմեանս ունեցած որա-կական յարաբերութիւնքը. և այդպիս կապակցում նոյա-միմեանց հետ զատողութեան միջնորդութեամբ, առանց զիմելու արուեստական յիշողութեան միջոցներին: Աւտոի-ն խելացի յիշողութիւնն է ամենահաւատարիմ ու ա-մենասպահով յիշողութիւնը: Ի հարկէ նա զործադրելի է միայն այն տեղ, ուր մտապատկերները ցոյց են տալիս ու-թէ մի պատահական, այլ հարկաւոր և իւրեանց բովան-դակութեան յատու կ մի կասկ: Սակայն նա չէ մի ուրիշ, երկու նախոնիթացներին ոչինչ նմանութիւն չըերազ յիշո-ղութիւն, այլ նա է նոյնպիս վերաբագրութիւն, բայց այնպիսի վերաբագրութիւն, որ մտապատկերները կա-պակցում է միմեանց հետ իւրեանց ներքին կապով. նա է խելացի յիշողութիւն, վասն զինա անկորուստ պահում է այն, ինչ որ արժանի է գիտութեան: Յիշողութեան ամենամեծ օրէնքն է — «Quantum scimus, tantum memoria tene-
mus» — այնքան զիտենք, որքան ունենք մեր յիշողու-
թեան մէջ: Խելացի յիշողութեան միջնորդութեամբ ենք
մեր միաը պահում մաթեմատիքական ապացոյցները, ըմ-
բոնում պատմական անցքերի մէջ եղած կազն ու բնու-
թեան երեսիների փոփոխութիւնքը, որոնելով զոյա
պատճառն ու հետեւանքը: Եւ որովհետեւ հասկանալն ու-
րբոնելու խելքի գործն է, ուստի և այսուղ զործումն

միասին յիշողութիւնն ու խոհականութիւնը, և այս տեսակ յիշողութիւնը կոչում է խելացի:

Ուստի Մարդոյս մտաւոր մշակութեան աստիճանը չափելու համար չկայ մի առաւել նուրբ միջոց, քան թէ նորա իւր մէջ կրած բառդիրքը, նորա բառերի մտապատճենների հարսութիւնը: Ականաւոր ասնսկրիտագէտ Մակա Սիւլլէր գիտնականը յառաջ է բերում մի շատ հետաքրքիր իրողութիւն, բաղդատելով միմեանց հետ զանազան մատենագրերի և զանազան գասակարգի պատկանող անձանց գործ դրած բառերի քանակութիւնը: Անդիաշում մի ուսեալ անձն հազեւ է գործ գնում 3—4000 բառից աւելի: օրագրերի ու լրագրերի բառերի պաշարը նոյնպէս 6,000-ից չի անցնում: Հին կտակարանի մէջ համարում են ընդ ամենը 5,642 բառ: Հռչակաւոր հսկաբորները չեն գործ գնում 10,000-ից առաւել բառ: Միլտոնը ունի 8,000, Շեկսպիրը՝ այդ կողմից անդիաշի ամենահարուստ մատենագիրը, 15,000 բառ: Եղիպտացոց հիերոգլիֆները ցոյց են տալիս, որ այս երկրի իմաստունները հազեւ թէ ունեին 900 բառ: Աւրեմն որբան աղքատ պիտի լիներ մի եղիպտացի մշակի բառերի պաշարը: Անդիաշի մշակը, ինչպէս հաստատում է մի գիւղական քահանայ շատանանումէ ամենաշապէ 300 բառով: Այս իրողութիւնները տալիս են միայն մի գաղափար, թէ որպան է լինում հետութեամբ գործադրուող մտապատճենների պաշարը բայց ոչ առ հասարակ գործադրուող մտապատճենների գումարը:

§ 26. Յիշողութեան զարդացման ընթացքը:

Յիշողութիւնը ամեն մտաւոր զարդացման հիմն է, վասն զի նա է, որ կապակցելով միմեանց հետ

կազմումէ մի ամբողջութիւն մեր հոգեոր կենաց բազմաթիւ րոպէներից, որոնք հակառակ դիպուածում կը մնային առանձնացած ու առանց փոփոխակի յարաբերութեան: Յիշողութեան միջնորդութեամբն է մեր հոգեոր կենաց ներկան մանում բազմակողմանի յարաբերութեանց ու կապակցութեանց մէջ իւր բոլոր անցեալի հետ: Առանց նորան՝ մեր հոգեոր կեանքը փակուած կը մնար մտապատճենների նեղ շրջանում, որ բերում է իւր հետ իւրաբանչիւր առանձին ակնթարթ, ինչպէս որ այդ տեսնում ենք բազմաթիւ կենդանիների մէջ:

Բայց յիշողութիւնը մարդոյս զանազան հասակում ցոյց է տալիս մի նշանաւոր զարդացման ընթացք: Նորա գործողութիւնը հերոսութեան է հասնում մարդոյս մանկական հասակում: այդ ժամանակ նա ահազին քանակութեամբ նիւթ է ժողովում հոգեոյ բոլոր զարդացման համար: Արեխան իւր կետնքի առաջին երեք կամ հինգ տարիներում ուսանումէ կառավարել իւր մարմինը, առ զատ շարժուիլ իւր շրջապատող տեղերում, ճանաչել անթիւ իրեր իւրեանց զանազան յատկութիւններով, խումբեր ու շարքեր կազմել նոցանից, այդ ժամանակամիջոցում նա սեպհականումէ մայրենի լեզուի քերականութեան ու բառարանի էական մասնը, այնպէս որ ձան Պօլի հետ կարելի է ասել: «Մարդս իւր առաջին երեք տարին առաւել շատ է ուսանում, քան թէ երեք համալսարանական»:

Յիշողութիւնը պահպանումէ իւր այդ զարմանալի ոյժը նաև մանկական հասակի վերջին տարիներում, որով և երեխային ընդունակ է գործում հեշտութեամբ ուսանել երկու, երեք լեզու, սեպհականել անուններ ու թուեր և յարմարացնել իւր մարմինը զանազան արուեստների: Մանկութիւնը այն ժամանակամիջոցն է, երբ մանկան մէջ

տիրապետումէ մեքենական յիշողութիւնը, երբ նա յօւժարակամ իւր մէջ է ընդունում ինչ որ նորան տալին են, առանց հարցնելու օնչափէս» և «ինչո՞ւ»:

Առնկական հասակի, այն է՝ 12.րդ տարուայ հետ վերջանում են նաև մարդոյս բնական ու արուեստական առարկաներից առայցած մասապատկերները, որոնք եւ ամբարուելով յիշողութեան մէջ, պահւում են յաջորդ տարիների համար. մանուկը այդ հասակում կատարելապէս ուսել է իւր մայրենի լեզուի քերականութիւնն ու բառզիբը, գոյները, ձայները, անունները, թուերը, անձները ու իրերը—այս բոլորը նա այդ հասակում ժողոված է լինում իւր յիշողութեան մատեանի մէջ:


Երիտասարդութեան հասակում՝ յիշողութիւնը թէև քիչ է հարստանում իւր տարրերի, այն է՝ զգայաբանական մասապատկերներէ վերաբերութեամբ, բայց նա առաւել և տուաւել է ձոխացնումիւր ժողոված պաշարը, կապտիցելով այդ նիւթը միմեանց հետ և յօրինելով նորանոր պատկերներ, որոնց շնորհանութեան վերայ գործում են բայց յիշողութիւնից, նաև խոհականութիւնն ու երեակայութիւնը: Արիասարզը անցցնում է իւր տարիքը իւրեան ծանօթ զգայաբանական աշխարհաւում, այն աշխարհում որ նորան քիչ նոր տապաւորութիւններ է տալիս. ուսումնէ հիմնումէ մայրենի լեզուի՝ իւրեան լաւ ծանօթ ՅՅ նշանագրերի ու ձայների վերայ միայն այդ նշանագրերի ու ձայների միջնորդութեամբ նա ծանօթանում է, ամեղերական պատմութեան անցքերի, բնապատմական ու բնագիտական երեսյների և ուրիշ գիտութեանց հետ:

Առաւել անշարժ է գտնում յիշողութիւնը այս ական հասակում: Արդէն անցել է ժողովելու ժամանակը, մարդո այժմ իւր առաջուայ ժողովածը գործա-

դրում է ինքնազոյ դատողութեանց ու վճիռների մէջ: Այրական հասակում մարդս վերին աստիճանի դժուարութեամբ է ուսանուած մի նոր լեզու, մեծ աշխատանքով է պահում իւր յիշողութեան մէջ անուններն ու թուակը: Այսակում յիշողութեան թուրութիւնը միսնուանումէ ջղերի դիւրազգայութեան ու դիւրադրդութեան ազման հետ, այնպէս որ վաղուց արդէն անցած մանկութեան ապաւորութիւնները մասամբ իւր և այժմ են ցցյ ապահուառաւութիւնը քան թէ այս հասակում հայթհայթած մասապատկերները:

Ու բութեան հասակում՝ յիշողութիւնը ենթարկումէ մի արագընթաց քայլայման: Հինգ մոռացուածումէ, նորը այլ ևս չկ տպաւ որուած: Ըստ հանաւր մոռացութեան ջրհեղեղից իւրեանց գլուխները զուրս են ցցուած ինչպէս կղղներ միայն մարդոյս կենաց ամենածանրակիւր պատահարները, միայն նորա գիտակցութեան մէջ ամենից յաձախ գտնուած մասապատկերները: Այսուեղ նմանապէս շատ անգամ պատահումէ, որ զառամեալ ծերն առաւել հեշտութեամբ է մատրերում իւր մանկութեան անցքերը, քան թէ մի կամ երկու տարի առաջ պատահած դեպքերը:

Յիշողութեան իդէալական զարգացման ընթացքը շշափելի կերպով յանդիման է կացուցանուում յետագայ կերպով:



§ 27. Երեակայութիւն:

Մտապատկերները չեն վերաբուադրւում միշտ անփոփոխ, այսինքն՝ այն ձեռվ ու կապակցութեամբ, որով նորա երբեմն իբրև զգայութիւնք գիտակցութեան մէջ էին: Ընդհակառակին շատ անգամ պատահումէ, որ միքանի մտապատկերներ, թէւ ոչ որ ակութեամբ, այլ ձեռվ այնքան հեռանում են իրեանց նախնի զգայութիւններից, որ շատ թէ քիչ այլ ևս չեն նմանում այս վերջններիս:

Ուրեմն բացի մտապատկերների անփոփոխ վերաբուադրութիւնից, կայ և փոփոխուածը, որ առհասառակ կոչումէ երեակայող կամ ցնորող վերաբուադրութիւն, կամ որ նոյն է՝ երեակայութիւն կամ ցնորք: Ընդհանրապէս երեակայութիւն ասելով հասկացում է հոգւյ այն ընդունակութիւնը, որ փոփոխում է մտապատկերների նախնի ձեռ ու կերպարանքը: Իբրև մի պարզ ապացոյց, որ մտապատկերները միշտ անփոփոխ չեն մնում մեր մէջ, կարող է ծառայել այս իրողութիւնը, որ ամենայաջողակ նկարչին անգամ անկարելի է իւր յիշողութիւնից նկարել մի անձի պատկեր. բացի գորանից շատ հազիւ է պատահում, որ մենք կարողանանք ամենայն ձշութեամբ մտաբերել մի մերձաւոր ծանօթի երեսի գծագրութիւնքը՝ իրեանց առանձին մասներով և սոցա առմեանս ունեցած յարաբերութիւններով: Այնք դորա մէջ կը համոզուենք, եթէ բազգատենք մեր յիշողութեան պատկերը նոյն իսկ անձի հետ. առանձին գծագրութիւնը չեն վերաբուադրւում, իսկ նոցա տեղը բանում են որիշ այդ անձին ոչ յատուկ գծագրութիւնք: Այդպէս ահա երեակայութիւնը կերպարանափոխում է յիշողութեամբ սեպհականացրած մտապատկերները. նա չէ

ստեղծող, արդինաբերող ինչ այսինքն՝ նա չի յառաջ ածում մի նոր նիւթ, այլ ունի միայն մի գրօշող զօրութիւն. մտապատկերները այսուղ վերաբուադրւում են միայն ոչ այնպէս, ինչպէս նորա կազմուել էին ՚ի սկզբան: Ոչ մի երեակայութիւն, թող լինի միշեանգամ մենահամար մենահամար է ամառ ունեցած մտապատկերների նոր կապահումէ մի որ և է անձի ունեցած մտապատկերներն այս կապակցութեան մէջ: Վաղուց կազմուած մտապատկերների խումբերն ու շարքերը շատ թէ քիչ կերպարանափոխուածմեն կամ իւրեանց բաղը կացուցիչ մասներից մի բան գուրս ձգելով, կամ մի նորը ներս ընդունելով և կամ նոցա տեղերը փոփոխելով: Ուստի և մենք մի որ և է բանաւոր էակի ոչինչ կերպարանք պաշաճ չենք համարում, բացի մարդկային կերպարանքից: Ուստի և քանդակործը կամ նկարիչը միշտ նկարումէ կամ քանդակում մի մարզ, եթէ նա ցանկանումէ ներկայացնել Աստուած կամ հրեշտակ: Խրաբան, իւրիշ ուրիշ կերպարանք, օր. թեւեր, Ճիրաններ, սմբակներ և այլն, այդ պատճառաւ նորան թւումնեն, թէ բովանդակում է իւր մէջ այնպիսի մասներ, որոնք իւրեանց գաղտափարով չեն համապատասխանում խոհական էակի կերպարանքին: Խոկ մեծութիւնը, ընդհակառակին նա կարող է ստեղծել ինչպէս կամենումէ:

Ինչպէս որ յիշողութեան կատարելութիւնը հիմնեումէ նորա ծշութեան, տևողականութեան ու պատրաստակամութեան վերայ, այսպէս էլ երեակայութեան ամենամեծ առաւելութիւնը կախուած է նորա արդիւնքի նորութիւնից:

Երեակայութիւնը, որպէս և յիշողութիւնը, միա-

կողմանի է և հետեւում է ամեն մէկի իշխող մտապատճեների շրջանին: Ուստի և ամենաքանիքարաւոր բանաստեղծն անգամ կարող է զուրկ լինել երաժշտական երեակայութիւնից, նկարիչը՝ բառերի երեակայութիւնից և այն ևայլն: Ազ որ մի բանով սամափիկ հետաքրքրում է, նա փոքր առ փոքր ձեռն կը բերէ զորա համար յիշողաթիւն, և որովհետեւ սա մեր բոլոր դի առ շթե անց ու կարող ութեանց անհրաժեշտ հիմն է, ուրեմն նաև երեակայութիւն:

§ 28. Երեակայութեան նշանակութիւնը ուսման ու կրթութեան համար:

Երեակայութիւնը մի շատ ծանրակշիռ հոգեսր կարողութիւն է: Նա լայնացնում է մեր հոգեոր սեսութեան շրջանը, զուրս է գալիս մեր զդայութեանց ու փորձառութեանց քաշած սահմաններից և մանում կարել իրողութեանց հեռաւոր ու անտեսանելի շրջանը. Նա մեզ գնում է մի այնպիսի զրութեան մէջ ուր մենք երբէք չենք եղած, մեր առաջ զուրս է բերում այնպիսի առարկաներ, որոնք մենք երբէք չենք ըմբռնել մեր զդայարաններով: — Գորանով նա գառնում է մեր բոլոր հոգեոր զարգայման անհրաժեշտ պայմանը: Նա այն հոգեոր զօրութիւնն է, որին գիմնում է իւրաքանչիւր ուսումն և որի զործակցութիւնից է կախուած իւրաքանչիւր ուսման յաջողութիւնը: Վասն զի ուսումը զործում է բառով և աչքի առաջ չունի իւր ձառածը ըմբռնել տալ զդայարանների միջնորդութեամբ. Նա զործում է բառով այն է՝ թէական նշաններով և սպասում է, որ սանիկը այդ բառերին ուղեկցէ իւր մտապատճեներով: Այսու ամենայնիւ այն իրերը, որոնց վերաբերում են այդ

բառերը, նոր են սանիկի համար, վասն զի ուսումը հաշորդումէ նորան այն, ինչոր նա դեռ ևս չի իմանում: Այստեղ է ահա երեակայութիւնը ցոյց տալիս իւր զործունելով իւրեան ծանօթ շրջանում պատկերներ, որպէս զի զոյանից կազմէ նոր, ուսման միջնորդութեամբ արծարծած մտապատճեններ: Ինչպէս որ գրաշարը գրատուփերից առնումէ հարկաւոր նշանադրերը, որպէս զի նոյանից կազմէ ձեռագրի բառերը, այնպէս և երեակայութիւնն է ժողովում յիշողութեան մթերանոցից այն պատճենները, որոնք ուսումը բառերի միջնորդութեամբ աշխատումէ արթնացնել սանիկի գիտակցութեան մէջ: Սանիկը ըմբռնումէ ուսման բառերը, եթէ նորա երեակայութեան յաջողութէ շօշափելի, զիտելի հայուցանել այդ բառերը նոցա համապատասխան մտապատճեններով: Ուստի և աշակերտները իւրեանց երեակայութեան միջնորդութեամբ են ըմբռնում ամենայն ինչ, որ տալիս է ուսուցումը: Ուր որ սանիկը չի կարողանում լսած բառերը այդպէս շօշափելի կայուցանել իւրեան համար, այնտեղ նորա կը մնան դատարկ ձայններ, որոնք և աշակերտը կը սեպհականէ իւրեան միայն մեթենական յիշողութեան միջնորդութեամբ—այնպէս, ինչպէս որ այդ յաճախ պատահումէ ոքերան առնելիս: Եթէ ուսուցումը շատ անգամ վատ հետեւանք է ունենում, զորա պատճառն այն է, որ մանկան երեակայութիւնից չափազանց մեծ պահանջմունքներ են անում: Այն երեխաները, որոնք տեսել են միայն իւրեանց գիւղի կամ քաղաքի՝ յաճախ շատ միաձև շրջակայքը, աշխարհագրութեան դասի ժամանակ պիտի պատկերացնեն իւրեանց լեռներ, դաշտեր, ձորեր, անապատներ, ծովեր ու լճաներ, նաւարաններ ու նաւահանգիստներ. նոքա, որոնք տեսել են միայն մի քանի ընտանեկան կենդանիներ ու մի քանի բոյսեր, կենդա-

նաբանութեան ու բուսաբանութեան մեջ հազարաւոր
տեսակ կենդանիների ու բոյսերի անուններ պիտի ըմբռա-
նեն իւրեանց երեակայութեան պատկերներով, պիտի ու-
ղեցեն չայլի ու բէլի, Արայի ու Շամիրամի, Վարդանի
ու Չազկերտի պատերազմներին, մինչդեռ նոցա մտապատ-
կերների պաշարը յանդիման է կացուցանում միայն նո-
ցա փոքրիկ քաղաքի շատ անգամ ամենաչնչին քաղա-
քական յարաբերութիւնները:

Բայց երեակայութիւնը շատ ծանրակշեռ է ուսման
համար նաև այն պատճառաւ, որ նա մեր աչքերում ո-
րոշումէ առարկաների արժեքը, որով և ուղղութիւն
տալիս մեր ցանկութեանց ու կամքին: Նորա օգնութեամբ
մենք առարկաները երեմն պատճունում ու դարդարում
ենք, երեմն էլ այլակերպում ու եղջանում: Եթէ
դաստիարակը տիրումէ սանիկի երեակայութեան, նա
ուղղութիւն կը տայ նաև նորա կամքին. Եթէ նա օրի-
նակների ու վէպերի միջնորդութեամբ լքյնումէ մանկան
գիտակցութիւնը բարոյական պատկերներով, այն ժամա-
նակը նորա կամքն էլ ինքն ըստ ինքեան կը դիմէ դէպի
բարին: Պարզ է, որ մանկան երեակայութիւնը վատ,
ցած ու ցոփ մտապատկերներով թունաւորելը նորա բա-
րոյական քայլայման ու վատթարութեան աղեխւըն է: Եւ
այդ թունաւորութիւնը յառաջ է գալիս նորա շըջանից
ու ընթերցմունքներից, բայց ամենից առաջ օրինակից,
որի ներգործութեան ոյժը ամենից զօրեղ է:

§ 29. Ժամանակի մտապատկերը:

Ժամանակը հիմնումէ փոփոխութեանց վերայ: Եթէ
ոչինչ փոփոխութիւն չինէր, չէր լինիլ նոյնպէս և ոչինչ
ժամանակ. բայց ուր մի բան փոփոխումէ, այնաեղորշւումէ
նմանապէս և ժամանակը, երբ մէկը յերեան է գալիս իբ-
րե անցեալ, իսկ միւսը իբրե նորան յաջորդող: Եթէ մեր
մոքում ուրոյն ուրոյն ներկայացնենք երկու միմեանց յա-

ջորդող բան Ա. և Բ, օր. կայծակ և որոտումն, այդ դի-
պուածում ժամանակական ոչինչ չենք ստանալ. բայց
եթէ Բ.-ը գիտակցութիւն մտնելիս այնտեղ գտնէ Ա.-ը, այն
ժամանակը Ա.-ը մեղ կը ներկայանար իբրե նախընթացը
իսկ Բ իբրե Ա.-ին յաջորդող: Այդպէս ահա ժամանա-
կի մտապատկերը ենթադրումէ վերարտադրութիւն. Եթէ
չինչը վերարտադրութիւն, չէր էլ կարելի բաղդատել
անցեալ մտապատկերները ներկաների հետ, ուստի և մեղ
համար չէր էլ լինիլ ոչինչ ժամանակի: Եթէ ժամանակը
ենթադրումէ վերարտադրութիւն, ուստի և նա չէ ոչ
զգայութիւն, ոչ էլ զուտ դիտողութիւն, այլ նա է մի
այնպիսի մտապատկեր, որ կախուած է պատկերացնելու
ձևից, առանց ուշադրութիւն դարձնելու բովանդակու-
թեան վերայ: Պատկերացնելու ձևն է մտապատկերների լոկ
յաջորդութիւնը, որ և յերեան է դալիս իբրե շարք:
Ուրեմն և ժամանակի միջնորդութեամբ մենք պատկերաց-
նում ենք, թէ ինչպէս են յաջորդում միմեանց շարքի
անդամները: Ժամանակը ոչ այլ ինչ չէ, եթէ ոչ յաջոր-
դութեան շարք:

Ա. ստիպումէ մեղ յիշեցնել այն, ինչ որ ասուած
էր շարքերի մասին: Այնտեղ մենք տեսանք, որ եթէ մի
որևէ շարքում գործումէ միայն յաջորդական վերարտադ-
րութեան ձևը, այն ժամանակը շարքը վերարտադրումէ
սկզբից մինչև վերջը, ինչպէս որ այդ լինում է օր.
բերան արածի հետ, իսկ երբ ՚ի գիտակցութիւն է մըտ-
նում շարքի վերջին անդամը, այն ժամանակը բոլոր նա-
խորդները վերարտադրում են միասին, բայց աստիճանաւ-
նուագուող պարզութեամբ:

Ա. յժմ ներկայացնենք մեղ պատահարների կամ փո-
փոխութեանց մի շարք իբրե ժամանակական, այնպէս որ
թէւ մենք բոլորը յիշում ենք, բայց նոքա մի և նոյն ժա-
մանակուող պարզութեամբ:

մանակը մեզ ներկայանում են իբրև «անցեալ» ու «յաւ ջորդ», իբրև «առաջ» ու «յետոյ»: Ուստի և որպէս զի մենք ներկայացնենք մեզ ժամանակը, հարկաւոր է, որ յանդիման կացուցած պատահարների շարքը գտնուի երակու որոշեալ կէտի, այն է՝ սկզբնակէտի ու վերջակէտի մէջ տեղը: Եթէ մէկը յիշեցնէ մեզ օր. թէ այսօր մի տարի է անցել, այն ժամանակը յառաջ կը գայ նախ սկզբնակէտի մտապատկերը, այսինքն այն անցքերը, որոնք պատահէլ են այդ ժամանակամիջոցի սկզբում, այն է՝ առաջին օրերումը, առաջին ժամերումը ևայն: Սկզբնական կէտից սկսած անդամները մէկը միւսի ետեւից առանձին առանձին կը վերարտադրուին, բայց մի և նոյն ժամանակը նոքա բոլորեքեանք կ'երեւան մեզ միասին և անշարժ: Ուշ րեմ՝ մենք կարող ենք ժամանակի մտապատկեր կազմել միայն ժամանակակից ու յաջորդական վերարտադրութեան ընդհանուր գործակցութեամբ, այն է՝ եթէ լաւ յօդաւորուած յաջորդական մտապատկերներից Ա. Բ. Գ. Դ. Ե. կազմուած շարքից յառաջ գան մեր գիտակցութեան մէջ առաջին և վերջին անդամներս Ա. և Ե, այն ժամանակը նոքա երկոքեանն էլ կը վերարտադրեն իւրեանց մէջ տեղն ընկած անդամները: — Ա. յաջորդաբար կը վերարտադրէ յաջորդ անդամներս Բ. Գ. Դ. Ե, իսկ Ե՝ բոլոր նախորդները միասին, բայց աստիճանաւ նուազուող պարզութեամբ, այսպէս Ե Գ. Բ. Ա.:

Ուրեմն ժամանակական շարքի յատկութիւնն այս է, 1. որ բոլոր անդամները միասին աստիճանաւ նուազուող պարզութեամբ գանւումէն գիտակցութեան մէջ, 2. որ նուքա պարզում են շարքի ձևով և 3. որ այս պարզուիլ կարող է կատարուիլ միայն մի ուղղութեամբ, այն է Ա. — Ե և ոչ նոյնպէս դէպի յետ Ե — Ա: Ժամանակական շարքը ունի միայն սկզբն ու վերջ և չե կարելի յետ դառնալ

Ե-ից դէպի Ա. առանց խանգարելու նորա էութիւնը: Մի որ և է երգ մենք չենք կարող դէպի յետ երգել «Հայր մերը դէպի յետ աղօթել, հայոց թագաւորների անունները (մեքենապէս) դէպի յետ բերան ասել:

§ 30. Տարածութեան մտապատկերը:

Ժամանակ պատկերացնելիս, ինչպէս տեսանք, իւրաքանչեւր անդամը վերարտադրումէր յաջորդական մտապատկերից կաղմուած շարքի անդամները մէկը միւսի ետեւից, իսկ նախորդ անդամները ընդհակառակն՝ միասին, բայց աստիճանաւ նուազուող պարզութեամբ: Դուկ տարածութիւն պատկերացնելիս բացի դորանից իւրաքանչեւր անդամը պիտի ընդունուի իբրև առաջին, որ վերարտադրում է մէկը միւսի ետեւից ոչ թէ միայն յաջորդ, այլ նաև նաև նորդ անդամները:

Վեր առնենք շարքս Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է. դորամիջին անդամներից մէկը, օր. Դ, թէ մէկը միւսի ետեւից և թէ միաժամանակ պիտի վերարտադրէ որպէս Գ, Բ, Ա, այնպէս և Ե, Զ, Ջ, Է անդամներս: Որպէս զի նա այդ կարող լինի, հարկաւոր է որ շարքի անդամները գոնէ երաշուած լինին զիտակցութեան միջով, այն է՝ դէպի յառաջ, Ա. — Ե, և դէպի յետ, Ե. — Ա: Սա տեղի է ունենում օր. եթէ մէր շարժուող աչքի հայեացըը կամ մի հարթ բան շօշափող ձեռը մի որոշեալ ուղղութեամբ յառաջ ու յետ է գնում: Զգայութեանց յետախաղաց ընթացքովը նախորդ անդամները կը դառնան յաջորդ, այն է՝ կը կապակցուի Զ, Ե, Դ, Գ, Բ, Ա և Ա, անդամների հետ այնպէս, ինչպէս առաջ Ա. եր կապակցուել Բ, Գ, Դ, Ե, Զ, Ջ, Է անդամների հետ: Եթէ միքանի ժամանակից յետոյ վերարտադրուելու լինի Դ, շարք

քը կը վերաբուազրուի երկուստելք, նախ՝ միաժամանակ ու աստիճանաւ նուազուող պարզութեամբ, այն է՝ Դ, Գ, Բ, Ա, Ա, և Դ, Ե, Զ, Լ, և երկրորդ նաև մէկը միւսի եւ տեից կը համեն առաւել մեծ պարզութեան, նախ՝ Գ ու Ե, յետոյ Բ, ու Զ, 'ի վերջոյ Ա, ու Ե; Բայց եթէ մեր առաջ գուրս գալու լինին անմիջապէս վերջին անդամներս Ա ու Ե, այն ժամանակը գոցանից իւրաքանչեւը կը վերաբուազրէ բոլոր ֆնայածները թէ միւսին ու աստիճանաւ նուազուող պարզութեամբ և թէ յաջորդաբար, հասուցանելով նոցա առաւել ու առաւել բարձր աստիճանի պարզութեան: Այսպէս ահա շարքը, սկսած իւր վերջին երկու, այն է և ու Ե անդամներից, նոյնաժամանակ վերաբուազրումէ դէպի յառաջ ու դէպի յետ այդ երկուստեկան պարզութեան հետևանքը լինումէ այն, որ շարքի անդամները ընդհարուելով փոխանակ յառաջ գնալու, կանգ են առնում, որով և առաջա-ի ու յետոյ-ի մէջ եղած զանազանութիւնը բարձւում է միջից և ժամանակական, այն է՝ յաջորդական շարքից կազմւումէ տարածական շարք, որի մէջ իւրաքանչեւը անդամը ունի իւր որոշեալ տեղը: Այնուհետեւ շարքի իւրաքանչեւը միջին անդամ, օր. Ե, երեսումէ նախ Զ ու Դ, յետոյ Է ու Գ, Ը ու Բ և այլն անդամների մէջ, կարճ, այս նուհետեւ շարքը վերաբուազրումէ երկու ուղղութեամբ և լոկ ժամանակականից զանազանումէ նորանով, որ իւրեան մէջ չունի ոչինչ նախընթաց ու յաջորդ անդամներ, «յառաջ» ու «յետոյ», և որ նա ունի ոչ թէ մի սկիզբն ու մի վերջ, ինչպէս ժամանակական շարքը, այլ երկու սկիզբն ու երկու վերջ:

Մինչև այժմ, խօսելով տարածական շարքի վերայ, մենք ենթագրում էինք, որ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Լ... անդամներս իւրեանց յատկութեամբ անհաւասար են, վասն

զի հակառակ դիսկուածում, այսինքն եթէ նորա մինչեն միմեանց հաւասար, կարող էին ձուլուի թի մի գորեզ մը տապատիեր: Բայց ինչ է պատահում առեւօք, երբ աչքը նայումէ մի միազոյն տափարակի վերայ, կամ երբ մատը շփումէ մի հարթ, ամենուրեք միւնյոն բարկիմուռութիւնը ներկայացնող տափարակ: Այստեղ գոյներից ու ընդդիմագրութիւններից չեն ստացուիլ արդեօք բազմաթիւ համանման զգայութիւններ, որոնք և միանալով կը կազմեն մի ընդհանուր մտապատիեր:

Փորձը ցոյց է տալիս, որ այդ տեղի չի ունենում մի որ և է դաշտի համանման գոյնն ու համանման հարթութիւնը մեր զգայարաններով ըմբռնելիս, այլ որ դաշտը մեզ ներկայանումէ իբրև գաշտ, իբրև տափարակ: Եւ արդարեւ, երբ մենք մեր աչքը կամ մատը մի տափարակի երկայնութեամբ յառաջ ու յետ ենք տանում բերում, մեր հոգւոյ մէջ ծագումէ մկանունների շարք, օր. Ա, Ե, Ը, Շ, Զ, Ֆ..., որոնք և անդամ անդամ միանում են գոյների՝ յաջորդաբար յառաջ եկող ու նոյնանման յատկութիւն ունեցող զգայութեանց հետ ա, ա', ա'', ա''', ա''''..., այսպէս՝

ա, Ե, Ը, Շ, Զ, Ֆ...,

ա, ա', ա'', ա''', ա''''...,

Այսօրինուկ բազմաթիւ տարածութեան շարքեր, որոնք ծագում են հոգւոյ մէջ աչքի ու մատնի զանազան շարժողութեամբ, միասին կազմումնեն շարքերի հիւսուածք: Այդ հիւսուածքներից ծագումէ մտապատիւ դաշտ, տափարակ, որի մէջ անթիւ տարածական շարքեր խաչում են միմեանց հետ:

Ուրեմն ժամանակական շարքը ինչպէս տեսանք, փոխումէ տարածական շարքի, եթէ մենք ըմբռնում ենք շարքը ոչ թէ միայն Ա-ից դէպի Ե, այլ նաև Ե-ից դէպի Ա,

ուրեմն՝ եթէ մտապատկերները կապակցւում են միմեանց հետ երկու ուղղութեամբ։ Ով որ օր Վոլգայով ճանապարհորդել է միշտ մի ուղղութեամբ, օր Հաշտարխանից դէպի Ղազան, և երբէք դէպի յետ Ղազանից դէպի Հաշտարխան նոյն Ճանապարհով, նա կը մտարերէ Վոլգայի եզերքների տեսարանները ժամանակական շարքի ձեռով։ Նա գետի եղերբով ընկած տեղերը, գիւղօրայքն ու քաջները կը պատկերացնէ միայն մէկը միւսի ետեից, Հաշտարխանից դէպի Ղազան։ Մի ուրիշ պարզ օրինակ տալիս է մեզ նաև պատկերների սրահում ձեմելը; Զգայարանների միջնորդութեամբ այդ երկուստեք ըմբռնելը (ոչ թէ միայն դէպի յառաջ, այլ և դէպի յետ Ճանապարհորդելը, ձեռքով շփելը) կարելի է կացուցանում շարքը վերարտադրել թէ Ա-ից դէպի Է-ից դէպի Ա, որով և ոչնչանումէ ժամանակի յատուկ նշանը, այն է առաջան ու գյուղուն։ Այսպէս շարքի անդամներից մէկը, օր Գ, չե երեսում այլ ևս իբրև նշեց յետոյ ու Զայից առաջ երկող այլ իբրև նոցա երկուցունց մէջ զանուող այնուշետե շարքը վերարտադրումէ օր Դայից երկու ուղղութեամբ, դէպի յառաջ ու դէպի յետ, այնպէս օր Գ ու Ե վերարտադրում են միասին, իբրև Դայի դրացի անդամներ։

§ 34. Հիւսուածների կազմութիւնը, արտաքին երերը բազմաթիւ նշաններով. դիտողութիւն։

Թէև իւրաքանչիւր առանձին զգայութիւն մենք վերաբերում ենք մի առարկայի, վասն զի նա մեզ տալիս է

իրի մի որոշեալ յատկութիւնը, այն է՝ նորա գոյնը, ձայնը, ծանրութիւնը, հոտը ևայլն, սակայն զգացնից ոչ մէկը առանձին, առանց միւսերի հետ կապակցուելու, չի կարող տալ մեզ բազմաթիւ զգայարանական յատկութիւններ ունեցող իրի մտապատկերը, վասն զի իրի պատկերը կազմումէ միայն զանազան զգայութեանց միմեանց հետ հիւսուելուց։ Միայն երբ մենք տեմում ենք սպիտակ գոյնը, շօշափում բրտութիւնը ու Ճաշակում քաղցը համը, և երբ այս բոլոր նոյնաժամանակ ստացած զգայութիւններս կապակցում են միմեանց հետ և վերաբերում մի և նոյն առարկային, միայն դորանից յետոյ ենք ստանում մի կտոր շաքարի դիտողութիւնը։

Բազմաթիւ իրողութիւններ վկայում են, որ այսաւել տեսանելեաց զգայութիւնները բոլոր միւս զգայութիւններից նախադաս պիտի համարուին, որ նոքատ մասամբ մէջ դէր են խաղում և ամենուրեք մնացեալ զգայութեանց համար ծառայում են իրեւ կենդրոն, որի շուրջը և ժողովում են նոքա։ Բոլոր զգայարաններից աչքը առաւել հեռու է համեստ, նա ամենից առաւել շատ և առաւել արագ ու պարզ է ըմբռնում առանձին իրերը. տեսանելիքը ՚ի վերջոյ ստուգումէ ամենուրեք շօշափելեաց զգայութիւնները վասն զի մենք շօշափելեաց իւրաքանչիւր զգայութիւն ստիպուած ենք կապակցել տեսանելեաց պատկերի հետ, եթէ կամենում ենք շօշափելեաց միջնորդութեամբ ըմբռնածը պարզ պատկերացնել մեզ, առանց նորան տեսնելու։ Ուստի և իւրաքանչիւր զգայարանի յատուկ մտապատկերի միջնորդութեամբ միշտ վերարտադրումէ նախ և առաջ տեսանելեաց մրտապատկերը, և զանազան պարզ մտապատկերներից հիւսուած այդ մտապատկերների վերարտադրութիւնը համարեա միշտ սկսում է տեսանելեաց պատկերի արթ-

նանալովք; Առանով տեսանելեաց մտապատկերը իւրաքանչեւր այդ օրինակ հիւսուած, այն է՝ բարդ մտապատկերի համար դառնումէ այն արմատը, որի շուրջը խըմբառում են միւս զգայարանների զգայութիւնքը; Աչքի միջնորդութեամբ ստացած պատկերը յերեան է գալիս իբրև մի տարածական իր, իսկ միւս զգայութիւնքը, որոնք հիւսուած են նորա հետ և որոնք այդ պատճառաւ նորա հետ առաւել ամեւր են յօդուած, քան թէ ինքեանք են միմեանց հետ կտպակցուած, մնում են միշտ նորանից կցուած, նորա վերայ, ուստի և երեսում են իբրև իրի յատկութիւններ; Այսպէս ենք ահա տեսնում արտաքին բաղմանշան իրերը:

Մի որ և է իրից ստացած բոլոր զգայութեանց գումարը կոչումէ դիտողութիւն: Շաքարից ստացուած առանձին զգայութիւնները կապակցուելով միմեանց հետ, գիտակցութեան մէջ յառաջ են գալիս միշտ անբաժան և այդպէս կազմում շաքարի դիտողութիւնը; Ուստի և դիտողութիւնը չէ անմիջապէս տուած մտապատկեր, այլ ենթադրումէ զգայութիւններ, վերարտազրութիւններ, ժամանակական ու տարածական ձևեր, սեպհական մարմայ և արտաքին աշխարհի մտապատկեր: Աւրիշ է գիտութիւնը և ուրիշ զգայութիւնը: Զգայութիւնը գիտութեան առաջին, անմիջական ձևն է: Նա ոչ այլ ինչ չէ նշանակում եթէ ոչ, որ չերի գրգռ մունքը յառաջ է կօչում հոգւոյ մի որոշեալ դրութիւն: Հոգին զգումէ, ըմբռնում այն բոլոր զգայարանական դրգինները, որոնք ջղերի ու կենդրուական գործարանի միջնորդութեամբ հոգուն են հասնում: Ուստի և գիտողութիւնը չէ, ինչպէս զգայութիւնը, զգայարանների արդիւնք, այլ զանազան զգայութեանց հիւսուածք կամ համագրութիւն, որոնք իւրեանց անմանութեան

պատճառաւ կապակցում են ՚ի մի ամբողջութիւն, սակայն առանց բոլորովին միմեանց հետ ձուլուելու: Դիտողութիւնը ՚ի վերջոյ չի ներկայացնում ոչինչ ընդհանուր բան, այլ ուրոյն ուրոյն պատկերներ: Նա առանձին առանձին իրերի հոգեւոր պատկերն է: Ներբուստ ու արտաքուստ դիտած ժուղունս «սարեակ» է մի որոշեալ անհատ, որոշեալ զգնով, մեծութեամբ, կերպարանքով, ձայնով և այն ամենայն բանով, որ նորանից ստացել է դիտողութիւնը: Երբէք չի կարելի դիտել մի որ և է տեսակ ցոյց տուող գաղափար, օր, կենդանի:

Դիտողութեամբ վերջանում են զգայութիւններն ու զգայարանական մտապատկերները. այն նա կանգնած է բարձրադաս մտապատկերների շեմքի վերայ:

Գ. Լ. Ո. Ւ. Գ.

Խմացականութիւնն կամ խմացական կարողութիւնն:

§ 32. Մտածական կարողութիւն, խելք կամ խոհականութիւն:

Բարձրադաս մտապատկերների ծագումը կախուած է նորանից, թէ ինչպէս են մտապատկերները ընկերակցութիւնը կատարումէ անմիջական մտնում: Այդ ընկերակցութիւնը կատարումէ երկու մեծ սկզբունքով որոնք են.

- պատկերացրածի բովանդակութեան յատկութիւնը (նմանութիւն, աննմանութիւն, հակառակութիւն) և 2. ժամանակակցութիւնն ու դրանից կախուած շարայարութիւնը: Այս վերջին սկզբունքով մտապատկերների ընկերակցութիւնը լինում է

պատահական, արտաքին ու մեքենական, վասն զի մտապատկերները այսուեղ կապակցում են միմեանց հետ ոչ թէ այն պատճառաւ, որ նոքա իւրեանց բովանդակութեամբ ունին առ միմեանս մի ներքին յարաբերութիւն, այլ որովհեաւ նոքա բովորովին դիպուածով հանդիպել են միմեանց մեր գիտակցութեան մէջ: Այստեղ կարող են կապակցուիլ ամենանման ու ամենահակադիր մտապատկերներն անգամ: այսուեղ կազմում են մտապատկերների այնօրինակ կապակցութիւններ, որոնց ոչինչ իրական, ձշմարիտ բան չե կարող համապատասխանել: Եւ եթէ մենք թշյլ տանք մեր մտապատկերներին բովորովին ազատ շարժուելու, առանց մեզ բռնաբարելու կամ առանց մի որոշեալ նպատակ մեր առաջ գնելու, այն ժամանակը նոքա կ'ընդունեն այդ մեքենական ընթացքը, նոքա առանց մի որ և է հիման մի տեղից միւս տեղը կը ցատկուտեն և յառաջ կ'ածեն բովորովին օսար բուժի կապակցութիւններ: Ամենապարզ կերպով դա արտայայտում է երազների, զառանցանքների մէջ, որոնք և երբէք տեղի չեն ունենում արթուն ու առողջ դրութեան ժամանակ: —

Բովորովին ուրիշ է մտապատկերների այն ընկերակցութիւնը, որ հիմնում է պատկերացրածի բովանդակութեան յատկութեան վերայ, որ և նայն իսկ այդ պատճառաւ ներկայանում է իրեւ մի հարկ աւոր, ներքին ու տրամաբար ան գործողութիւն: Այստեղ մտապատկերների ընկերակցութեան շարժառիթն է ոչ թէ նոցա պատահական կապակցութիւնը, այլ այն տրամաբանական, ներքին յարաբերութիւնները, որոնք երբէք չեն փոփոխում և միշտ մնում են մի և նոյնը ամեն մարդոյ համար: Մտապատկերների այդօրինակ ընկերակցութիւնը ամենամաքուր կերպով արտայայտում է մտախոհութեան,

տրամաբանական վէճերի, գիտական գրուածների ու մաշթեմատիքական ապացոյների մէջ:

Եթէ պատկերացնելի մենք աչքի աւունք ունեք ունենում պատկերացրածի բովանդակութիւնը, այդ նշանակում մենք մտածում ենք: Ուրեմն՝ մտածել նշանակում է մտապատկերները կապակցել միմեանց հետ ըստ իւրեանց բովանդակութիւնը: Մտածութիւնը ամենապարզ կերպով արտայայտում է դատողութեան մէջ, որ խօսելով քերական լեզուով, և մի նախադասութիւն: Ով որ մտածում է, նա և դատում է, ով որ մտածելիս իւրեան ուղղեցոյց է բռնում մտածածի բովանդակութիւնը, նա ունի մտածական կամ սկզբանում անել այսինքն բովորովին անձնատուր է եղած միջնորդական վերարտադրութեան օրէնքներին հետևող մտապատկերներին, նա չի մտածում, ուստի և նա զուրկ է մտածական կարողութիւնից:

Բայց հասարակ մտածութիւնից հարկաւոր է զաւնազանել խելացի կամ խոհան մտածութիւնը: Ով որ խելք կամ խոհան ունենութիւն ունի, ով որ խելացի կերպով մտածում է, նա կարող է հաւասարապես լսել պատճառներն ու դոցա հերթուները և ընտապիս լսել դոցանից այն, ինչ որ յազմով է հանդիսանում: Տարդս իւր խելքովը, իւր խոհանութեամբն է անջատում անսատուններից: Խոհանութիւնը մարդկային ցեղի ընդհանուր յատկութիւնն է: Բայց մարդս խելացի ու խոհական է դառնում միայն ուրիշ համանման էակների հետ ունեցած կենակցութեան, այն է միայն հասարակական մէջ: Վայրենութեան կամ մի առանձին սենեակի կեանքի մէջ: Վայրենութեան կամ մի առանձին սենեակի մէջ մեծացածները (ինչպէս կը գասպար Հառովերը) չեն հասնում խոհանութեան: Խելքի հակառակն է անհասնութեան:

ԽԵՂՔ ու թիւնը, որ ոչինչ պատճառ լսել չի ուզում կամ չի կարողանում: Այստեղից է ծագում ահա թէ մանկանց ու վայրենիների թուլութիւնը, որոնք չեն կարողանում, ազատ մնալ բովէական ազդեցութիւններից, և թէ կրօտների կուրութիւնը, որոնք գերի դառնալով իւրեանց կրքերին, չեն լսում ոչ խնդիրներ ոչ էլ խորհուրդ, ոչ խրատ ոչ էլ սպառնալիք, չեն լսում ոչինչ պատճառ: և ոչինչ հերքումն:

§ 33. Գաղափարների կազմութիւնն ու տեսակները

Գաղափարները մեզ չեն տուած մտապատճերների: Հետ միասին կամ առանց նոցա իրրե բոլորովին պատրաստի հոգեւոր իրողութիւնք, այլ նոքա ծագում են նորանով, որ ամենայն ինչ, որ յատուկ է մի առարկայի էութեան, այն է հաւասար յատկութիւնները մի անում են՝ ՚ի մի, իսկ ընդհակառակն անհաւասարները այսինքն պատահարար առաջինների հետ կապակցուած մասները բաժանաւում են նոցանից:

Գաղափարները լինում են անհատական և ընդհանուր: Անհատական գաղափարի առարկաներն են առանձին իրերը, իսկ ընդհանուրներ այն բոլոր իրերը, որոնք մի որ և է բանով համանման են, ուստի և կազմում են մի դասակարգ, թէ և նոքա ցրուած լինին տարածութեամբ ու ժամանակով:

Անհատական գաղափարները կազմում են դիտղութիւններից վերացուցման միջնորդութեամբ: Դնենք թէ երեխան մի և նոյն առարկան (մի վարդ) քանից անգամ ըմբռնումէ իւր զգայարանների միջնորդութեամբ (տեսանում, շօշափում, հոսոտում) զանազան հանդամանքնեւ-

րում, այն է՝ կողմնակի մտապատճերների հետ (գանգազան անօթների, սեղանի վերայ), պարտիզում և այլն) կապակցուած, այնպէս որ մտապատճերս և իւրաքանչիւր անդամ յօդաւորուել է ուրիշ մտապատճերների հետ, այն է, Մ, Զ, Հ, որով և կաղմուել են բարդ մտապատճերներս Ա.Մ, Ա.Զ, Ա.Հ. Ա.Յպէս ահա միաժամանակ ըմբռնածը կապակցուում է միմեանց հետ և իւրաքանչիւր նոր զդայութիւն յետ է բերում ՚ի դիտակցութիւն առաջուանը: Այդ դիտաւածում վերարտադրութեան յայտնի օրէնքով բազմաթիւ դիտողութիւնների կամ մտապատճերների մէջ եղած հաւասարը յերեան է գալիս անմիջապէս, իսկ գորա հետ կապակցուած անհաւասարը միջնորդաբար: Սակայն պատեղ միմնոյն ժամանակը առանձին մտապատճերների մէջ եղած անհաւասարը, այն է՝ Մ, Զ, Հ. Ա. Փոքր առ փոքր նսեմանումէ ու յետ մղում, մինչդեռ հաւասարը այն է՝ Ա, Ա, Ա, Ա, Հայելով անհաւասարի ընդդիմագրութեան, միանումէ, զօրանում և ՚ի վերջոյ յազմող հանգիստանում անհաւասարի վերայ: Այդպէս ահա Ա իւր հոգեբանական կապակցութիւնից ազատուելով բարձրանումէ դիտակցութեան մէջ և դառնում զաղափար:

Այդ հոգեբանական անցքի ընթացքում մտագրութիւնը կ են դրում է Ա.վերայ: Ա.յապէս ահա մանուկը բազմիցս դիտելով մտագրութեամբ հասնումէ իւր շրջապատղ իրերի գաղափարին, օր գաղափարիս այս վարդը, բայց ոչ վարդը առ հասարակի: Սակայն գաղափար կազմելու համար նա պիտի իւր մտքումը բաժանէ այդ վարդը նաև այն անօթից, որի մէջ նա գտնուում էր, և այն սեղանից, որի վերայ նա կանգնած էր:


Այդօրինակ գաղափարների կազմութիւնը շատ հեշտանումէ, եթէ առարկան շարժուն է: Երբ մանուկը

տեսնումէ մի որ և է առարկայ շարժուելիս, ուրեմն և
իւր շըջակայըր փոփոխելիս, նա հեշտութեամբ անջատում
է նորան գետնի երևից, որի հետ միասին էր նա տեսել
այդ առարկան, այսպէս օր. եթէ վերև յառաջ բերած
օրինակում հանենք վարդը իւր անօթից և շարունակ
տեղափոխենք ուրիշ անօթների մէջ:

Անհաւասարը առաւել ու առաւել է նսեմանում, որ-
քան յաճախ ենք մենք ըմբռնում մեր զգայարանների
միջնորդութեամբ կամ պատկերացնում մի և նոյն առարկան,
վասն զի այդ դիպուածում վերարտադրութեան միջնոր-
դութեամբ պարզ կերպով ՚ի զիտակցութիւն է մանում
իւրաքանչիւր հին զգայութիւնից միայն մի աննշան մաս-
նը, այն է համահաւասարը: Թէև միանգամ կապակցուած
մոտապատկերները այլ ևս միմեանցից չեն բաժանուում, սա-
կայն հաւասարը մի այնպիսի կշիռ ու առաւելութիւն է
ստանում անհաւասարի առաջ, որ շատ թէ քիչ (բայց
երբէք բոլորովին) առանձնանում է, հետանում այդ
վերջինից:

Ընդհանուր գաղափարներն էլ են ծագում
գիտողութիւններից վերացուցման միջնորդութեամբ: Եթէ
մենք մի առարկայի, օր. տների բազմաթիւ դիտողու-
թիւններ հայթհայթելուց յետոյ տեսնենք մի որոշեալ
տուն, այն ժամանակը նմանութեան օրէնքով կը վերար-
տադրուին նաև առաջուան տների մոտապատկերները, որոնք
և կը կազմեն շարքս ԱԲԳ, ԱԲԴ, ԱԲԵ... Ա.Յ. շարքի բոլոր
անդամները ունին մի ընդհանուր բազկացուցիչ մասն,
այն է՝ ԱԲ, որ ամփոփումէ իւր մէջ այն, ինչ որ ընդ-
հանուր է բոլոր մոտապատկերներին, այն է՝ տներից ստա-
ցած դիտողութիւններին, և զանազանուում են միմեանցից
միայն կողմնակի յատկութիւններովս Գ, Դ, Ե... Պարզ է,
որ այս գլխաւոր բաղկացուցիչ մասնի մոտապատկերը

ընդհանուր ընելով բոլոր անդամների համար, առանձին
ոյժ կը ստանայ մինչդեռ կողմնակի յատկութիւնները՝ հա-
կադիր լինելով: Կը նսեմանան ու դիտակցութեան շէմքից
յած կ'իջնեն: Պաղափարի կազմութիւնը ներկայացնուում
է այսպէս:



Պորանով կազմումէ նախ և առաջ մի ընդհա-
նուր մտապատկեր, որ այսու ամենայնիւ դեռ ևս վոքք ի
շատէ աղօտացած է այն կողմնակի յատկութիւններից,
որոնք սաւառնում են նորա շուրջը: Նա դառնումէ դա-
ղափար, միայն երբ վերացուցման միջնորդութեամբ մի
կողմն է քաշւում ամենայն ինչ, որ չէ էական ու յա-
տուկ նորան: Սակայն այդ վերացուցումը շատ հազիս է
յաջողուում և համարեա երբէք կատարելսպէս չի յա-
ջողուում: Ո՛վ որ օր. ուզումէ կազմել գաղափար շնու-
թիւն, նա պիտի պատկերացնէ իւր բոլոր երբ և իյէ տե-
սած տները, եկեղեցները, ապարանները, զօրանոցները, գիւ-
ղական բնակարանները և այլն: Որպէս զի այդ մտապատ-
կերներից անջատէ այն, ինչ որ ընդհանուր է նոցա բոլո-
րեցունց, և գորանից կազմէ ընդհանուր գաղափար ՀԵ-
ՆՈՒԹԻՒՆ: Սա իւր բովանդակութեամբ ուրեմն կախուած
է այն մտապատկերների շըջանից, որոնցից նա ծագումէ

և այն հանդամանքից, թէ այդ մտապատկերների շրջանում՝ ինչն է առաւել տիրապետում։ Մայրաքաղաքի բնակչե համար, որ իւր շուրջը տեսնում է ըստ մեծի մասին ապարաններ, ուրիշ բան կը լինի շնորթեան գաղափարը ուրիշ բան գիւղացւոյ համար, որի աչքերը բացի հիւղերից, ոչինչ չեն տեսել։

Հոգեբանական գաղափարները միշտ առաւել ու առաւել են ստանում մի որոշ դրութիւն, որչափ նոքա հեռանումեն անմիջական զգայութիւններից, այսինքն՝ որչափ նոքա ընդհանրանում են ու վերացական դառնում վասն զի նոքա բովանդակում են իւրեանց մէջ ոչ թէ այն, ինչ որ համանման զգայութեանց մէջ ընդհանուր է, այլ այն, ինչ որ ընդհանուր է միակերպ կազմուած մտապատկերների մէջ։ Այդ մեզ համար կը պարզուի, եթէ մի որ և է յայտնի եռանկիւնոյ դիտողութիւնը բաղդատենք կանոնաւոր եռանկիւնոյ ընդհանուր (այսինքն այդ օրինակ եռանկիւնիներից ստացած) մտապատկերի և առհասարակ եռանկիւնոյ, այսինքն նորա ձեւի հետ։

Որպէս զի գաղափարները ազատուին այդ անորոշութիւնից և համանեն որոշեալ ու ճշգրիտ գաղափարների, այսինքն՝ որպէս զի հոգեբանական գաղափարներից կազմուին տրամաբանական գաղափարներ, հարկաւոր է նոյս ենթարկել դիտական մշակութեան։ — Մեր սովորական, այն է՝ հոգեբանական գաղափարները շատ հեռի են տրամաբանական գաղափարներից։ Մենք հոգեբանական գաղափար ենք կազմում, եթէ դիտակացում ենք համասերի, հաւասարի, առաւելութիւնը, քան նորա հետ կապակցուած, սակայն նսեմացած այլասերը։ Հոգեբանական գաղափարը մեր մտածութեան մէջ յերեան է գալիս իւր տրամածութեամբ, իսկ տրամաբանականը իւր բովանդակութեամբ։ Տրամաբանական մտքով

առած իւրաքանչեւր գաղափար միայն մի անգամ է կարող յառաջ գալ, իսկ հոգեբանական մաքով՝ այնաքան անգամ, որքան մտածող էակ կայ։ Ըստ այսմ և իւրաքանչեւր ոք ունի իւր յատուկ հոգեբանական դաղափարը եռանկիւնոյ, մարդոյ, ծառի և այլն վերայ։ Այդ ճշմարտութիւնը ակնյանդիման է կացուցանուում յետագայ վէպով։ «Մի խելացի մանուկ պառկած էր մի կազմնոյ տակ։ Գալիս է մի մարդ և ծառի մօտովն անցնելիս՝ ասում։ — Ի՞նչ փառաւոր շնորթեան փայտէ։ — «Բարի՛ լոյս, պարոն հիւմն, բարեւեց նորան մանուկը։ Մի ուրիշը գալիս է և ասում։ — Ի՞նչ փառաւոր կեղեւ է։ — «Բարի՛ լոյս, պ. խաղախորդ։ — Մի երրորդը բացականչումէ։ — Ի՞նչ փառաւոր նկարելու տերեներ։ — «Բարի՛ լոյս, պ. նկարի՛։ — Այդ երեք անձինք էլ մտածում են կազմնոյ մտապատկերի վերայ, սակայն նոցանից իւրաքանչեւրը միւնոյն ժամանակ մտածումէ նաև մի որ կեղեւի բանի վերայ։ Կազմնին տեսնելով մէկը իւր ուշագրութիւնը դարձնումէ նորա փայտի, միւսը նորա կեղեւի և այլն վերայ այն պատճառաւ, որ նոյս կազմնուց ստացած ընդհանուր պատկերը կազմնուած է այդ օրինակ դիտողութիւններից։ Բայց տրամաբանական գաղափարը մէկ է բոլոր մտածողների համար, և որպէս զի կազմուի մի տրամաբանական գաղափար հարկաւոր են 1. որ առ ձեռն պատրաշտ լինին այնպիսի մտապատկերի բարձր որմանք թէ կ զանազան առաջանաւում մենց միմեանցից, սակայն ունին իւրեանց համանման, ընդհանուր յատկութիւնները, 2. հարկաւոր է այդ մտապատկերներից անջատել, հետո ապանել զանազանը և վերացուցանել համահաւասարաց 3. այդ ընդհանուր յատկութիւնը ենթարկել մըշտախուն 4. ընտրել այն ընդհանուր յատկութիւնները, որոնցից պիտի կազմնուի մի ամբողջութիւն, այսինքն՝ որոշ և առհասարակ ել ընդհանուրը 5. միացած

նել այդ ընդհանուրը և կազմել մի ամբողջութիւն; Այդ պէս օր, այն ժամանակի ես կունենամ եռանկիւնոյ տրամաբանական գաղափարրա երբ ոչնչն ուշադրութիւն չդարձնելով առանձին եռանկիւնիներին յատուկ նշանների վերայ, ընտրեմ միայն այն, ինչոր ընդհանուր է բոլոր եռանկիւններին, և գորանից կազմեմ մի ամբողջութիւն; Եռանկիւնին կարող է սկարած լինել թանաքով, կաւիճով, մատիտով, զանազան գոյնի թղթի, փայտի, քարետախտակի և այլն վերայ, մենք կարող ենք եռանկիւնիները միայն մեզ պատկերացնել նոքա կարող են հաւասար լինել կամ անհաւասար, հաւասարները կարող են հաւասարակողն լինել կամ անհաւասարակողն. ուղղանկիւն կամ թիւրանկիւն և այն; Բայց եթէ մի կողմ քաշենք ոյս բոլոր առանձնայտկութիւնները, այն ժամանակը կը մնայ յետագայ երկու նշանու. ա, հարթ ձև, բ, եռակողն: Կայս այժմ կը ստանանք եռամբարձնական գաղափարը:

Այդպէս ահա հոգեբանական գաղափարը հակառակ տրամաբանականին յողդողդ է, երերուն ու անհաստատ և որովհետեւ մենք մտածումենք միշտ հոգեբանական գաղափարներով, ուստի և պարզ է, թէ ինչն այնքան խախուտ ու անհաստատ են զանազան մարդկանց և զանազան ժամանակների դատողութիւններն ու կարծիքները; Խրաբանչեւր մարդ և իւրաքանչեւր ժամանակամիջոց ունի իւր յատուկ գաղափարները միենայն առարկայի վերայ; Գաղափարները զարգանում են մինչև անդամ մարդոյս կենաց ընթացքում. երիտասարդի ու հասակաւոր մարդի գաղափարները ուրիշ են՝ մանկանք ուրիշ, աստեղաբաշխը ուրիշ գաղափար ուրիշ, այսպէս և առաքինութեան ու հայրենաց գաղափարը Սոկրատի համար ուրիշ էր, իսկ նորա ամբաստանողների համար ուրիշ:

§ 34. Լեզու և գաղափար:

Թէև գրաւոր ու բանաւոր լեզուն գաղափարներ կազմելիս մեծ ծառայութիւն է կարող ցոյց տալ սակայն նորա տուած օգնութիւնը միայն մինչև մի որոշեալ կէտէ օգտակար այդ նպատակին. միւս կողմից նա վնասակար է հանդիսանում բոլորովին արգելք լինելով գաղափարների առաւել նուրբ մշակութեան: Որովհետեւ իւրաքանչիւր գաղափար միշտ կազմւում է նախ և առաջ առանձին համանման դէպքերի գիտողութիւններից, ուսի և նա սկզբումը ոչինչ չե կարող իւր մէջ բովանդակել բայց նորանից, ինչ որ ընդհանուր է այդ սակաւաթիւ դէպքերին: Սակայն այսպէս կազմուած հոգեբանական գաղափարի բովանդակութիւնը չէ գեռ ևս բոլորովին ամուր ու անփոփոխ. նա կարող է հարստանալ նորանոր զգացութիւններով: Եթէ օր. մէկը տեսել է միայն հարթ (Ոլուկ) եռանկիւնի, այն ժամանակը նորա՝ եռանկիւնոյ վերայ ունեցած գաղափարը թերի ու անկատար կը լինի: Բայց երբ փորձով նա իմանայ, որ կան նաև գնտաձև եռանկիւններ, որոնց մէջ անկիւնների գումարը առաւել մեծ է, քան երկու ուղղանկիւն, այն ժամանակը նա կը կատարելագործէ, կը լրացնէ իւր առաջուան թերակատար գաղափարը: Ուստի և գաղափարն ու բառը նոյնանշան չեն: Գաղափարը յողդողդ է, տատանուող, քանի որ նա չի համապատասխանում տրամաբանութեան պահանջներին, իսկ բառը հաստատուն է ու անփոփոխ: Բառի ու գաղափարի մէջ եղած զանազանութիւնը ամենից չօշագիլի կերպով յերեւան է գալիս մարդկային մոռածութեան պատմութեան մէջ. շատ առ ածութիւն, ժամանակ, պատճառ, ներգործութիւն, գոյսութիւն և ուրիշ այդ օրինակ բառերը չունին ոչինչ պատմութիւն

այն օրից, երբ նոքա լոյս են տեսել, իսկ տարածութեան, ժամանակի և այլն գաղափարները ունին շատ խայտախարիւ ու բազմափոփոխ պատմութիւն։ Բայց ոչ թէ միայն այդ-օրինակ բնազանցական, այլ փորձական (էմպիրական) կոչուած գաղափարներն անգամ ունին մի այդպիսի պատմութիւն։ Կրակ, մետաղ, մեքենայ և այլն բառերս և այսօր միենոյն են, ինչ որ էին սորանից շատ դարեր առաջ, սակայն կրակ, մետաղ, մեքենայ և այլն գաղափարներս բազմիցս փոփոխուել են պատմութեան ընթացքում։

Բայց մտածութեան ու խօսելոյ առ միմեանս ունեցած այդ յարաբերութիւնը հաստատում են նաև ուրիշ շատ իրողութիւններ. մենք բազմիցս մտածում ենք առանց բառերի և ուղիղ այնոտեղ, ուր մենք ամենից խոր պիտի մտածենք, այն է՝ տրամաբանութեան ու բնազանցական գիտութեանց մէջ։ Մենք բառերի հարկաւորութիւն չունինք նաև մտածութեան ստորին աստիճանների վերայ, ուսում առած համբ ու խուլերը բառերի տեղդործ են ածում իւրեանց մատները կամ նշանագրեր։ Երաժիշտար իւր միոքը արտայտում է ոչ թէ բառերով, այլ ձայներով։

§ 35. Դատողութիւն։


Ինչպէս որ տրամաբանական գատողութիւնն է կազմում մի հարցից ու մի պատասխանից, այսպէս և հոգեբանական գատողութեան մէջ կայ երկու ասախան, այն է՝ մտախոհութիւն ու վճիռ։ Դատողութեան արտայայտութիւնն է նախադասութիւնը, ուստի և իւրաբանչեր գատողութեան համար հարկաւոր են նախ և առաջ երկու մտապատկեր—Ա ու Բ—, որոնցից մէկը —Ա—է ենթական, միւսը—Բ—սառոգելին։ Սա-

կայն եթէ մենք ունենայինք միայն երկու մոտապատկեր, Ա ու Բ, այն ժամանակը նոքա կը կապակցուէին ՚ի մի ընդհանուր մտապատկեր ԱԲ, և երբէք նոցանից չեր կազմուիլ դատողութիւնս Ա է Բ։ Երբ ես տեսնում եմ մի անձն Ա և իսկոյն նորան ձանաշում իրբեւ իմ ընկերս Բ, այստեղ տեղի է ունենում երկու մտապատկերների պարզ ձուլմունք, առանց որ և է դատողութեան։ Դատողութիւն կազմելու համար բացի Ա ու Բ, հարկաւոր են և ուրիշ մտապատկերներ, այն է՝ Գ, Դ, Ե..., որոնք հաշկագիր են թէ առ միմեանս և թէ առ Բ և իւրեանց միջամտութեամբ արգելք են լինում Ա ու Բ միութեան, ինքեանք ցանկանալով միանալ Ա-ի հետ։ Այս մտապատկերներից իւրաքանչիւրը կը կապակցուէր Ա-ի հետ, եթէ միւսները չլինեին, և թէ Ա աշխատումէ փոխ առ փոխ մի սորա, մի նորա հետ կապակցուիլ սակայն այդ իսկապէս տեղի չէ ունենում։ Հոգւոյ այս դրութիւնը կոչում է մտախոհութիւն կամ երկմտութիւն, վասն զի այստեղ մենք տատանում ենք երկու մոքի մէջ—Ա է Բ կամ Ա չէ Բ։ Մտախոհութիւն է տեղի ունենում; Օր եթէ ես տեսնում եմ իմ ծանօթ անձններից մէկին առանց նորան խոյն և իսկ ձանաշելու։ Ես ուղում եմ նորան (Ա) ընդունել իմ Բ ծանօթիս տեղ, բայց յանշ կարծ ինձ թւումէ, որ նա կարող է և իմ ընկեր Գ կամ Դ, Ե... լինել։ Կամ թէ ես տեսնում եմ մի թոշուն նա իմ մէջ վերաբարդումէ ընդհանուր մտապատկերներս—սոխակ, արտցոյ, կտաւաբաղ և այլն. սկսում եմ ես խորհել այս ինչ թոշուն պիտի լինի, վասն զի նա կարող է լինել և այս և այն։

Մտախոհութիւնը այնքան երկար է շարունակուում, որչափ որ ստորոգելոյ մտապատկերներն են արագ արագ, մէկը միւսի ետևից բարձրանում ու հասնում մի և նոյն

աստիճանի պարզութեան: Նա վերջանում է յօդուածի
որոշեալ ստորոգելոյ օք. բ.ի. Հենց որ զիտակցութեան
մէջ յերեան է գալիս մի ուրիշ՝ նորան օդնական մի մտա-
պատկեր—Մ, որով և նա ձեռնհամ է դասնում գրաւել
զիտակցութիւնը և յետ մղել իւր հակառակորդներին—
Ֆ, Գ, Ե... Այժմ այլ ևս ոչինչ արդելք չի ֆնում Բ.ի.
Ա.ի հետ միանալուն, որ և յերեան է գալիս իրքեւ դա-
տողութիւնս Ա.է Բ. Այս է դատադութեան երկրորդ աս-
տիճանը, այն է վճռահատութիւնը:

Բազմաթիւ տորոգելիների այդ առ միմեանս ունեցած
յարաբերութիւնը մտախոհութեան աստիճանում կոչում
է կամարանալ, իսկ վճռահատութեան աստիճանում
գագաթնական առաջնական պիպուածում հակադիր մը-
տապատկերները կամարանում են, իսկ երկրորդ գիպուա-
ծում նոյսանից մէկն է միայն բանում զիտակցութիւնը,
այսինքն նորա դատաթնանում են: Դա ներկայացնում է
յետագայ կաղապարներովս:



Ա է կամ

Բ:

Ա է Բ:

Ճանա-

կամ

Գ:

Կամ

Դ:

Կայն.

Ա չ կամ

Ա չ Բ:

Ճանա-

կամ

Գ:

Կամ

Դ:

Կայն.

Ա չ կամ

Ա չ Բ:

Ճանա-

կամ

Գ:

Կամ

Դ:

Կայն.

§ 36. Եզրակացութեան ծագումն ու տեսակները:

Ըստ նմանութեան եզրակացութեան համելը
է ամենապարզ ամենաբնական, ուստի և ամենայաձախ
պատահուղ եզրակացութեան տեսակը: Նա կազմում է
մասամբ վերարտադրութեան՝ մեքենապէս ներգործող զօշ
րութեամբ, համաձայն մոքերի յիշողութեան ընթացքին,
մասամբ էլ զիտակցաբար ու մտախոհութեամբ, համա-
ձայն մոքերի արագաբանական ընթացքին: Դնենք թէ
մենք յաձախ զիտել ենք մի բարիացիոս անձի դէմքը,
երբ նա բարկացել էր: Վթէ այժմ նա ցոյց է տալիս մի
համանման դէմքը, տի ժամանակը ըստ նմանութեան
վճռում ենք, որ նա բարկացած է: Այստեղ կատարում
է յետագայ հոգեբանական զօրծողութիւնս. այժմեան
զիտակցութիւնս յառաջ է կոչում մի ուրիշ, իւրեան նման
յաձախ վերարտադրուածը, որի միջնորդութեամբ մտնում
է զիտակցութեան մէջ նաև զորա հետ յօդուած բար-
կութեան մտապատկերը: Մենք առհասարակ իւր-
բաքանչեւր առանձին առարկանում ենք մի վե-
րացական մտապատկերի, որ կազմուած է համեմատաբար
շատ սակաւաթիւ համանման դէպքերի զիտողութիւննե-
րից, և նորանից սպասում ենք այն, ինչ որ մենք համան-
ման դէպքերում նկատել ենք համանման առարկաների
վերայ: Վթէ օք. մենք գտնում ենք մի անձանօթ բոյս,
որ թէկ վազուց ծանօթ բոյսին շտա նման է, բայց
զանազանուում է նորանից մի քանի յատկութիւններով,
այն ժամանակը մենք ամենայն իրաւամբ եզրակացնում ենք,
որ գեռ ևս չզիտած նշանները համանման պիտի լինին
առաջինի յատկութեանց: Համանմանութեամբ հանած եղ-
րակացութիւնները միայն այն ժամանակն ունին զիտա-

կան արժէք, երբ նմանի քանակութիւնը շատ և շատ մեծ է, քան անմանինը:

Սակայն որչափ որ մեծ չլինի համանմանի քանակութիւնը, այսու ամենայնիւ տրամաբանութիւնը այդ համանմանութիւնը ընդունումէ երբե մի ըսկ ուղեցոյց, որ մատնանիշ է լինում այն ու զղութեան վերայ, որով մի առաւել ծանր մատիսհութիւն, մի առաւել խորին քըննութիւն պատճառ է լինում հիմնաւոր եզրակացութեան: Ուստի և համանմանութիւնը ծառայում է եզրակացութեան իբրև նախապատրաստութիւն ու հիմն: — Հոգեբանական եզրակացութիւնները ըստ մեծի մասին կատարում են մի այնպիսի արագութեամբ, որ գատողը չի կառողանում պարզ ըմբռնել գիտակցել այն հիմնը, որով նա հասել է իւր եզրակացութեան: Եթէ ստորին մտաւոր մշակութիւն ունեցող անձինք, նոս մանաւանդ փոքրիկ երախաններն ու կանայք այդքան յաճախ կարողանում են ուղեղ դատել դա համարեա միշտ կատարում է նսեմ ու աղօտ մտապատիքների միջնորդութեամբ: Եթէ այդ մարդկանց հարցնելու լինինք, թէ ինչու են նոքա այդպէս դատում, նոքա չեն կարող մեզ յառաջ բերել մի որ և է գոհացուցիչ պատճառ: Այս կողմից շատ զարմանալի է կանանց մտաւոր բնագգումը, որով նոքա առ հասարակ ուղեղը դտնում են առանց կարողանալու իւրեանց մտքերը տրամաբանական օրէնքների վերայ հիմնելու: Այս այդօրինակ մութ, հոգեբանական եզրակացութիւն շատ քիչ կարող է երաշխաւոր լինել դատողութեան ծշտութեան: Ուր պահանջւում է ամենամեծ ծշտութիւն, օր գիտնական համոզեցուցիչ ապացուցներում, տրամաբանական վէճերում և այլն, այնտեղ հարկաւոր է պարզ ըմբռնել այն պատճառներն ու հիմունքը, որոնցով մենք դատում ենք:

Պատողութիւնը տրամաբանութեան մէջ կազմում է երկու անդամից, որոնք կոչում են առաջին ու երկրորդ յառաջադրութիւն: Ահա այդ երկու յառաջադրութեան միջնորդութեամբ է դատողութիւնը հասնում իւր եզրակացութեան: Բոլոր եզրակացութեանց իբրև հիմն ծառայումէ հետեւել ձեւ:

Մ է Բ — Առաջին յառաջադրութիւն,
Ա է Մ — Երկրորդ յառաջադրութիւն,

Ուրեմն և Ա է Բ — Եզրակացութիւն:

— Առաջին յառաջադրութիւնը արտայացտումէ ընդհանուր օրէնքը (բոյսերը կանաչ են), երկրորդը մի որ և է մասնաւոր դէպը (խոար բոյսէ), որ և եզրակացութեան մէջ ենթարկում է ընդհանուր օրէնքին (ուրեմն — խոտը կանաչ է):

Այսու ամենայնիւ ընդհանուրից դէպի մասնաւորը յառաջ գնալը չէ համապատասխանում մնգերի հոգեբանական ընթացքին, վասն զի սա սկիզբն է առնում մասնաւորից: Ուստի և առաւել յարմար է վերե յառաջքերած հիմնական ձեի յառաջադրութեանց կարգը փոխել հոգեբանութեան մէջ:

Ա է Մ

Մ է Բ

Ուրեմն՝ Ա է Բ
ուր Մ ցոյց է տալիս Ա-ի մի յատկութիւնը, Բ է Մ-ի յատկութիւնը, Բ է Ա-ի յատկութիւնը:

Եզրակացուցանել իսկապէս նշանակում է մասնաւորը ենթարկել ընդհանուրին: Բայց որովհետեւ ինչպէս փորձը ցոյց է տալիս, մեզ տուած է միայն մասնաւորը, ուստի և այդ ընդհանուր դատողութիւնները պիտի ստացուին մասնաւորից: Տրամաբանական հայեցակետից նայելով այդ օրինակ (ինդուկցիոնական) եզրակացութիւնը միայն հաւանակութեան եզրակացութիւն է, հոգեբանական հաւ-

յեցակէտից՝ նա ունի ամենամեծ աստիճանի անձնական երաշխաւորութիւն։ Որ վազք արեգակը պիտի ծագէ, վասն զի մինչև այժմ ամեն օր ծագել է, այդ ամեն մարդի համար մի ճշմարտութիւն է, որ այնչափ ստոյդ է երևում որքափ և երկու անգամ երկու չորս սակայն այդ ճշմարտութիւնը հիմնում է միայն հաւանականութեան և ոչ արամարանական եղակացութեան վերայ։

§ 37. Ապաբերցեպցիոն, այն է իւրացուցումն։

Ինչպէս աեսանք, մեր հոգեոր կենաց առաջին պաշարը կազմում է զգայութիւններից։ Զգայութեանց փոխարձ ներդործութիւնից ծագում էն մոտապատկերների աեսակ տեսակ յօդաւորութիւններ, այն է՝ խումբեր ու շաբեր, որոնք կրկին կարող են մանել վարչապարձ աղքացութեան մէջ թէ՛ միմանց և թէ՛ նոր ներս մտած զգայութեանց հետ։ Այդ նոր ներս մտնող ու հին մտապատկերների խումբերի ու շաբերի փոխագարձ ներդործութիւնն ու դորան յաջորդող երկոցունց կապակցութիւնը, հոգեբանութեան մէջ կոչումէ ապապէ բարձիոն, այն է՝ իւրացուցումն։

Քննիք այժմ թէ ինչպէս է կատարում իւրացումը։ Դնենք թէ մենք ունինք հին մտապատկերների մի շարք Ա. Բ. Գ. Դ. Մ. (կարմիր վարդ), իսկ այժմ զգայաբանների միջնորդութեամբ ըմբանում ենք մի երկրորդը (սպիտակ վարդ), այն է՝ Ա. Բ. Գ. Դ. Ն. Չ. Ա. Յ. Դիմուածածում նմանութեան օրէնքով նոր շաբեր կը վերաբռնըրէ հինը, Ա. Բ. Գ. Դ. Ն. իք թէ երկու շաբերի մէջ միմեանց հաւասար են, դ և Գ. ընդգիրմակայ, իսկ մ. յ. և. ն. չ. այլազգի, որոնք միմեանց ոչ յետ են մղում, ոչ էլ զօրացնում։ Առաջինն հին մտապատկերներից կազմուած և

այժմ վերաբռնըրուած շարքը կոչումէ՝ իւրացուցանող, միւսը՝ նոր ըմբանած շարքը — իւրացուցանելի կամ աչքի առաջ ունենալով այդ հոգեոր մնցքի վախճանը — իւրացուցանութիւն։ Առաջնը, իրբեւ հինը առաւել սերտ կապակցուած է, ունի առաւել մէծ ոյժ ու տեղութիւն, միւսը ընդհակառակն, իրբեւ նորը — գիտակցութեան մէջ ներկայանում է, առաւել թոյլ երերունու փափոխական։ Երկու շարքերի կամ զանգուածների դիւ տակցութեան մէջ միմեանց պատահած ժամանսկը, հինը — իւրացուցանողը — համեմատաքար առաւել կը նսեման նայ, յետ կը մղուի, քան թէ նոր եկոզը — իւրացուցանութիւնն, — վասն զի սա — իրբեւ նոր ըմբանածը — կարող է միշտ նոր ոյժ ստանալ զգայաբանների շարտնակ գրդումնիքից։ Ուրեմն նոր ըմբանածը սկզբումը երեւում է տուաւել դործունեայ և նորա հինի վերայ ունեցած աղքեցութիւնը յաձախ մեծանումէ ու բարձրանում մինչեւ ոգւոյ յուղաման, եթէ նա յանկարծուածնապատճենի կերպով է զիւտակցութիւն մանտում (օր. երբ մէկը բարկանում է կամ երկնչում)։ Այսու ամենայնիւ այդ դրութիւնը երկար չե շարունակում այլ ջրաւով դորան յաջորդում է ընդդիւմադրութիւն հին մտապատկերների կազմից, որով և յետ է մղում նոր ըմբանածի խանգարող աղքեցութիւնը։ Այսու հետև հին մտապատկերները բանում են գիտակցութիւնը, փոփոխում նորը և իւրացուցանում։

Այս խորհրդածութիւնից յետոյ կրկին դառնանք մեր շարքերին և տեսնենք, թէ դորանից ինչ փոփոխութիւն յառաջ կը գայ այստեղ օսպոնի է, որ Դ. յետ կը մղէ իւր ընդդիւմակայ դ և սկզբումը մինչեւ անգամ շատ մեծ զօրութեամբ (այնպէս որ նա յետ կը մղէ դ և հետ նաև դ և իւր մէջ բովանդակող շաբեր), եթէ միայն Դ. ի գիտակցութիւն մտնէ յանկարծ, իրբեւ մի անսպա-

սելի ու նոր բան; Բայց այդ վերջանալուց յետոյ ԱԲԳ
անդամները կը միանան միւս շաբքի համանման անդամ-
ների հետ. մ.յ փոքր առ փոքր կը կապակցուին ն շ ո...
հետ, որով և իւրացուցանող շաբքը առաւել ոյժ է ստա-
նում ու զօրանում; Ուրեմն երկու շաբքի վերջնական կա-
պակցութիւնը տեղի ունենալիս՝ նորը չե միանում հինի
հետ առանց փոփոխութեան; Իւրացուցանող շաբքը երե-
ւումէ իբրև փոփոխող, իսկ իւրացուցածը՝ իբրև փոփոխ-
ուած: Միայն փոփոխուած գրութեան մէջ է կարող նա
միանալ հին մուսպատկերների հետ. թէե դորանով
կարծես թէ նա կորցնում է իւր ինքնազոյութիւնը, սա-
կայն նա մի և նոյն ժամանակը շատ զօրեղանումէ ու ա-
մուր տեղ բռնում հինի մէջ:

Այդ ընդհանուր օրէնքը յառաջ բերելուց յետոյ,
տեսնենք թէ իւրացուցումը ինչ զանազան ձևերով է
յառաջ դալիս:

1. Այս հին մտապատկերն երը իւրացու-
ցանում են նոր զգայութիւնները, այն է՝

1. Հին մտապատկերն երը ու զղացնում են
նոր զգայութիւնները: Լուսաւորեալ անձը մնումէ
հասաւատ կանգնած այս կարծիքի վերայ, թէ երկիրը
շարժւումէ արեգակի շուրջը, թէե ամեն օր նա տես-
նումէ հակառակը: Ո՛չ ոք իւր աչքերին չի հաւատում,
որ լուսինը որոշեալ ժամանակամիջոցներում կիսում է,
քառորդում և մինչև անդամ անհետանում: Երկայն
ծառուղւոյ ծայրերը թէե միանում են մեր աչքի ա-
ռաջ և կազմում մի անկիւն, այսովէամենայնիւ մենք լու
համոզուած ենք, որ միայն մեզ է այդպէս երեւում:

2. Զափաղանց թոյլ, աղօտ ու րոպէա-
կան զգայութիւնների մէջ եղած աղօ-
տութիւնը պարզւումէ, անորոշն ու պակասը

լրացնում է վերարտադրուած համանման
մտապատկերների միջնորդութեամբ: Փորձառու
լրացիր ու ոսման կարգացողը իւրաքանչիւր բառից ըմ-
բռնումէ միայն մի գրեր, իւրաքանչիւր նախադասու-
թիւնից միայն մի քանի բառ, իսկ մնացեալը ինքն է
յաւելացնում իւր սեպհական մոքերի պաշարից: Ուսու-
ցիչը՝ իւր աշակերտներին աչք ածելիս՝ շատ բան տեսնում
է, ինչ որ իսկապէս չկայ նորա տեսութեան զաշում:
մենք հեռուից ճանաչում ենք մեր ծանօթին միայն ա-
ռանձին նշաններով, օր. հասակով շարժմունքով, զգեստ-
ներով և այլն:

3. Բայց իւրացուցումը մեծ նշանակու-
թիւն ունի տարած ու թեան մտապատկեր կազ-
մելիս: Ինչպէս վերև տեսանք երեխան 'ի սկզբանէ ըմ-
բռնումէ միայն առարկաների երեսը և չունի ոչինչ մուա-
պակեր խորութեան վերայ, ուստի և նա մեխնումէ իւր
ձեռը օր. լուսինը բռնելու նպատակաւ, վասն զի բոլոր
առարկաները միահաւասար հեռաւորութեան մէջ են ե-
րեսում նորան: Եւ նա չէր էլ. կարող մի այդօրինակ մը-
տապատկեր հայթհայթել եթէ ունենար միայն տեսանե-
լեաց զգայարանը: Սորան պիտի գործակից լինի շօշափե-
լիքը որի զգայութիւնները յօդուելով աչքի զգայութեանց
հետ, ուսուցանում են երեխային մարմնը անջատել հարթ-
երեսից: Բացատրենք մեր ասածը: Մարդս փոքր առ փոքր
բազմաթիւ փորձերից նկատումէ, որ արտաքին աշխարհի
առարկաները՝ պատճառելով շօշափելեաց զգայութիւն՝
տալիս են նաև մի տեսանեխաց պատկեր, որ զանազան-
ումէ լոկ հարթ երեսից: Այս առանձին առանձին զգա-
յութիւնները պատահելով միմեանց գիտակցութեան մէջ,
միանում են և կազմում մի ամբողջ մուսպատկեր, մի ո-
րոշեալ առարկայ պատկերացնելու համար: Դնենք թէ

այդ կամ դորա նման մի առարկայ գանառումէ մեզանից
մի որոշեալ հեռաւորութեամս մէջ. նս ամենից առաջ կը
ներգործէ մեր աչքի վերայ և վերցիշեալ ամբողջական
մտապատկերից կը վերարտապրէ այն արարերը որոնք ծաւ
դել են մի համանման զգայութիւնից: Բայց որովհետեւ
այդ տարրերը կապակցուած են մլանուների զգայութիւն-
ներից կազմուած մտապատկերների հետ որոնք մտա-
նանիշ են ինտու մի որ մենք տեսնում ենք ոչ թէ մի հարթ
երես, այլ մի մարմին, ուստի և սոքա և ըստ ժամա-
նակակցութեան օրէնքին գիտակցութիւն կը մտնեն և մի-
րարտադրուած՝ տեսանելեաց զգայութեանց հետ միասին
կը ներկայացնեն մտապատկերների մի զանգուած, որը և
կը ներկայացնէ նոր զգայութիւնը կը պարզէ և մի նոր տարր,
այն է՝ երբորդ տարածութեան նշանը նորա վերայ յաւե-
լայնելով: Այդպէս ահա ծագումէ նոր մտապատկերի իւ-
րացուցումը հիների միջնորդութեամբ, որ և արտայայտ-
ումէ դատողականութեամբ—սա էլ է մի մարմին: Ով որ զուրկ
է այդ օրինակ իւրացուցանուլ մտապատկերներից, ով որ
ինչպէս մի փոքրիկ երեխայ իւր կենաց առաջնին շարաթա-
ներում ու տմիներում գեռ ևս քիչ տարածական մը-
տապատկերներ ունի հայթհայթած, նա կը տեսնէ միայն
առարկաների հարթ երեխը, իսկ մարմինը՝ նա չե կարող
տեսնել, ինչպէս եին գասպար Հառուզէրը որ իւր ման-
կութիւնից մինչեւ իւր երիտասարդութեան հասակը ճշգ-
ուած էր մի մուժ սենեակ և ուրիշ շատ ՚ի բնէ կըր
ծնուած, իսկ յետոյ բժշկուած անձննը:

II. Այնու այժմ մենք տեսանք, որ միշտ մի նոր
զգայութիւն էր, որ իւրացուցանուում էր հին վերարտա-
զրուած մտապատկերներից, սակայն երբեմն էլ պատահում
է, որ նոր մտապատկերն է կերպար անափօխող
ազդեցութիւն ունենում առ ձեռն եղած հա-

մանման մտաւոր շրջանների վերայ: Դա տեղի է
ունենում այն տեղ ուր մենք օր մի այնպիսի զգայու-
թիւն ենք ստանում, որ բոլորովին համապատասխան է իւր
առարկային, բայց հակադիր մեր գորանից ստացած առա-
ջուան մտապատկերին, և որ այդ պատճառաւ այնքան զօ-
րեղ է ու պարզ, որ մենք այլ ևս չենք կարողանում յետ
մղել կամ ընդդիմազրել (մի երեկի առողջ, բայց այսօր
մեռած ծանօթի գիտակը), ուր նոր զգայութեան յառաջը
դիմող հին մտապատկերները գեռ ևս միմեանց հետ
այնքան սերտ չեն կապակցուած, որպէս զի կարող լինին
յաղթահարել նորան, ուր նորա մի քանի կասկածանաց
տեղի ունին և պիտի ուղղացնուին: Նոր զգայութիւնն կա-
րող է իւրացուցանել նախ՝ մի առանձին պարզ կամ
բարդ մտապատկեր, ինչպէս օր մենք մի բացակայ ան-
ծանօթ անձի վերայ կազմած մեր երեւակայական մտա-
պատկերը ուղղացնում ենք, անմիջապէս տեսնելով նորան.
մի իրի հոգեբանական գաղափարը լայնացնում ենք մի
նոր, մինչև այժմ անծանօթ մտապատկերի միջնորդու-
թեամբ: Այստեղ իւրացուցումը միշտ տեղի է ունենում
համարեա առանց դժուարութեան և առանց մի որ
և է ոգւյ յուզման: Բայց զգայութիւնները կարող են իւ-
րացուցանել նաև ամբողջ մտաւոր շրջաններ: Այսօրի-
նակ իւրացուցումները պատճառ են եղել բազմից գի-
տութեանց ու արուեստների հշակութեան: Պատմութիւնը,
սկսած Արխիմէդից (¹) Կոլոմբոսից (²) մինչև Գալիլի (³) ու Վոլտա, (⁴) որպէս նաև մեր ժամա-

1. Գնալով բաղանիք և աւագանիք մէջ մտնելիս տեսնելով
որ ջուրը դուրս թափուեցաւ, գտաւ այս, թէ ոսկին ջրի մէջ
որչափ է կորցնում իւր ծանրութիւնից, արծաթը՝ որչափ:

2. Գտաւ արեգակի երկրիս չուրջը պտտելը:

3. Զանազան զիւտեր արին ելեկտրականութեան մէջ:

Նակակից, զանազան բաներ հնարող կամ գտնող անձնք պարզ ցոյց են տալիս, թէ ինչպէս միայն մի նոր զգայութիւն, միայն մի միտք բոլորովին ձևափոխումէ զանազան սխառեմաներ և դորանով առաւել յառաջ տանում մարդ կային քննադատող ողին, քան իւրեանից առաջ եղած հարիւրաւոր տարիները:

III. Մի կամ մի քանի մտաւոր շրջանների մէջ այդօրինակ յեղափոխութիւններ են յառաջ ածում ոչ թէ միայն զգայութիւնները, այլ նաև վերարտադրուած հին մտապատկերները: Մարդոյս հոգին մոտած բոլոր մասապատկերից մի քանիսը լինում են այնքան թոյլ շատերը ընդհարում են այնքան զօրեղ ու բազմաթիւ հակառակորդների հետ, որ նոքա կամ իսկոյն նումանում են և կամ չեն գտնում ոչ մի մատոր շրջան, որի հետ կարողանային կապակցուիլ: Այս երկու դիպուածութն էլ իւրացուցումը տեղի չի ունենում: Նոքա մնում են կզզեացած, ուստի և չեն ունենում ոչինչ արժանաւորութիւն մեր հոգեոր կենաց համար: — Բայց եթէ այժմ գիտակցութիւն մտնելու լինի մոքերի մի խումբ, որ մօտ ազգակից է այդ թոյլ ու կղղեացած մտապատկերներից մէկին, այն ժամանակը յառաջ կը կոչէ նաև իւր ազգակից մոքերը: Այն ժամանակը մենք մտաբերում ենք մի բան, որ մեզ թւում էր թէ բոլորովին մոռացուած էր, շատ բան պարզւումէ, որ մինչ այժմ խաւարով պատած էր մեզ համար: Տիրապետող մտապատկերների խումբը բառնումէ այն մտապատկերի պատած խաւարը, և այժմ մենք չենք կարողանում հասկանալ, թէ ինչպէս մենք չհասկացանք իսկոյն և իսկ կամ ծուռ էինք մենում մի որ և է բան: Գիտնականը

իւր մոքերը յաջող կերպով յօդաւորելով միմեանց հետ, յանկարծ հասնումէ մի այնպիսի հիպոթէզի, որ մինչև այժմ նսեմ ու անհասկանալի մնացած երդորաթիւնները լուսաւորումէ և մի քանի երեսիթների նշանակութիւնը ըմբռնումէ ուրիշ և առաւել իսր կիրապով: նախանձու ամուսինի համար իւր յիշողութեան մէջ մը նացած այն իրողութիւնները, որոնց վերայ նա մինչեւ այժմ նայումէր սառնաարտութեամբ և որոնք գուցէ նորա սրտին շատ թանգ էին, այժմ յանկարծ դառնում են ամբաստանող նորան, ով որ իւրեան համար աշխարհիս երեսին ամենասիրելին էր (Ոթէլլօ): նորա հիւանդերեակայութիւնը ամենուրեք մատնութիւն է տեսնում և միշտ նոր փայտ է յաւելայնում նորա կրքի կրակի վերայ: Այդ երկու դիպուածութն էլ կենդանի կերպով վերարտագրուած մտապատկերներն են ահա, որոնք նախ և առաջ շարժում, ալեկոծում են բոլոր մոքերի պաշարը, իսկ յետոյ իւրեանց ազգամները շատ թէ քիչ փոփոխելով իւրացուցանում:

IV. Իւրացուցումը տեղի է ունենում ոչ թէ միայն զգայութեանց ու մտապատկերների շրջանում, այլ նա մեծ գործ է կատարում նաև երբ մենք մի մտապատկեր պիտի կազմենք երեւակայութեան միջնորդութեամբ: Յառաջ բերենք մի օրինակ: Աշխարհագրական ու պատմական դասի պարզ ըմբռնելը, հասկանալը կախուած է այն ընդունակութիւնից, որով լսողը կարողանումէ հեշտութեամբ տեղափոխուիլ այնտեղ, որի վերայ խօսումէ: Խսկապէս մենք երբէք չենք կարող պատկերացնել մեզ մի անձանօթ տեղ երկիր, լեառն, մի չտեսած պատերազմ եայն, և այս կողմից շատ ճշտարիտ է էմալիրիկների ասածը թէ. Nihil est in intellectu, quod non fuerit in sensu, այն է՝ ոչինչ չկայ խոհականութեան

մէջ, որ չէ եղել զգայաբանների մէջ: Ուրեմն մենք ի՞նչ
պէս ենք ձեռն բերում աշխարհագրասկան պատկերները,
պատմական դիտողութիւնները: Աթէ ճշտութեամբ քըն-
նենք, թէ մենք ուր էինք մեր մոքումը ման գալիս, երբ
մեր մանկութեան օրերում առաջին անգամ մեզ պատ-
մում էին արքայութեան ու առաջին մարդոյ վերայ, երբ
մենք խորակացոց հետ անցնում էինք Կարմիր ծովով և
բանակում Սինա լեռան ստորոտում, երբ մենք Մովսիսի
հետ Ներսոսի բարձրութիւնից նայում էինք Աւետեաց
երկրի վերայ և այլն, այն ժամանակը մենք կը տեսնենք, որ
մեր հայրենիքն էր, մեր ծննդեան տեղին իւր գաշտերով,
ձորերով ու լեռներով, ուր թափառում էին մեր մաքերը.
որ սրբազն պատմութեան մէջ լիշտած լեռներն ու
պտղաբեր գաշտօրայքը, անապատներն ու մարգերը, ջըր-
հորներն ու տները և այլն տեղափոխում էինք մեր հայրե-
նիքը: Ուրեմն և մենք ծանօթ տեղերի միջնորդութեամբ
դիտելի էինք կացուցանում անձանօթը, և թէև մենք
անցնում էինք լեռներ ու անապատներ, ծովեր ու գետեր,
որոնց անունները մեզ մինչև այժմ բոլորովին անձանօթ
էին, այսու ամենայնիւ մենք միշտ մեր հայրենիքումն
էինք մնում, վասն զի Աստուածաշնչի մէջ յիշուած ա-
նունները, գործող անձանց մոտապատկերները և տեղի ու-
նեցած պատահարները վերաբաղրում էին աղքակից հայ-
րենի մուքերի խումբեր և ձուլում նոցա հետ, այսինքն՝
նորը իւրացուցանում էր հինի միջնորդութեամբ:

Մեր վերե § 33 և § 35 ասածներից պարզ ե-
րևումէ, որ իւրացուցման միջնորդութեամբ կազմում են
նաև գաղափարներն ու գատողութիւնները:
Բայց իւրացուցման գործողութիւնը չի սահմանափակում
միայն մեր մոտապատկերներով, այլ նորա ներգործութիւնը
տարածւումէ նաև մեր զգացմանց, յանկութեանց ու
կամքի վերայ, որ և յսց կը տանք իւր տեղը:

§ 38. Խմացական ու կամածին մոտադրութիւն:

Իւրացուցանող կամ իմացական մոտադրութիւնը չի
սահմանափակուում միտքը կենդրոնացնելով միայն առան-
ձին առանձին զգայութեանց վերայ, այլ նա տարած-
ւումէ մոտապատկերների ամբողջ շարքերի վերայ: Իւրա-
ցուցանող մոտադրութիւնը պինդ բռնած պահումէ մի
նոր ու համեմատաբար թոյլ զգայութիւն վաղուց հայթ-
հայթած, իսկ այժմ վերաբաժադրուած հին մոտապատկեր-
ների միջնորդութեամբ: Այսպէս օր. շուկայի խառնու-
շփոթ ամբոխի մէջ մենք հեռուից ճանաչում ենք մի ծա-
նօթ անձի, թէև նորան այդ տեղ չէինք սպասում, միայն
նորանով, որ տեսաննեխաց թոյլ զգայութիւնը զօրանում
ու ամրանումէ մեր վաղուց արգէն հայթհայթած, այժմ
արթնացած մոտապատկերների միջնորդութեամբ: Սեր մը-
տադրութիւնը շատ զօրանումէ, եթէ զգայութիւնը լի-
նումէ յանկարծ ու անսպասելի:

Թէև իւրացուցանող մոտադրութիւնը չէ սկզբնական,
սակայն նա երեւումէ արգէն փոքր մանկանց մէջ, երբ սոքա-
հասակաւորների խօսակցութեան մէջ լսում են առանձին
ծանօթ բառեր և բարձրածայն կրկնում, կամ երբ մի
ծանօթ առարկայ միայն իւր նկարած ծրաբոլորից (օւերէ)
Ճանաչումէ և իւր կերպով անուանում: Այսպէս ահա
Սիրիզմունդի նկարագրած փոքրիկ երեխան մի պարզ, մու-
տափով գծած քառանկիւնի կոչում էր շաքարեղէն (bonbon),
իսկ պարզ բոլորակը — պնակ: Այսակ հարկաւոր է յի-
շել նաև այն անուշագիր մանկանց, որոնք իսկոյն և իսկ
ուշքերնին իւրեանց են ժողովում և ուղեղ ըմբոնում,
եթէ ուսուցիչը սկսումէ նոցա պատմել մի վէպ: Պարզ է,
որ այստեղ ներքին հոգեւոր պաշարից յանկարծ դուրս են
գալիս համանման մոտապատկերներ և կապակցուում նորե-
րի հետ:

Աւրացուցանող մտադրութիւնը կարող է գրգռուիլ (ինչպէս և սկզբնականը § 9), եթէ նոր զգայութիւնը նման է հին մտապատկերների շըջանին: Նոր զգայութեանց բացարձակ աննմանութիւնն ու բացարձակ նմանութիւնը բոլորովին չեն գրգռում մեր ուշադրութիւնը: Բացարձակ այլազգի զգայութիւնը չունի ոչինչ յարաբերութիւն գէպի առածեան եղող մտապատկերների շըջանը, ուստի և նա չէ գտնում ոչինչ օգնութիւն, ոչինչ պաշտպանութիւն իւրեան հակառակորդների դէմ: Ուստի և մնում է առանձնացած, օտար ու թոյլ և բոլորովին ձնշւում է նոցանից: Միևնույն վիճակին է հանդիպում և այն նոր զգայութիւնը, որ բոլորովին նման է հին վերաբարպուած մտապատկերներին. մենք նորան բոլորովին չենք նշմարում, վասն զի նա բոլորովին նման է հինին: Ուրեմն այս երկու դիսրուածումն էլ նորը համարեա բոլորովին չի գրգռում մեր ուշադրութիւնը, ուստի և նորը համարեա բոլորովին անտարբեր է մնում գէպի արգէն պատրաստի մտապատկերների շըրջանը, չի կարողանում նոցանից ոչ մէկին գէպի ինքը գրաւել:

Ուրեմն և իւրացուցանող, որպէս և սկզբնական մըտադրութիւնը պահանջումէ, որ նորի յառաջը դիմող այլազգին լինի ոչ չափից գուրս քիչ ոչ էլ չափից գուրս շատ: Հեքաթները, որոնք բոլորեցունց միշտ հաւանում են, ներգործում են ոչ թէ նորանով, որ նոքա մի որ և է նոր բան են պատմում: այլ որ նոքա պարզ ու որոշ կերպով մի բան են պատմում: որ առանց գորան էլ ամեն ոք լաւ զգումէ, բայց չէ կարողանում այնպէս ձիշո ու համառօսիւ արտայայտել, վասն զի չունի դեռ ևս հարկաւոր դիտողութիւնները, զաղափարներն ու բառերը: Մի և նոյն կերպով ներգործումէ քերթողների ու ձարտասանների խօսքը: այդ է պատճառը ահա, որ ամենա-

հոչակաւոր քերթողները, օր. Հոմերոսը, Սովոկլէսը, Շէկուպիրը, Գէօթէն, Շիլերը ևայլն, միշտ ընարում էին ծանօթ նիւթ: Ուստի և ամենից առաւել է գրգռում մարդոյս ուշադրութիւնը այն, ինչ որ յաջողակ կերպիւ հիւսուած է հինից ու նորից:

Ստաւոր մշակութեան առաւել բարձր աստիճանի վերայ մարդս միշտ առաւել և առաւել է թողնումն սութիւնը, անձնասիրութիւնը. նորա մէջ շարժում են ցաւակցութիւնն ու ուրախակցութիւնը, սկսում է և փոքր առ փոքր նրբանում անձնաբնութիւնը: Նա սկսում է քննել իւր կամքերը և նորանց բաղդատել ուրիշն կամքերի հետ: Այս բաղդատութիւնից ծագում է կամքի յարաբերութեանց անպայման հաւանութիւնն ու անհաւանութիւնը: «Ճիւրին պատուել», «բախտաւորութեան մէջ չափաւոր լինել»—հաւանումէ, «երդումը ստել», «գաւառանել»—չի հաւանում: Այդպէս ահա կամք քերը միմեանց հետ բաղդատելիս՝ որչափ որ պարզ ու որոշ կերպով են մեր մէջ յերեան գալիս զուտ, ոչ մի կողմանի: Հայեացքով չպղտուած հաւանութիւն և բարոյական անհաւանութիւն, և որչափ որ յաճախ ենք մէնք զգում զզջման խայթերը, այնքան էլ աներկեայ պիտի լինենք որ մեր մէջ կը կազմուին բարոյական սկզբանը ու կը զբուն քներ: Այդ է ահա լսուհական ահան ու լսութեան քառար մարդոյ հայեցակէտը: Այսուամենայնիւ մարդոյս մէջ այս կերպով փոքր առ փոքր կազմուած տեսակ տեսակ սկզբունքները միշտ միմեանց հետ չեն

գտնուում համաձայնութեան մէջ, այլ երբեմն հակածառ ու ում են ու մերժում միմեանց: Միայն փորձն ու մտածութիւնն են յառաջ բերում առաւել զօրեղ ու բարձր թոյլերին տիրապետող սկզբունքներ. այդ հոգեոր գործողութիւնը, այն է՝ մտածութիւնը յառաջ զիմելով կազմումէ մի քանի կամ մի այն մի բարձրակազմութիւնը մի գույն ու կը ունը, որ և տիրում է բոլոր բերունց:

§ 49. Ա ետաքրքրութիւն, ցանկութիւն և կամք:

Հետաքրքրութիւնը, որպէս և առհասարակ բարձրագաս հոգեոր երեսյթները, այն է՝ թէ մտապատկերների կապակցութիւնը և թէ զգացյանքները, ցանկութիւններն ու կամքը սերտ կապուած են իւրացուցման հետ: Կոլու և առաջ հարկաւոր է ասել որ մենք հետաքրքրում ենք այն բանով, որ կարողանաւում է մեր ուշադրութիւնը իւրեան գրաւել: Նոյնաժամանակ մեր առաջը դուրս եկող մտապատկերներից միայն նոքա են մեր ուշադրութիւնը զրաւում, որոնք գտնում են մեր մէջ իւրացուցմանը մասնաւում մեր կամքը սկսումէ մեր մէջ իւրացուցմանը մասնաւում մեր կամքը պահպանակ անհանգտուածներ. մասնուկը իւրեան ցանող մտապատկերների զանգուածներ. մասնուկը իւրեան համար անհասկանալի զրուցադրութեան մէջ ուշադրութիւն է գարձնում ծանօթ բառերի վերայ, կենդանին իւր անուան վերայ. հոգնած աշակերտների անհանգտուածներ անցնումէ, չենց որ ուսուցիչը սկսումէ պատմել թիւնը անցնումէ, չենց որ ուսուցիչը սկսումէ պատմել մի որ և է անէկդոս: Բայց եթէ իւրացուցումը կատարումէ հեշտութեամբ, այն ժամանակը նորան ուղեկան գումար հաճութեանց զգացյանքը: Այդ զգացյանքը յերեան է բերում մեր մէջ միենոյն ներքին գործողութեան կրկնուելու ցանկութիւնը, այն է մի պահանջ

կրկին և կրկին զբաղել այն առարկայով որ զրաւել էր
մեր ուշադրութիւնը, այսինքն որ գտել էր մեր մէջ իւ
րացուցանող մտապատկերներ:

Հետաքրքրութիւնը, ցանկութիւնն ու կամքը ունին
մի քանի ընդհանուր յատկութիւններ: Այդ բոլոր երեք
հոգեոր գործողութիւնն էլ հակադիր են առանարտու-
թեան, այն է՝ նորա իւրեանց առարկային վերագրում են
մի որ և է արժանաւորութիւն: Այսուամենայնիւ յետա-
քրքրութիւնը զանազանումէ ցանկութիւնից ու կամքից
նորանով, որ նաև չի աշխատ լինում տիրել իւր
առարկային, այլ ինքն է անձնատուր լինում
նորան: Ցանկութիւնն ու կամքը ձեռնամնեին են լինում
իւրեանց առարկային, ճգնում են նորան իւրեանց սեպ-
հականել, մինչդեռ հետաքրքրութիւնը թէև նախամե-
ծար է համարում իւր առարկան, ուրիշներից առաւել
բարձր է դասում, սակայն չի աշխատում տիրել նորան:
Ցանկութեան ու կամքի նման հետաքրքրութիւնը նոյնպէս
ենթարկում է ճգտման ընդհանուր գաղափարին, վասն
զի նա էլ է իւր մէջ բովանդակում մի ներքին,
միշտ յառաջ մղող ոյժ: Բայց նորա այդ ճգտումը
այնքան հեռու չի հասնում, որչափ ցանկութիւնինն ու
կամքինը: Հետաքրքրութիւնը մնում է կանգնած միայն
ճգտման առաջին աստիճանի վերայ, ուստի և նորա ա-
ռարկան նոյնպէս չի մի և նոյնը, ինչ որ է ցանկութեան
ու կամքի առարկան. վասն զի ցանկութիւնն ու կամքը
որոնում են մի բան, որ այժմ բացակայ է, չկայ, նորա
ճգդում են դէպի այն, ինչ որ այժմ չունին, և շատա-
նում են միայն այն ժամանակ, երբ հասնում են իւ-
րեանց առարկային: Ընդ հակառակն հետաքրքրութիւնը
դիտելով ու քննելով այն, որ ընկած է իւր առաջ, ա-
ռաւել ու առաւել է զօրանում: Ուստի և ով

հետաքրքրութիւնն, նա իւրեան կատարեալ բաւականու-
թիւն ստացած է համարում, որչափ էլ դա թերակատար
չլինէր. նա իւր կատարեալ բաւականութիւնը, իւր բարձ-
րագոյն ուրախութիւնը գտնում է նորա մէջ, ինչ որ
այժմ նորան յայտնի է իւր առարկայից, ինչ որ այժմ
նա կարող է առնել նորա հետ: Հետաքրքրութիւնը ցան-
կութեան պէս չէ մի անհամբեր, անհանգիստ ձգտումն-
նա, ունենալով իւր առաջնին այն, ինչ որ իւրեան հա-
անւումէ, միշտ մնումէ հանգիստ, խաղաղ ու անվըր-
գով, միշտ պահպանում է շափաւորութիւնն և երբէք չի
բարձրանում ու հասնում ալեկոծող ու անձնատոչոր
պահանջի:

Հետաքրքրութիւնը զանազանումէ է ցանկութիւնից
նաև նորանով, որ մտածութիւնն ու գործը դարնում են
ներքին սպահանջ այն անձի համար, ով որ ոգեորուած
է հետաքրքրութեամբ կամ որ մի և նոյն է, հետաքրք-
րուողը միշտ աշխատումէ, ճգնումէ առաւել լաւ ու
առաւել կատարեալ գործել այն, ինչ որ այժմ ունի,
մինչդեռ ցանկութիւնը իւր բնութեամբ անցաւոր է, յողը
գոզդ ու երերուն: Մինչև անգամ եթէ ցանկութիւնը
ամենայնիւ նա մնումէ միշտ իբրև մի արտաքին պահանջ
և ոչ ներքին, ինչպէս այդ լինում է հետաքրքրութեան
ժամանակ: Ցանկութիւնը աշխատումէ ձեռն բերել մի
և է բառ միայն նորա համար, որ նորանից ստանայ
որ և է բառ միայն նորա համար, որ նորանից ստանայ
գոհացուցումն, իսկ առարկան ինքը չընի նորա համար ոչինչ
արժանաւորութիւն. Ընդ հակառակն հետաքրքրութիւնը
միշտ կապուած է առարկայի հետ, նա նորան, իբրև ա-
ռարկայի, վերագրումէ մի որ և է արժանաւորութիւն,
նորա պահանջն է նոյն իսկ առարկան: Այդ պատճառաւ
և հետաքրքրութիւնը ազատ է ցանկութեան տարակու-

սանքից ու վարանքից, նորա ձգտումը հաստատուն է, անյողողողդ ու յարատե, վասն զի հետաքրքրութիւն առ իւր առարկան ունեցած անմիջական սէրը, ստիպելով նորան յաճախակի ու կատարեալ անձնութիւնութեամբ գրադիլ այդ առարկայով, նորան սերտ կապումէ իւր առարկայից ըստացած մոտապատկերի հետ և այդպէս գոյացնում մի ներքին պահանջ; թէ հետաքրքրութիւնը ունի դէպի գործը մզող յատկութիւն, սակայն այդ դիպուածում նա մնում է փակուած ներքին աշխարհում, նա գործումէ ներքուստ վասն զի նորա համար շատ է, եթէ դիտելի կերպով կառ րողանումէ պատկերացնել իւր առարկան: Ընդ հակառակն՝ եթէ հետաքրքրութեան մէջ գտնուած պահանջը դրդումէ մարդոյս գործել արտաքին աշխարհում; համաձայն նորա առարկայի բնութեան, այդ դիպուածում այն արժանաւորութիւնը, որ հետաքրքրութիւնը վերագրում էր իւր առարկային, կ'անցնէ իւր գործողութեան, այն է գործողութիւնը նորա համար նոյնպէս կրստանայ մի արժանաւորութիւն, կամ որ մի և նոյն է, նորա մէջ այժմ յառաջ կրգայ նաև մի արտաքին գործողութեան պահանջ:

Ով որ հետաքրքրութիւն ունի, նորան իւր գործու գութիւնը կը յաջողի հետապութեամբ, այն է՝ առանց ձանձրութիւն պատճառելու, մինչեւ անգամ եթէ զա դեռ ևս չի դարձել պահանջ. գործի այդ հեշտութեամբ յաջողութիւն նորան կը պատճառէ նաև երկարատե հաճութեան (գոհութեան) զգացմունք: Ընդ հակառակն ցանկութիւնը միշտ պատահումէ զանազան խռոչնուաների, որոնք և պատճառ են լինում մի ձնշող ու լիկող ազդեցութեան այն ժամանակ, երբ նա աշխատում է յաղթահարել նորանց: թէ և հետաքրքրութիւնը նոյն պէս հանդիպում է խոչընդոտների իւր գործողաւթեան

ժամանակ, թէ և նա էլ է պրկում իւր ոյժերը յաղթահարելու այդ խոչընդոտներին, սակայն դա չունի ձնշող ու տանջող ազդեցութիւն. հետաքրքրութիւնը տանում է իւր այդ աշխատանքը նոյնքան հեշտութեամբ, որչափ և այդ լինումէ այն աշխատանքի ժամանակ, որ պատճառ ուումէ մարդոյս զու արժանալու նպատակաւ ձեռնարկած զբօսանքը: Բայց դորանից հնտաքրքրութիւնը է ոչ թէ մի բոպէական ձգտումն զէպի մի բան, ինչպէս ցանկութիւնը, այլ մի յարատե ու հաստատուն հպատակութիւն, սէր, որ և նորան կարելի է գործում ՚ի վերջոյ յաղթահարել իւր առաջ եղած խոչընդոտները: Եւ հետաքրքրութիւնը իւր այդ աշխատանքը տանում է ոչ իբրև մի ծանր բեռն, այլ յաճախ ինքն է դիտմամբ որոնում այդ խոչընդոտներին ու դոյց պատճառած աշխատանքը, վասն զի զոքա նորան ձեռնահաս են գործում: մի միջոց են տալիս առաւել ու առաւել խորասուզուիլ իւր առարկայի մէջ:

§ 50. Մտախոչութիւն, զգօնութիւն և անձնականութիւն:

Կամքին ու գործողութեան առաջնորդումէ մտախոչութիւնը (կշռադատութիւնը): Մենք մտախոչ ենք լինում, երբ մտածելով քննում ենք, թէ զանազան միջոյներից որո՞նք են կարելի և մի և նոյն ժամանակը քննադատում դոյցնից իւրաքանչերի արժանաւորութիւնը: Մտախոչութիւնը կամ կշռադատութիւնը լինումէ իւր լացի, եթէ նա գլխաւորապէս ըըննումէ, թէ միջոյներից որն է կարող կամ անկարող նպատակին հասուցանելու նա ընդհակառակն՝ ըարուցական է, եթէ վերաբերումէ նոյն իսկ նպատակի

ընտրութեան։ Երբ մի որ և է ցանկութիւն ընդունում է կրքի բնաւորութիւն, այն ժամանակը նա լռացնում է մարդոյս ունեցած բողոք միւս շահերն ու ցանկութիւնները և պահանջում է անպայման գոհացուցումն։ Այստեղ տեղի չէ ունենում բարոյական մտախոհութիւն, այլ գործում է միայն խելացի մտախոհութիւնը. այստեղ անկարելի է մտածել անձնիշխանութեան վերայ։ Բայց եթէ ցանկութիւնը ազատ է կրքից, այն ժամանակը իւրեանց նշանակութիւնն են ստանում մարդոյս հայեաքցներն ու շահերը, որոնք խորհուրդ են տալիս իրագործել կամ չերագործել կամքը, որով և կամեցողի գիտակցութիւնը ստիպում է ընտրել երկուսից մեկը, այն է՝ կամենալ կամ չկամենալ։ Այս է մտախոհութեան առաջին աստիճանը։ Սակայն ըստ մեծի մասին մի ցանկութեան ա, որ հիմնեում է Ա. մտապատկերների զանգուածի վերայ, ընդդիւմագրում է մի երկրորդը բ կամ մինչև անգամ երրորդը գ, որոնց կայանն է հակադիր մտապատկերների զանգուածներս բ և գ։ Այստեղ ծագում է ցանկութեանց պատերազմը, որ և նոցանից անցնում է մտապատկերներին։ այսինքն՝ այն շահերին, որոնք պաշտպան են կանգնած ցանկութեան զանազան առարկաներին։ Եսի՝ այդ բազմաթիւ ցանկութեանց մեջ ծփուիլը ոչ այլ ինչ չէ ահա, եթէ ոչ մտախոհութիւն (կը աղատութիւն)։

Այդ կշռագատութիւնը չէ դեռ ևս գոհացուցիչ
քանի որ երկու կամ առաւել մտապատճեր կամ մտա-
պատճերների զանգուած (Հակաղիր ցանկութեանց կա-
յանը) զիտակցութեան մէջ այնպէս են յերեան գալիս
որ մէկը միւսի առաջ մի առանձին առաւելութիւն չէ
ներկայացնում։ Մտախոհութիւնը հասնումէ ՚ի
վերջոյ իւր վախճանին, եթէ հաւասարա-
կշռաւթեան մէջ ծփող մտապատճերներից

մտապատճերների զանգուածներից կամ կաշրելի կամեցողութիւններից մէկը արտաքուստ կամ ներքուստ օգնութիւն ստանաւ լով, յաղթող է հանդիսանում մնացածների (Հակաղիրների) վերայ, այնպէս որ նա առցա արտաքսումէ գիտակցութիւնից և ինքը տիրում գիտակցութեան և այս կերպով յառաջ բերում վճիռը: Այն մտախոհութիւնը, որ տեղի է ունենում մտածելիս կամ, որ մի և նոյնն է, գատելիս կոչումէ տեսական, խակայն, որ խորհուրդ է տալս իրագործել կամ չիրագործել կամքը, և կամ ընտրել բաղմաթիւ ցանկութիւններից մէկը—բարոյական կամ գործական:

Աշուադատութեան կատարեալ յաջողութեան հաւ
մար հարկաւոր է զգօնութիւն ու անձնի շխա-
նութիւն: Մենք կոչում ենք զգօնութիւն մտա-
պատկերների այն կանոնաւոր փոխադարձ ազդեցու-
թիւնը, որով կարելի է դառնում մտածութեան միջ-
նորդութեամբ քննադատել հակադիր հիմնենքները: Երբ
զգօնութիւնը սովորութիւն է դառնում, այն ժամանակը
նա շարունակ առաւել ու առաւել է ընդարձակում
մտախութիւնը. նա ճգնում է ամեն կարելի ցանկու-
թիւնները (ու կամքերը) կշռադատել միմեանց հետ. բազ-
մաթիւ ցանկութիւնները նա սահմանափակում է ու ստո-
րադասում մէկին, հարց է բարձրանում, թէ ո՞ն է մար-
դոյս գործերի վերջին նպատակը, ո՞ն է մարդոյս ամենա-
մեծ բարին: Այստեղ զգօնութիւնը օգուտ է քաղում
ընդհանուր գաղափարներից, այստեղ ծագում են սկզբ-
քունքներ, կանոններ, որոնց համադրութիւնից և—բա-
րոյական ուսումնական:

Անձնիշխանութիւն ասելով հասկաց-

Հումէ մտապատկերների ու մտքերի այն կաշնանաւոր վարչութիւնը (այն է մտապատկերների) ցանկութեանց ու կամեցողութեանց ցնորող ընթացքը դէպի որոշեալ կողմէ գարձնելը), որ իւրեան առաջնորդէ առնում մորոշեալ հայեցակէտեր (սկզբանըներ), որոնց միշտ հաւաքի մունքաւ կամունքաւ (կանոններ), որոնց միշտ հաւաքի մունքաւ մարդս կարողութիւն է ստանաւ դուրս մղել ու ընկճել ամենայն այն այլաւ ինչ (ամենայն ինչ), որ ընդդիմադրումէ անմիջապէս կամ միջնորդաբար), որ ճգնում է ներս մտնել։ Որպէս զի մարդս կարողանայ իւր անձի վերայ սահանալ մի այդ օրինակ կանոնաւոր իշխանութիւն, հարկաւոր է, որ նախ և առաջ մտապատկերներն ու կամքերը մշակուին և միշտ առաւել ու առաւել կապակցուին միմեանց հետ ըստ իւրեանց բովանդակութեան (§ 51):

§ 51. Ոգեբանական ազատութիւն, խոհականութիւն կամ խելք:

Ինչպէս վերև ասացինք, մտախոհութիւնը լինումէ երկու տեսակ, այն է՝ տեսական ու դորժական կամ բարոյական։ Տեսական մտախոհութեան մէջ իրեւ իւրացուցանող կանոններ մեր գատողութեանց համար յերեան են գալիս գաղափարները կարող են գառնալ մտաշխոհութեան առաջարկայ, երբ մենք նոր գատողութեանց միջնորդութեամբ աշխատում ենք որոշել նոցա փոփոխակի յարաբերութիւնը։ Սա է մտախոհութեան մի բարձր տեսակը, որ տեղի է ունենում վերացական գաղափարների միջնորդութեամբ։ Շարունակ բաղդատելով միմեանց հետ

գաղափարները, որոնք կազմում են մեր տեսական մտաշխութեան առարկան, մենք հասնում ենք ամենաբարձր (տեսական) գաղափարներին, որոնք և կոչում են տեսական իդէ եան եր։ Անձութիւն ու թիւ, նիւթութիւն, Աստուած ու բնութիւն, գոյութիւն ու յատկութիւն այդօրինակ բարձրագոյն տեսական իդէեաներ են։

Իսկ ինչպէս են կազմում դորժական ու բարոյական իդէ եան եր։ Զգացմունքի գործակցութեամբ զանազան ցանկութիւններից ու կամքերից կազմումէ փոքր առ փոքր և ակամայ՝ կամքի արժանաւոր կամ առաջ ժամանակակցութիւն։ Այդ գիտակցութիւնը կարող է ծագել նաև և առաջ զգայութիւններից կամ ձեւական զգացմունքներից։ Նոր զգայութիւններով զրգուած ցանկութիւնը կարող է իւրացուցման միջնորդութեամբ յառաջ կոչուիլ կամ յետ մղուիլ հին մտապատկերների կողմից և այդպէս դառնալ հաճելի կամ անհաճոյ զգացմանց աղբիւր։ Աթէ այժմ զանազան ցանկութիւնները մենք պատկերացնենք ու բաղդատենք միմեանց հետ, այն ժամանակը նոցա հետ կապակցուած հաճելի ու անհաճոյ զգացմանց օգնութեամբ մենք մէկը առաւել արժանաւոր ու նախամեծար կը համարենք միւսից։ Արժանաւորութեան մտապատկերը, որ մեզ համար ՚ի սղբան կապակցուած էր միայն նոյն խկ ցանկացած առարկայի հետ, այժմ անցնումէ նոյն խկ ցանկութեան և զրոա միջնորդութեամբ նաև կամքին։ Իւրաքանչիւր կամք որ մենք մեր մտքում կշռագատում ենք, արթնացնումէ մեր մէջ իւր արժանաւորութեան գիտակցութիւնը, վասն զը եթէ մինչև անդամ նորա մօտ չկայ կանգնած մի ուրիշ դրական կամք, որպէս զի նոցա բաղդատութիւնից մենք ստանայինք նորա արժանաւորութեան մտապատկերը, այսուամենայնիւ բաղդատութեան համար պատրաստ է չկա-

մենալու կարելիութեան մտապատկերը, որ է նոյնպէս կամքի գործողութիւն: — Բայց կամքի յարաբերութեանց բացարձակ արժան աւորութեանց բացարձակ արժան աւորութիւն: Այսպէս ահա կարող է արտադրուիլ նաև մտապատկերների, զդաշմանց ու կամքերի փոխադարձ ներգործութիւնից: Այսպէս ահա կարող է պատահել, որ մենք առիթ կը ստանանք քննել մեր կամքը ոչ թէ միայն առ իւր առարկան ունեցած յարաբերութեան մէջ, այլ նաև իբրև անդամ մի յարաբերութեան, որի մէջ նա գտնուումէ դէպի: Մի ուրիշնանձի կամք առանց անմիջապէս ուշադրութիւն դարձնելու սորա առարկայի վերայ: Այսպէս ահա մի անձն, որ մինչև այժմ հանգիստ կերպով ու առանց մտախոհութեան մնացել է մի ուրիշ կամքի (օր. ճնողաց) հեղինակութեան տակ, եթէ ցանկանալու լինի մի բան գործել որ հակառակ է այդ կամքին, այն ժամանակը նորա մէջ կը կազմուի մի այնպիսի կամքի յարաբերութեան մտապատկեր, որ ինքն ըստ ինքեան, առանց ուշադրութիւն դարձնելու նորա առարկայի վերայ, կապակցուած է արժանաւորութեան գիտակցութեան հետ, այսինքն՝ որ ինքն ըստ ինքեան հաւանումէ և որի գիտմամբ լուծանելը յառաջ է կոչում տհաճութիւն կամ զղջումն: Ներքին փորձառութիւնից ու այդօրինակ յարաբերութիւններից, այս դատողութեան միջնորդութեամբ, թէ այսպիսի ու այսպիսի գէպերի համար միայն այսպիսի ու այսպիսի կամք ունի ինքն ըստ ինքեան մի արժանաւորութիւն, ծագում են գործական կամ բար ոյ ական կամ բար ոյ ական իդ է եաներ, որոնք այժմ ինքեանք, իւրաքանչիւր նոր յերեան եկած ցանկութիւն իւրացուցանելիս, գործակցումէն իբրև սահմանիչ, որովհետ զօրութիւններ: Այդօրինակ բարոյական իդեաներ են օր. իւրաւունք ու անտչառութիւն, մարդասիրութիւն ու կատարելութիւն:

Այդ իւրացուցումը, որ կատարւումէ տիրապետող մտապատկերների զանգուածների միջնորդութեամբ և մի որոշեալ ուղղութիւն է տալիս իւրաքանչիւր առանձին ցանկութեան, յիրեան է գալիս իբրև հրաման ու արգելումն: Այդ հրամանն և արգելումը լինումէն բարոյական, եթէ իւրացուցանող մտապատկերների մէջ կշիռունին բարոյական իդեաները: Այդ բարոյական իդեաների միջնորդութեամբ իւրացուցանելը արտայալում է իբրև գատողութիւն, որի ենթական է առանձին կամքը, որի ստորոգեալը — ի պաշտպանութիւն կամ 'ի մերժումն ցանկութեան եղած՝ մեր ներքին ընդդիմադրութեան զիտակցութիւնը: Այս ստորոգեալի մէջ գտնումէ պիտի -ի կամ չպիտի գիտակցութիւնը, որից և ստացւում է նախադասութիւնս. «Այս որոշեալ կամքը պիտի լինի: Եւ որովհեան իւրաքանչիւր նոր զգայութիւն իւրացուցանող հին զանգուածի մէջ գտնուում է մարդոյս (փորձական) եսը, ուստի և վերցիշեալ գործողութիւնը բովանդակումէ իւր մէջ կամքի իւրացուցումը եսի միջնորդութեամբ, այն է՝ «Այս իւրացուցման ընթացքում ես ինձ գտնումէմ միանգամայն կարող եմ և պարտ եմ արտասանող — ես հրամայումեմ և հնապանդւում, վասն զի ես պարտ եմ»: Այս նախադասութեանս մէջ. «Ես կամենումեմ Ա», որ տեղի ունեցած իւրացուցումից ծագում է իբրև վերջին կամք, բովանդակուումէ նաև այս. «Ես կարող էի մի բ, բայց ես զա չպիտի անեմ» (Ֆօլկման):

Եթէ մէկի բարոյական իդեաներին յատուկ մտապատկերների զանգուածը ունի այնքան ոյժ, որ կարող է իւրացուցանել մի կամք, այդ նշանակումէ, որ նա ունի բարոյական անձնիշխանութիւն: Այս անձնիշխանութիւնը չէ նշանակում, որ կամքը կանգնած է պարող լինելու

ու «պարտ լինելու» մէջ և ինքնակամ կերպով ընտրում է այս կամ այն: Ուր որ եսից ծագուող, գործական իդէեաների մէջ արտայայտուած հրամանների ու արգելունքների միջնորդութեամբ իւրացույցանուում են ցանկութիւնները, այնտեղ կայ թէ անձնիշխանութիւն և թէ ներքին ազատութիւն: բայց ուր հակառակն է պատահում, այնտեղ մարդս ստրուկ է:

Թիժուար չէ այժմ հասկանալ (փորձն էլ այդ հաստատումէ), որ բարոյական իդէեաներով կատարուած իւրացույցման կատարելութիւնը ունի իւր աստիճանը և որ ներքին ազատութիւնը, իբրև հոգեբանական իրողութիւն, չէ ոչ մի սկզբն ական, ոչ էլ մի բացարձակ բացարձակ է միայն բարոյական գաատողութիւնից ծագած պարտ լինելը, որին մարդս իւրաքանչիւր դիպուածում համապատիսանումէ կարող լինելու մի որոշեալ քանակութեամբ: Սակայն թերակատարութեան գիտակցութիւնը ու պարտ լինելը յերեան են գալիս իբրև բարոյական սկզբանքները զօրացնելու ու ամրացնելու յարատել դրդիչ պատճառ: Վասն զի կամքի վերայ եղած բարոյական դատողութիւնը, որ իսկապէս է ներքին կենաց յառաջադիմութեան վերջին արգասիքը և որի բովանդակութիւնը մենք կոչում ենք խզմտանքի ձայն, իւրաքանչիւր կամքի հետ համեմատելով՝ ակներև է և ժխտել անկարելի է: Թէև այդ բարոյական դատողութիւնը կարող է անցաւոր ու անզօր դառնալ եթէ առաւել զօրեղ է հանդիսանում հակադիր ցանկութիւնը, որ ինքը իւր կողմից սովորական ճարտարամտութեամբ կազմել է ուրիշ կեղծարժանաւորութիւն ունեցող դատողութիւններ, սակայն նորա ներկայութիւնը չի կարող մերժուիլ կամ կասկածանքի ենթարկուիլ:

Այդպէս ահա մարդոյս տեսական ու բարոյական

իդէեաների գումարը կազմումէ այն, որ կոչումնենք խելք կամ խոհանութիւն, որ ինքն ըստ ինքեան նոյնապէս լինումէ տեսական կամ բարոյական նայելով իւր ներքին բովանդակութեան: Խոհականութիւնը մտածական կարողութիւնից զանազանումէ նորանով, որ նորա իշխանութիւնը տարածումէ ոչ թէ միայն մի կամ միքանի մտապատկերների շրջանների վերայ, այլ որ նա տիրումէ մեր բոլոր մտածութեան ու կամեցողութեան, ուրոնց և նա աշխատումէ համաձայնութեան մէջ զնել: Մտածական կարողութեան գործողութիւնը ունի այնքան զանազան տեսակներ, որքան մարդոյս գիտակցութեան մէջ կան կապակցեալ մտապատկերների ինքնագոյ շրջաններ, ուստի և երբէք սխալ չէ, եթէ խօսում են մաթեմատիքական, իրաւաբանական, վաճառականական, բնապատմական և այլն մտածական կարողութեան վերայ: Սակայն խելքը իւր համաշխարական, մարդոյս բոլոր համազմանը վերայ տարածուող գործօնութեամբ է մի անբաժանելինչ, չնայելով թէ նա տեսական մտախոհութեան է վերաբերում: Թէ բարոյական գործողութեանց:

§ 32. Բնութիւն կամ բնաւորութիւն:

Բնութեան կայանն է կամքը, սակայն ոչ թէ փոփոխական համույներն ու ցնորդները, այլ այն, ինչ որ ամբողջ կամքի մէջ նոյնատեսակ, համանման ու անփոփոխ է:

Բնութեան էութիւնն է կամքի հաստատութիւնը. նա չպիտի այսօր այսպէս կամենայ, վաղը ուրիշ կերպ, չպիտի օրօրուէ մի թոյլ եղեգնի պէս: Զուրկ է բնութիւնից առհասարակ այն անձը, որի կամքը չի մնում մի և նոյնը, որի վարմունքը մի որ և է որոշեալ դիպուա-

ծում չե կարելի նախատեսանել որի սիրող միշտ ենթարշուած է զանազան, միմեանց բոլորովին հակառակ դրութեանց որպէս թէ նու երկու կամ բազմաթիւ մարդ լինէր: Մանուկը չունի բնութիւն, վասն զի նա զուրկ է նաև այնպիսի կազմակերպուած մտապատկերների զանգուածներից, այնպիսի հետաքրքրութիւններից, ցանկութիւններից ու կամքերից, որոնք կարողանային իւրացուցանել առանձին պատահական մտապատկերները, հետաքրքրութիւնները: Մանուկը շուտով ու աննպատակ մի մտապատկերից (զբաղմունքից) անցնում է միւսին. նորա մտապատկերների զանազան շրջանները կանգնած են միմեանց մօտ բաժան բաժան կամ շատ թոյլ կապակցուած միմեանց հետ. նորա մտապատկերների ներքին կեանքը պտըտումէ փոփոխուող կենդրոնների շուրջը, որոնք ոչնչ հաստատուն յարաբերութիւն չունին միմեանց հետ: — Ոչ թէ միայն մանուկը, այլ և հասակաւորը չունի բնութիւն, չունի ոչ թէ այն պատճառաւ, որ նա չունի ամուր ձուլուած մտապատկերների զանգուածներ, այն է՝ գաղափարներ, սկզբունքներ, հիմունքներ և այլն, այլ որ նա դոցանից շատ ունի և որ դոքա մի որոշեալ կարգաւ միմեանց հետ չեն կապակցուած: Դորա հետևանքը լինումէ կամքի անհաստատութիւն, վարանք ու ծփանք, սրտի ներքին պատառուած, որ՝ եթէ կարծատեչէ, չե թոյլ տալիս, որ մարդս հաստատ գնայ մի որոշեալ ձանապարհաւ: Այստեղից ահա ծագում են այն բազմաթիւ անհաճոյ զգացմունքները, որոնք կարող են այնքան զօրանալ, որ բոլորովին անտանելի կը դառնան մարդոյս համար և որոնցից այնքան տանջւում են անհաստատ, ներքուստ պատառուած անձինք: Անհաստատ, ներքուստ պատառուած անձանց գեղեցիկ օրինակ են նեկապիրի «Համլէտը» և Գէօթէի «Ալավիդօն»:

Այս անհաստատութիւնն ու ներքին պատառուածը կարողէ ոչնչանալ ու մի կողմ քաշուիլ միայն եթէ զանազան, միմեանց հակածառող մտապատկերների զանգուածները երկուստեք հաշուուին: Եւ դա տեղի է ունենում, երբ մտապատկերների զանգուածներն ու նոյա վերայ հիմնուած սկզբունքներն ու հիմունքները միանում են ՚ի մի, որչափ կարելի է սերտ կապակցուած դասակարգութիւն, որի գլխին կանգնած է մի կամ մի քանի միմեանց չհակածառող, ներքուստ հիւսուած, ընդհանուր (անսական կամ զործական) սկզբունքներ, որոնք մարդոյս մտքերի ու կամքերի համար ունին ամենաբարձր օրէնստուդատաստան նշանակութիւն, այն է՝ կազմում են իւրացուցանող զօրութիւն: Վերջին դատաստանատանը՝ այդ ամենաբարձր սկզբունքներիցն է կախուած ահա վճիռը երբ մտածութեան մէջ ծագումէ հակածառութիւն կամ երբ կամքն ու զործը ընդհարում են միմեանց հետ: Մարդոյս փոփոխական մտքերի ու կենցաղավարութեան մէջ նոքա կազմում են միջնորդող ու հաշտեցուցանող տարրը, այն, ինչ որ մնումէ անփոփոխ, անյողդողի յարատե ու հաստատուն: Նոքա են այն կոթողը, որին բաղակուելով բեկրեկում են մտաւոր կենաց յորդառատ աշխըները:

Այդ սկզբունքները ներդաշնակութեան մէջ են զընում մարդոյս բոլոր մտածութիւնն ու կամքը, որ և կազմումէ բնութեան էական մասնը: Ուստի մէկը բնութիւն ունի, եթէ ամբողջ կամքն ու գործողութիւնը ենթարկուած է կեանքի ընթացքում հայթական անթած և խորհելով դաստած ու պարզած դորածական սկզբունքներին:

Տեսակ տեսակ բնաւորութիւններ են լինում, նայելով սկզբունքների կամ զործական հիմունքների զանա-

զանութեան, որոնցով որոշուումէ մարդոյս գործողութիւնը: Այն սկզբունքներն ու հիմունքները, որոնց ենթարկուում են մարդոյս կամքն ու գործողութիւնը, կամ համաձայն են լինում ամենաբարձր բարոյական իդէեաներին կամ ոչ: Առաջին դիպուածում բնութիւնն է բարոյական, լաւ (ոչ անձնաստէր), երկրորդ դիպուածում անբարոյական, չար (անձնաստէր): Միշտ բարոյական սկզբունքներին համեմատ գործողը կոչուումէ առաքինի իսկ միշտ անբարոյական դրդիչ պատճառներից գործողը—չարաբարոյ: Հակառակիր դրդիչ պատճառների մէջ ծփողին կարելի է կոչել թուլաբարոյ:

Թէև բնութեան հաստատութիւնը կախուած է այն գորութիւնից, որով մենք կամենում և իրագործում ենք մեր գործական սկզբունքները, ինչպէս ելոր սոքա չլինէին իւրեանց արժանաւորութեան դիտմամբ, սակայն միայն բարոյական բնութիւնն է, որ իւր մէջ կրումէ կատարեալ հաստատութիւն և միշտ հաւատարիմ ֆնում իւր սկզբանց, վասն զինորա սկզբանց բովանդակութիւնը, որ ուղղութիւնն է տալիս կամքին, կարողացել է ընդդիմադրել ամենախիստ ու ամենաաշակենութեան: Միայն բարոյական բնութիւնն է խսկապէս բնութիւն, վասն զին միայն նա է ազատ հակածառութիւնից իւր ամենաբարձր սկզբունքներով ուրիշն և իւր իւրացուցանող մտապատկերների գանգուածներով բոլորովին պաշտպանուած անհաստատութեան, երկուութեան ու անվճռականութեան դէմ: Թէև անբարոյական բնութիւնն էլ է կարող իւր ուժեղ գործօնութեամբ, ամրութեամբ ու հաստատամութեամբ կաշառել ու յինքն գրաւել մարդոյս սիրտը, վասն զին բարոյական բնութեան նման նա էլ է կարող պատճառել ճաշական գիտական հաւատամութիւնն, որովհետեւ կամքի հաստատութիւնը, որ պահանջում է լինութիւնը:

Հանջումէ բնութիւնը, շատ հազուագիւտ է լինում (Աղեքսանդր մեծը, Ցէզարը, Նապոլէոնը). սակայն այդ հաստատութիւնն ու ամրութիւնը կեղծ է ու արուեստական, վասն զինա զուրկ է հանգիստ խղճմուանքից, որ երկիւղ չընի ոչինչ ձևափոխութիւնից ու աչինչ յեղափոխութիւնից: Անբարոյական բնութիւնը հակածառումէ բարձրագոյն բարոյական իդէեաներին, որոնց զարգայումն ու կատարելագործութիւնը նա թէև կարողէ յամեցնել բայց երբէք չի կարող բոլորովին արգելք լինել նոցայերեան գալուն: Եւ որովհետեւ անբարոյական բնութեան մի միայնակ պաշտօնն է եսութիւնը, ուստի և նա թէև յետ է մղում բարոյական իդէեաները, բայց չի ոչնչացնում: Խղճմտանքի ձայնը թէև կարելի է լուցնել բայց ոչ յաւիտեան, նա յուզւումէ և սպասումէ միայն միյաջող դիպուածի, որպէս զինորից յերեան գայ և առաւել պարզ ու բարձրաձայն խօսէ, նա այն ժամանակը տիրումէ անբարձրագոյն գիտակցութեան և յառաջ կոչում նորա մէջ զղջումն (Նիլէրի աւազակ Մօրը):

Բարոյական բնութիւնը ինքն ըստ ինքեան հետեւանք է ամենագիւռար ու մեծ ձգունք պահանջող գործի: Նա ենթալրումէ, որ կայ կատարեալ անձնիլսանութիւն մեր վերե բացատրած մտքով, որ կամքը կատարելաթիւն է խոհականութեան: Ուրեմն և խսկապէս հպատակ է խոհականութեան: Ուրեմն և խսկապէս բարոյական բնութիւնն է այն համաձայնութիւնը, որ տիրումէ կամքի (գործի) և բարոյական իդէեաների մէջ, այն միաբանութիւնը, որ տիրումէ գիտութեան ու կամքի մէջ—գործական գիտմամբ, և փորձի ու մտածութեան մէջ—տեսական գիտմամբ: Բարոյական բնութիւնն է այն իշխանութիւնը, որ ձեռն է բերում խոհականութիւնը կամքի (հակումների, սովորութիւնների, կանխակալ կարծիքների և այլն) վերայ, այսինքն՝ նա է թէ անձնիշխա-

նութիւն և թէ՛ անձն ական ազատութիւն միանգամայն, վասն զինորան յատուկ է որպէս խոհականութիւնը, այնպէս և կամքը: Ճաշակագիտական հայեցակետից նայելով, բարոյական բնութիւնը, իրեւ կամքի ու խոհականութեան կատարեալ միաբանութիւն, յառաջ է կոչում անպայման հաւանութիւն, իսկ ինչ որ անպայման հաւանութիւն, նա գեղեցիկ է. ուրեմն նա է ճշշմարիտ գեղեցիկ սիրտը: Այդ պատճառաւ նա է նաև մի իդէալ որին մարդս իւր երկրաւոր կեանքում կարող է միայն մօտենալ բայց հասնել երբէք:

Պահ. 1. Բարոյական մեծ բնութիւնը ունենում է և անցողող կամք. ոչ մի ոյժ չի կարող նորան իւր իրեւ ուղեղ ու բարոյական ծանաչածից յետ կանգնեցնել, ոչինչ սպառնմունք ու վտանգ չի կարող նորան ստիպել անհաւատարիմ լինել ինքն իւրեան: Որչափ որ առաւել են նորան ստիպում իւրեան համոզմանց դէմ մի որ և է բան գործել, այնքան էլ նա ամսուր ու խաղաղ է մնում ինքն իւր մէջ: Նա չդիտէ ոչինչ երկիւղ որ կարող լինի նորան թուլասրութիւն ու լքումներշնչել, նա առաւել սիրով կը տայ իւր կեանքը, քան իւր սկըզբունքները: — Ուստի և կրքոտը երբէք չի կարող բնութիւն դառնալ, վասն զի նա անընդունակ է խելացի (բարոյական) մտախոհութեան. նա թէև փորձ է փորձում խոհականութիւնն ու ցանկութիւնը՝ ի համաձայնութիւն բնիւլու սովետական կերպով՝ սակայն այդ նորան չի յաջողում: նա խուլ է կորովամիտ բանը լսելու, բայց ոչ կոյր հանձարեղը տեսնելու, այսինքն՝ նա խելացի կերպով ու մեծ նախազգուշութեամբ ընտրումէ այն ամենապատշաճ միջոցները, որոնք կարող են իրադորձել նորա յանցաւոր նպատակները: Կիրքն է այդ պատճառաւ միայն մի բնաւորութիւն, այն է՝ բնութեան մի

յատկութիւն, և ոչ բնութիւն, վասն զի նա մի ակողմանի հետևումէ միայն խոհականութեան: Կրքոտը մի չար սատանայի գերի է, նա խաղաղ կերպով չի կարողանում տիրել իւր եսին ու սկզբունքներին, նա չի հետեւում խոհականութեան ու խղձնունքի ներքին անսպաւ ձայնին, նա ընդհակառակն մերժում է նորան և բռնաբարում: Ուր որ տիրումէ կիրքը, այնտեղ անձնիշ խանութիւնը (մեր վերև գործ դրած նշանակութեամբ) է միայն արտաքին ու կեղծ անձնիշանութիւն, նորամուաւոր կենաց միութիւնը է մի պատրուակեալ երկուութիւն, որ ինքն լուրեան մատնումէ գուրս թափելով իրեւ մի հրաբուխ լեռն՝ նորանոր ցանկութիւններ և այդպէս ալեկոծում սիրտը:

2. Կան անձինք, որոնք բնութեան առանձին ընդունակութիւն ունին: Բնութեան ձեւնառու է մարմնոյ գործարանների որոշեալ խաղաղ յատկութիւնը, մինչդեռ գործարանների է լինում չափազանց մեծ շարժականութիւնը արգելք է լինուած արանների կենդանի արձագանգը: Այս թիւնը ու գործարանների կենդանի արձագանգը: Այս վերջիններս պատճառ են լինում, որ մարդու գրաւումը է մինչդեռ շարժողութեանց նուազամեն մի առարկայով, մինչդեռ շարժողութեանց նուազամեն գործարանների խաղաղութիւնը մեծ կենդանութիւնը, գործարանների խաղաղութիւնը մեծ օգնութիւն են տալիս մտապատկերների վերարտադրութեան: — Արիւնաշատներն (ուրախ) ու մաղձայոցները թեան: — Արիւնաշատներն (ուրախ) այդ պատճառաւ քիչ բնութիւն են ցոյց (ցասկոսները) այդ պատճառաւ քիչ բնութիւն են ցոյց (ցասկոսները) այդ պատճառաւ տալիս, քան թէ սկամազճոտներն (տխուր) ու մաղաւտալիս, քան թէ սկամազճոտներն (տխուր) ու մաղաւտալիս (հեզ, հանդարտ): Կանանց սեռը իւր գործասուները (հեզ, հանդարտ): Կանանց սեռը իւր գործասուները կենդանութեան պատճառաւ նոյնպէս քիչ ընդունակ է բնութեան: Հարուստ բանասանեղձները քիչ գունակ է բնութեան: Հարուստ բանասանեղձները քիչ գունակ է բնութեան են ցոյց տալիս: — Բնութեան ընդունակութեանց բնութիւն են ցոյց տալիս: — Բնութեան ընդունակութեանց բնութիւն է գասել նաև մարմնաւոր քաջառողջութեանն ու ուժգնութիւնը, որոնք մարդոյս մէջ արթագութիւնն ու ուժգնութիւնը, որոնք մարդոյս մէջ արթագութիւնն ու ուժգնութիւնը,

Նացնում են սեպհական արժանաւորութեան զգացմունք ու քաջարութիւն. քաջառողջ մարմնոյ մէջ կամքը գտնումէ բոլորովին մի ուրիշ արձագանգ, քանի թէ մի թոյլ ու հիւանդու մարմնոյ մէջ: Բայց և ուրիշ հանգամնքներ, օր. կրթութիւնը, օրինակը հասարակութիւնն ու մարդոյս բախտը նոյնպէս ունին մեծ ազգեցութիւն բնութեան կազմութեան վերայ: Այսպէս ահա աղքատութիւնը, նա մանաւանդ երիտասարդութեան հասակում, ունի վնասակար ներգործութիւն բնութեան կազմութեան վերայ: Ուստի և այնօրինակ դպրոցները, որոնց մէջ ազգատութիւնը իւրեան սպաշտպանութիւն է գտնում, երբէք չեն ունեցել օգտակար ազգեցութիւն բնութեան կազմութեան վերայ, ինչպէս որ այդ վաղուց արդէն ապացուցուած է այն դպրոցների պատմութեան մէջ, ուր աբքունի հաշուով պահւում և ուսուցանում են երիտասարդները: Չէ որ մարդոյս բնութեան յատուկ է առ ոչինչ համարել այն, ինչ որ ձեռն է բերւում առանց մի որ և է ճգանց, աշխատութեան ու զոհաբերութեան: Դորա վերայ յաւելանում է նաև այդօրինակ դպրոցների յարատե, չափազանց տաղտկացուցիչ վերահայեցողութիւնը, որից և ծագում է կեղծութիւն, խարդախութիւն, խորամանգութիւն, նենգութիւն, կեղծ հեազանդութիւն և ոչ ինքնազոյ կամք: Երբ ՚ի վերջ այդօրինակ սաները դուրս են դալիս դպրոցից, այն ժամանակը յաձախ բոլորովին ոչնչանում են, վասն զի այլ ևս ոչ ոք նոցա վերայ իշխանութիւն չունի, իսկ նոքա չեն ուսել ինքնավարութիւն:—

§ 3. **Մարդոյսընական ընդունակութիւնները,**
այն է՝ ընական յատկութիւնները, տեմպերա-
մենտը, սեռն ու հասակը:

Ծնական յատկութիւն ասելով մենք հասկանում

ենք մարմնոյ սովորական դրութիւնը, աչքի առաջ ունեալով թէ սա ինչ ազգեցութիւն ունի հոգւոյ վերայ: Բնական յատկութիւնը կախուած է մարմնոյ կազմուածքից, որ կարող է լինել ուժեղ, թոյլ, գիւրագրգիռ, ծոյլ ջղուտ ևայլն, նորա գործարանների առողջրւթիւնից կամ վատառողջութիւնից, արեան յատկութիւնից, այն, մինչեւ անդամ ոսկորների ու մկանունների կազմուածքից, ՚ի վերջոյ այն ազգեցութիւնից, որ գործումէ մարդոյս վերայ հայրենիքի դրութիւնն ու կիման, ծագումը, սեռն ու հասակը: Ուստի և ոչ թէ միայն մարդիկ են ունենում իւրեանց յատուկ բնական յատկութիւնները, այլ գոքայատուկ են նաև ամբողջ ընտանիքների, տոհմերի, աղգերի, մարդկային ցեղերի (races), գնանազան հասակների ու սեռի: Այսպէս ահա հարաւային ազգերն ունին ընդհանրապէս կրակոտ բնութիւն, իսկ հիւսիսայինները —ցուրտ: Սակայն սխալ կը լինէր, եթէ մէկը կարծէր, թէ իւրաքանչեւր անհատի յատկութիւնը ՚ի բնէ արդէն ուրոշուած է ու օահմանուած, ինչպէս այդ անկասկած յառաջ է զալիս կենդանեաց մէջ. ընդհակառակն, որ մարդոյս հոգեւոր ոյժը առաւելէ քան մարմնաւորը, դա մեզ պարզ ցոյց է տալիս այն իրողութիւնը, որ հոգւով բարձրացած մարդը կարողանումէ զարգանալ հակառակ իւր մարմնոյ յատկութեան, օր. նա իւրեւ ծեր դեռ ևս առողջ է երիտասարդի պէս և ձեռնամծւս է լինում մեծամեծ գործերի ու գլուխ հանում:

§ ե մպերամենոն է զգացմանց ու ոգոյ յոյզերի բնական ընդունակութիւնը: Զգացմանց վերաբերումն արիւնաշատ ու սեամաղձոտ (զուարթ ու ախտը) տեմպերամենները, իսկ ոգւոյ յոյզերին —մաղասոտ ու մաղձայցը (գժուարագրգիռ ու դիւրագիռ) տեմպերամենները: Դոցա պատճառը կարել է

որոնել միայն մարմնոյ և այն ներգործութեան մէջ, որ նա ունի հոգու զերայ: Խնչ որ վերաբերումէ արիւնաշատ ու սեամաղձոտ տեմպերամենաներին, հարկաւոր է ասել որ նոքա ոչ այլ ինչ չեն, եթէ ոչ ընդհանուր զգացմանց զանազան ել և էջը, որ կամ հաճելի է լինում կամ անհաճոյ: Սակայն յաճախ պատահումէ, որ մարմնոյ յատակութիւնը, ուրեմն և ներգործութիւնը ենթարկում են նշանաւոր փոփոխութեանց. այդ դիպուածում մարդս փոխառ փոխ տրամադրուած է լինում առաւել դէպի ուրախութիւն կամ առաւել դէպի ախրութիւն, այնպէս որ արիւնաշատը մի քանի ժամանակ կարողէ լինիլ տիսուր սեամաղձոտը—ուրախ: Այս, այս վերջինս կարողէ լինել չափազանց ուրախ, վասն զի հաճելի զգացմունքը այնքան առաւել զօրեղէ լինում և բերումէ իւր հետ այնքան առաւել մեծ ազատութեան դիտակցութիւն, որչափ որ առհասարակ մեծ էր նորա դէմ եղած ընդդիմադրութիւնը:

Ոգույ յոյզերի աստիճանը կախուած է նորանից, թէ ինչ աստիճանաւ են յերեան գալիս մարմնոյ մէջ համասպատասիանող դրութիւնները. եթէ մարմնը այդ կողմից չափազանց հլու է ու հպատակ, այն ժամանակը դորայիտաքարձ ազգեցութիւնը մեծ է լինում և սրտի հաւասարակշռութեան խանդարումը երկարատեւ:

Յաճախ նկարագրել են տեմպերամենաները, սակայն այդ բոլոր նկարագրութիւնները աչքի առաջ են ունեցել նոցա ամենաբարձր աստիճանները. ուստի և ծայրահեղութեան հասել:

Արիւնաշատների առթիւ ասումնեն. նոքա անհոգ են լինում, բարեյս, ուրախ, բոլորեցունց ընկեր, բարեսիրա, խոստանումնեն շատ և կատարում քիւս առանց երկար մտածելու ամենայն ինչի ծանրակշռ նշանակութեանը:

թիւն են տալիս, նոքա միշտ զբաղուած են լինում, բայց շուտով դադրում են մի որոշեալ գործով պարապելիս, շուտով զղջում են, բայց շուտով էլ մուանում իւրեանց զղջմունքը, ուստի և գժուար է նոցա մի բանից յետ կանգնացնել նոքա լինում են մոռացկոտ ու թեթեամիտ եալին:

Աւամաղձոտը ընդհակառակն լի է լինում հոգսերով, ամենի վերայ ծանրակշռ աչքով է նայում, ինչոր իւրեան է վերաբերում. իւր ուշադրութիւնը ուղղումէ գժուար բաների վերայ, լինումէ կասկածոտ, ուստի և ոչ դիւրամատոյց ուրախ զգացմանց:

Մաղայոյն երը լինումնեն ցասկոտ, բորբոքւում են իրեւ յարդ, բայց շուտով մեղմանում են ու զիջանում: բարկանում են առանց առելու. նոցա գործողութիւնները կատարուում են արագ, բայց չեն յարատե. նոքա առաւել սիրով հովում են, քան թէ ինքեանք են մի նոր բան սկսում. պատուասիրութիւնը նոցա տիրապետող կիրքն է, ուստի և նոքա սիրում են վառք, շքեղութիւն, պաշտպան են հանդիսանում և սիրով ընդունում սուտակասպասներին ու քծնողներին:

Մաղասուտը ընդհակառակն հակումն ունի դէպի անդորձօնութիւնը և զօրեղ զրդիչ պատճառն անզամ չեկարողանաւմ նորան շարժել դէպի մի գործ. նորա ձրգտումներն են առաւել ուտելին ու քնելը:

Արական ու իգական սեռին յատուկ առանձնայառ կութիւնները կախուած են նոցա ամբողջ մարմնոյ կազմուածքից: Կեանքի բոլոր յարաբերութեանց մէջ յերեան է գալիս արական և իգական սեռի զանազանութիւնը. առողջ, թէ մարմնաւոր և թէ հոգեր կեանքը ուրիշ է կնոջ մօտ, քան թէ մարդոյ. այս զանազանութիւնը մեծապէս նկատելի է նաև հիւանդութեանց ժամանակ: Կը

նոց մարմինը առաւել շուտովէ զարդանում, քան մարդ գինը, նա առաւել քնքոյշէ ու թոյլ: Այդ պատճառ ուր և նորա աշխարհ մանելու, ուստի և նորա հոգեոր կրթութեան ժամանակամիջոցը առաւել կարձ է. այդ կրթութեան մի մեծ մասը բացի դորանից գործադրուում է նորա ապագայ ընտանեկան կոչման վերայ: Նորա զգացմունքները որոշուած են արդէն նորա մարմնոյ կազմուածքով, վասն զի նա չէ տրամադրուած ոչ մրրկածուփ զգացմանց, ոչ էլ անդգայութեան: Եթէ դորա հետ միացնենք և նորա կրթութեան կարձ ժամանակամիջոցը, այն ժամանակը կինը գլխաւորապէս կը մնայ ենթարկուած իւր զգացմանց և ցոյց կը տայ միւնոյն ժամանակը սուր աչք այն յարաբերութեանց համար, որոնք դժուում են իւր շըրջանում: Մարդը ընդհակառակն շարժւումէ առաւել լայնատարած յարաբերութեանց մէջ, յանձախ աչքից կորցնումէ այն, ինչ որ նորանից ամենամերձն է, քիչ հասողութիւն ունի վայելութեան ու պատշաճութեան համար և իւր մէջ շարժուած զգացմունքները կարծումէ զանազան հայեացքներով: Նա նշանակուած է բնութեան համար, իսկ կինը սրտի համար: Երկոքեան կազմում են մի ամբողջութիւն:

Հասակի վերաբերութեամբ ամենից առաջ աչքի են ընկնում երկու գլխաւոր ժամանակամիջոց, այն է՝ մտաւոր անշափահասութիւն և մտաւոր չափահասութիւն: Առաջինն է գլխաւորապէս ժողովելու և ժողովածը բազմապատկելու ժամանակը, երկրորդն է գլխաւորապէս ծախսելու ու գործադրելու ժամանակը: Թէե անշափահասութիւնը կարելի էր ընդունել իբրև կերպարանափոխութիւն, իսկ չափահասութիւնը իբրև վախճան ու կատարած կերպարանափոխութիւն, այսուամենայնիւ կերպարանափոխութիւնը միշտ այնքան մեծ չի լինում, որ

չափ որ մեզէ երեսում:

Մանուկը անձնատուր է լինում նորան, ինչ որ գտնումէ իւր աչքի առաջ. նա սիրումէ քաղցրելին, հետաքրքիր է, սիրումէ խաղ, եթէ դա զրուցատրութիւն ու շարժողութիւն է պատճառում: նա ընդունումէ այն, ինչ որ բարձր ձայն է հանում: Առհասարակ նա ընդունողէ, առաւել շատ է լսում ու տեսնում, քան թէ կարելի է կարծել:

Երիտասարդ գութեան հասակում գործում է երեակայութիւնը, այդ ժամանակը իդէալների ժամանակ է. երիտասարդը ամենայն ինչ ըմբռնումէ զուտ ու բարձր մորով և ուրախութեամբ. ամեն ինչի վերացնումէ այնպէս պիտի լինէր: Ուստի և նա հարկաւորութիւն է զգում մտաւոր հաղորդակցութեան, զգայակցութեան, ընկերների և վերջումը նաև սիրոյ: Նա ցանկանումէ իւր անձնատրութիւնը հանդել մինչև պատկերացրած (կամ երազած) բարձրութեան, ուստի և նա փառասէր է:

Այրական հասակը ձգնումէ իւր (պատկերացրած) իդէալի բարձրութիւնից ցած իջնել և հասնել խոհականութեան: Նա յառաջէ քաշում իրականութիւնը, հանդամանկների վերայ նայումէ այնպէս, ինչ պէս են իսկապէս և աշխատումէ նոցանից առնել այն, ինչ որ կարողէ գուրս գալ: Եւ որովհետեւ պյոսեղ առաւել որոշ կերպովէ ծածանում նորա աչքի առաջ այն, ինչ որ կարելի է և որի թիւը նուազուելէ փորձով ու մըտածութեամբ (որովհետեւ նորը ըստ մեծի մասին հնացել է, սովորութիւնը առաւել զօրեղացել իսկ մարմնոյ կազմուածը առաւել հանդարտուել), ուստի և նորա գործողութիւնքը երեսում են առաւել զուգաչափ ու համեմատ միմեանց և քիչ տատանուող, քան առաջ էր: Նա

սկսումէ ամենուրեք որոնել իւր շահը, օգտակարը և նուրա մէջ յերեան են դալիս տիրապետող ցանկութիւններ: Այրը առաւել գործումէ, ուստի և նա առաւել քիչ է երազում, ցնորում, քան երիտասարդը:

Ծերունին պահպանումէ այնքան այրութիւն, որչափ թոյլ է տալիս մարմինը: Ամենայաջող դիպուածում մտածութիւնը բռնումէ ցնորների ու գործողութեանց տեղը: Ոժէ ծերերը գովումեն անցեալ ժամանակները, դա անումեն նորա, վասն զի նոցա հայեացքը այն ժամանակը դեռ ևս չէր այնքան սուր և նոցա սիրելի սովորութիւնները սկսումեն գուրս գալ գործածութիւնից: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ծերերի ցանկութիւնները մեծաւ մասսա: Ինուազւումեն, նորա ցանկանումեն հանգաւ սութիւն: Ոյսուամենայնիւ լինումեն և այնպիսի ծերունիներ, որոնք իւրեանց խոր ծերութեան մէջ անգամ կարողեն թողնել իւրեանց արմատացած յիմարութիւնները:

Վ Ե Ր Ջ:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ւ:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ւ Տ Ի Ն Ե Ր :

I. Զ Գ Ա Ս Յ Ո ւ Թ Ի ւ Ն Ք :

- | | | |
|------|------------------------------------|----|
| § 1. | Զգայարան, գրգիռ, զգայութիւն | 1 |
| § 2. | Ցեսանելիք | 3 |
| § 3. | Լսելիք | 7 |
| § 4. | Ճաշակելիք | 11 |
| § 5. | Հոտոտելիք | 12 |
| § 6. | Շօշափելիք և ընդհանուր զգայութիւնք: | 14 |

II. Մ Տ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ի Փ Ո Խ Ա Պ Ա Ր Ա Ճ յ ա ր ա բ ե ր ու թ ի ւ ն ը :

- | | | |
|-------|---|----|
| § 7. | Մ տ ա պ ա տ կ ե ր . | 17 |
| § 8. | Գ ի տ ա կ ց ո ւ թ ե ա ն մ ի ո ւ թ ի ւ ն և ա ն ձ կ ո ւ թ ի ւ ն . | 19 |
| § 9. | Կ ա մ ա ծ ի ն ո ւ ա կ ա մ ա յ մ տ ա ղ ր ո ւ թ ի ւ ն . | 21 |
| § 10. | Մ տ ա պ ա տ կ ե ր ն ե ր ի բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ ի ւ ն ը | 24 |
| § 11. | Մ տ ա պ ա տ կ ե ր ն ե ր ի կ ա պ ա ց ո ւ թ ի ւ ն ը ըստ իւրեանց բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ ե ա ն . | 25 |
| § 12. | Մ տ ա պ ա տ կ ե ր ն ե ր լ ի բ ր ե գ օ ր ո ւ թ ի ւ ն ք : | 27 |
| § 13. | Վ ե ր ա ր տ ա դ ր ո ւ թ ե ա ն գ ա ղ ա փ ա ր ն ո ւ տ ե ս ա կ ն ե ր ը . | 30 |
| § 14. | Ա ն մ ի ջ ա կ ա ն վ ե ր ա ր տ ա դ ր ո ւ թ ի ւ ն . | 32 |
| § 15. | Մ ի ջ ն ո ր դ ա կ ա ն վ ե ր ա ր տ ա դ ր ո ւ թ ի ւ ն . | 33 |
| § 16. | Մ ի ջ ն ո ր դ ա կ ա ն վ ե ր ա ր տ ա դ ր ո ւ թ ե ա ն օ ր է ն ք ն ե ր ը . | 34 |
| § 17. | Ն մ ա ն ո ւ թ ե ա ն օ ր է ն ք ը . | 35 |
| § 18. | Հ ա կ ա դ ր ո ւ թ ե ա ն օ ր է ն ք ը . | 36 |
| § 19. | Ժ ա մ ա ն ա կ ա կ ց ո ւ թ ե ա ն օ ր է ն ք ը . | 37 |
| § 20. | Յ ա ջ ո ր դ ո ւ թ ե ա ն կ ա մ շ ա ր ա յ ա ր ո ւ թ ե ա ն օ ր է ն ք ը . | 40 |
| § 21. | Շ ա ր ու ն ա կ ո ւ թ ի ւ ն . | 42 |
| § 22. | Վ ե ր ջ . | |

§ 23.	Մտապատկերների շարքերի գանազան կապակցութիւնը ու նորա նշանակութիւնը	44
§ 24.	Ցիշողութիւն և մոռացութիւնը	48
§ 25.	Ցիշողութեան տեսակները	50
§ 26.	Ցիշողութեան զարգացման ընթացքը	54
§ 27.	Երևակայութիւն	58
§ 28.	Երևակայութեան նշանակութիւնը ու սմանը կրթութեան համար	60
§ 29.	Ճամանակի մտապատկերը	62
§ 30.	Տարածութեան մտապատկերը	65
§ 31.	Հիւսուածների կազմութիւնը, արտաքին իրերը բազմաթիւ նշաններով. դիտողութիւն	68

III. Խմացականութիւն կամ իմացական կարողութիւն:

§ 32.	Մտաժական կարողութիւն, խելք կամ խոհականութիւն	71
§ 33.	Գաղափարների կազմութիւնն ու տեսակները	74
§ 34.	Լեզու և գաղափար	81
§ 35.	Դատողութիւն	82
§ 36.	Եզրակցութեան ծաղութն ու տեսակները	85
§ 37.	Ապակեցեպյիոն, այն է իւրայուցութն	88
§ 38.	Իմացական ու կամածին մտադրութիւն	91

ՄԱՍՆԵՐԿՐՈՐԴ:

Բ Ն Ա Ւ Ր Ո Ւ Ի Ֆ Ի Ւ Ն Կ Ա Մ Բ Ա Ր Ք:

I. Զգացմունքներ կամ սիրտ:

§ 39.	Զգացմունքների գաղափարն ու ծաղումը	101
§ 40.	Զգացմունքներ ու մտապատկերներ	105

§ 41.	Զգացմունքների բաժանմունքը	107
§ 42.	Ակնկալութիւն	108
§ 43.	Ուրախակցութիւն ու ցաւակցութիւն, զգացմունքներն ու իւրացուցութն	112

II. Ցանկութիւններ և բարոյական ազատութիւն:

§ 44.	Ցանկութեանց գաղափարը	116
§ 45.	Ցանկութեանց բաժանումը	120
§ 46.	Թէ ինչ է կամքը և ինչպէս է նա ծագում:	123
§ 47.	Կամքի ներքին ու արտաքին ներգործութիւնը: Գործողութիւն ու կամաւոր մտադրութիւն.	127
§ 48.	Ընդհանուր կամք, սկզբունք ու գործական կամքի հիմունք	130
§ 49.	Հետաքրքրութիւն, ցանկութիւն և կամք	133
§ 50.	Մտախոհութիւն, զգօնութիւն և անձնիշխանութիւն	137
§ 51.	Հոգեբանական ազատութիւն, խոհականութիւն կամ խելք	140
§ 52.	Բնութիւն կամ բնաւորութիւն	145
§ 53.	Մարդոյս բնական ընդունակութիւնները, այն է բնական յատկութիւնները, տեմպերամենտը, սեռն ու հասակը	152

- 701 . . . յզմանմանեայ կղմացւուցաք . 14 չ
801 . . . մայնացաքիլ . 24 չ
աւածացը ուշինացքաւոյ ու մայնացքաւոյ էլ . 34 չ
811 . . . մարցուցայ ու մինչ .

Հարս մարտացզայ և զմանինարման ॥

մայնաց

- 821 . . . զարդարոք ընամեյաման 44 չ
831 . . . վառնանեայ ընամեյաման 54 չ
841 Անորս ամ է սիրոք և զբուք չ չի մ. մե չ
չըստ եւտեղազգեա միզաւու ու մեզը մ հյուստ . 74 չ
751 մայնացքաւոն դաւանք ու մայնացքաւոն
մայ մայնացքը ու զմանրու զման զմանը թի . 84 չ
861 . . . զմանինաց վե
881 քար և մայնարման մայնացքաւոն . 84 չ
աւածացքաման և մայնարման մայնացքաւոն . 94 չ
761 . . . մայն
մայնարման մայնարման մայնացքաւոն . 14 չ
871 . . . ու մայ
881 . . . մայնարման նախ մայն մայ . 26 չ
' է մայ զմանինացքաւոն մայնաց օքրուն . 66 չ
ման զմանինացքաւոն զմանինացքաւոն մայնաց
891 . . . պատահ ։

19 APR 2013

20p 909
20p n p



